ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՌԱՋՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

LEVON HOVSEPYAN
ARTSRUN HOVHANNISYAN
SERGEY MINASYAN

REGIONAL MILITARY REVIEW

Published based on the decision of the scientific council of the Institute of Oriental studies of NAS RA

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2016

Հ-87
հդ.
5626

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՐՇՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 355/359
ԳՄԴ 68.4
Հ 872

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հովսեփյան Լ., Հովհաննիսյան Ա., Մինասյան Ս.
Հ 872 Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք. – Եր.:, «Գիտություն» հրատ., 2016 – 203 էջ:

Տեղեկագրքում ներկայացվում են Հայաստանի հարակից երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի պաշտպանական համակարգերը, զինված ուժերը, ռազմատեխնիկական հնարավորությունները, անվտանգության համակարգերն ու մարմինները:

Տեղեկագիրքը նախատեսված է տարածաշրջանի ռազմաքաղաքական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, վերլուծաբանների ու քաղաքագետների համար:

ՀՏԴ 355/359
ԳՄԴ 68.4

ISBN 978-5-8080-1229-5

© Լ. Հովսեփյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 7

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 9

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը *9*

Ռազմակրթական համակարգը *36*

Ռազմարդյունաբերական համակարգը *38*

Ժանդարմերիայի և Առափնյա անվտանգության հրամանատարությունները *45*

ՆԳՆ, Անվտանգության գլխավոր տնօրինությունը *51*

Գյուղական պահապանները *55*

Ազգային հետախուզական կազմակերպությունը *56*

Ընդհանուր դիտարկումներ՝ մարտունակությունից սպառազինություն *66*

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 73

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը *73*

Ռազմակրթական համակարգը և ԶՈՒ-ի համալրումը *81*

Բանակը և ԻՀՊԿ-ը *83*

Հատուկ ծառայությունները, անվտանգության մարմինները *111*

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 119
Պաշտպանական համակարգը և զինված ուժերը 119
Սպառազինման միտումները և ծրագրերը 129
Զրահամեքենաները 141
Ադրբեջանական ՌՕՈ-ը 144
Հրթիռահրետանային միջոցները 162
Զրահատեխնիկական պոտենցիալը 171
Ընդհանուր դիտարկումներ 173

ՎՐԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 182
Պաշտպանական համակարգը և զինված ուժերը 182
Ռազմաուսումնական համակարգը 188
Հետպատերազմական վերականգնում (2009-2012թթ.) 190
Բանակաշինությունը իշխանափոխությունից հետո (2012-2014թթ.) 196
Բանակաշինության նոր միտումները (2014-2016թթ.) 199

ՆԱԽԱԲԱՆ

Տեղեկագրքում ներկայացվում են Հայաստանի հարակից երկրների՝ Թուրքիայի, Իրանի, Ադրբեջանի և Վրաստանի պաշտպանական համակարգերը, զինված ուժերը, անվտանգության մարմիններն ու ռազմական հնարավորությունները: Մանրամասն դիտարկվում են այդ երկրների պաշտպանական ոլորտի նորմատիվ-իրավական, ինստիտուցիոնալ ու կառուցվածքային բաղադրիչներն ու առանձնահատկությունները, այդ թվում՝ պաշտպանական համակարգի սահմանադրաիրավական նորմերը, զինված ուժերի կառուցվածքը, հիմնական զորատեսակներն ու սպառազինությունը, ռազմաուսումնական համակարգը, հատուկ նշանակության ուժերը, հատուկ ծառայություններն ու անվտանգության մարմինները: Վերլուծվել են հատկապես Ադրբեջանի ռազմականացման, սպառազինման միտումները, ռազմական ներուժը, Վրաստանի ռազմական ոլորտի արդի բարեփոխումներն ու այդ ուղղությամբ իրականացվող քայլերը:

Հաշվի առնելով տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակը, հակամարտություններն ու տարածաշրջանային ռազմականացման միտումները՝ տեղեկագիրքը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել տարածաշրջանում ուժերի դասավորության ու ռազմական հավասարակշռության վերաբերյալ, ինչպես նաև՝ գնահատել տարածաշրջանային երկրների ռազմական ներուժն ու հնարավորությունները:

Տեղեկագիրքը հայ իրականության մեջ տարածաշրջանի երկրների պաշտպանական համակարգերը, ռազմական հնարավորությունները ներկայացնելու առաջին ամբողջական փորձն է, որը կարող է օգտակար լինել տարածաշրջանի ռազմաքաղաքական հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, զինվորականների, քաղաքագետների և վերլուծական շրջանակների համար:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը

Թուրքիան ՆԱՏՕ-ի կազմում ԱՄՆ-ից հետո թվաքանակի մեծությամբ երկրորդ բանակն ունի: Այն ներկայում հանդիսանում է Մերձավոր Արևելքում ժամանակակից սպառազինությամբ համալրված և մեծաթիվ ուժեր ունեցող երկրներից: Թուրքիան շարունակում է կարևոր համարել դեռևս Սառը պատերազմի տարիներին անհրաժեշտ դիտված բանակի թվաքանակի մեծության հանգամանքը: Վերջին տարիներին, սակայն, քայլեր են իրականացնում բանակի թվաքանակի կրճատման և աստիճանաբար պրոֆեսիոնալ բանակի անցման, ինչպես նաև ժամանակակից սպառազինության տեսակներով համալրման ուղղությամբ: Թուրքիան հանդիսանում է տարածաշրջանում ամենառազմականացված երկրներից, որի ռազմական ծախսերը և սպառազինման ծավալները շարունակական աճ են գրանցում:

Թուրքիայի Սահմանադրության 104-րդ հոդվածի համաձայն՝ զինված ուժերի (ԶՈՒ) գերագույն գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է, ով իրավունք ունի որոշում կայացնել ԶՈՒ-ի կիրառման վերաբերյալ: Նախագահն է նշանակում ԶՈՒ-ի գլխավոր շտաբի (ԳՇ) պետին, հրավիրում և նախագահում Ազգային անվտանգության խորհրդի նիստերը: Ըստ 92-րդ հոդվածի՝ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի (ԹԱՄԺ) իրավասությանն է պատկանում պատերազմ կամ պատերազմական դրություն հայտարարելը, թուրքական

ԶՈՒ-ը այլ երկրներ ուղարկելը և այլ երկրների ԶՈՒ-ին երկրի տարածքում գտնվելու թույլտվությունը: Նույն հոդվածի համաձայն, եթե ԹԱՄԺ-ը գտնվում է արձակուրդում կամ հնարավոր չէ այդ մարմնի հրատապ որոշումը, ապա արտակարգ իրավիճակում կամ հարձակման դեպքում ԶՈՒ-ի կիրառման մասին կարող է որոշում կայացնել երկրի նախագահը: Սահմանադրության 117-րդ հոդվածով ամրագրված է, որ երկրի անվտանգության ու պաշտպանության համար ԹԱՄԺ-ի առջև պատասխանատու է կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ: ԶՈՒ ԳՇ պետը հանդիսանում է ԶՈՒ-ի հրամանատարը և պատերազմի ժամանակ երկրի նախագահի անունից իրականացնում գլխավոր հրամանատարությունը: ԳՇ պետին կառավարության առաջարկությամբ նշանակում է երկրի նախագահը, իսկ նա իր պարտականությունների ու գործողությունների համար պատասխանատու է վարչապետի առջև: ԶՈՒ ԳՇ-ը իրականացնում է պատերազմական կամ խաղաղ ժամանակաշրջանում զորքերի օպերատիվ կառավարումը և պատասխանատու է բանակի մարտական պատրաստության համար: Ազգային պաշտպանության նախարարությունն իրականացնում է զորակոչ և ԶՈՒ-ի համալրումը, բանակի թիկունքային ապահովումն ու անհրաժեշտ ռազմական տեխնիկայի ու սպառազինության ձեռքբերման, ռազմական արդյունաբերության զարգացման ու վերահսկողության գործառույթներ: ԳՇ-ի, ՊՆ-ի և զորքերի տեսակների հրամանատարությունների միջև հարաբերություններ ու լիազորությունների շրջանակը սահմանվում է հատուկ օրենքով:

Ազգային անվտանգության հարցերով բարձրագույն խորհրդակցական մարմինը Ազգային անվտանգության խորհուրդն է (ԱԱԽ, Milli Güvenlik Kurulu): Սահմանադրության 118-րդ և «Ազգային անվտանգության խորհրդի ու գլխավոր քարտուղարության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱԽ-ն նախագահում է երկրի նախագահը: Խորհրդի կազմում ընդգրկված են երկրի վարչապետը, ԶՈՒ ԳՇ պետը, փոխվարչապետերը, արդարադատության, ազգային պաշտպանության, ներքին գործերի, արտաքին գործերի նախարարները, զորքի տեսակների հրամանատարները և ժանդարմերիայի գլխավոր հրամանատարը: Օրակարգից կախված խորհրդի նիստերին կարող են մասնակցել այլ նախարարներ և պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ:

ԱԱԽ-ի պարտականություններն են.

- *պետության անվտանգության քաղաքականության շրջանակում ազգային անվտանգության քաղաքականության սահմանման, հաստատման ու իրականացման խնդիրների հետ կապված խորհրդատվական որոշումների ընդունումը,*
- *անվտանգության քաղաքականության իրականացման ոլորտում ապահովում է անհրաժեշտ համակարգումը,*
- *կառավարությանն է ներկայացնում խորհրդատվական որոշումներն ու տեսակետները,*
- *իրականացնում օրենքով վերապահված այլ գործառույթներ:*

Խորհրդի նիստերը հրավիրվում են 2 ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում նախագահի կոչով կամ վարչապետի առաջարկությամբ կարող են հրավիրվել արտահերթ նիստեր: Խորհրդում որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ:

ԶՈՒ-ի հետ կապված կարևորագույն հարցերի քննարկման բարձրագույն մարմինը «Բարձրագույն ռազմական խորհուրդն» է (ԲՌԽ, Yüksek Askeri Şurası, YAŞ), որը նախագահում է երկրի վարչապետը: Խորհրդի անդամներն են վարչապետը, ԳՇ պետը, Ազգային պաշտպանության նախարարը, զորատեսակների հրամանատարները, բանակների հրամանատարները, Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարը, նավատորմի հրամանատարը, ԶՈՒ-ի բարձրագույն սպայակազմից բանակի գեներալի զինվորական աստիճան ունեցող զինվորականները:

ԲՌԽ-ի պարտականություններն են.

- *ԶՈՒ-ի ռազմական դոկտրինի հաստատումն ու վերանայումը,*
- *բանակի ռազմական գլխավոր ծրագրի ու նպատակների վերաբերյալ կարծիքների, ԶՈՒ-ի հետ կապված օրենքների, կանոնադրությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրությունն ու կարծիքի ներկայացումը,*
- *բանակի մարտունակության հարցերի քննարկումը, կադրային, կրթական, թիկունքային և այլ հարցերի վերաբերյալ քննարկումներն ու որոշումները,*
- *զինվորականների բարձրագույն սպայական կոչումների և առաջխաղացման հարցերը:*

Խորհրդի նիստերն անց են կացվում տարին 2 անգամ:

2015թ. դեկտեմբերի դրությամբ՝ ԶՈՒ-ի անձնակազմի ընդհանուր թվաքանակը, ներառյալ ժանդարմերիայի և Առափնյա անվտանգության հրամանատարությունների անձնակազմը, կազմել է 612 հզ., որից շուրջ 561 հզ-ը՝ զուտ զինվորական անձնակազմը: Գեներալների ու ծովակալների թիվը կազմում է 358: Ընդհանուր թվաքանակից մոտ 39 հզ-ը կազմում է սպայական, 97 հզ-ը՝ ենթասպայական կազմը: Պարտադիր ժամկետային զինծառայողների ընդհանուր թվաքանակը կազմել է ավելի քան 322 հզ., որից 6.6 հզ-ը սերժանտներ, 316 հզ-ը՝ շարքայիններ: ԶՈՒ-ի զինվորական անձնակազմի շուրջ 35 %-ը կազմում են պրոֆեսիոնալ-պայմանագրային հիմունքներով զինծառայողները: ԶՈՒ-ում քաղաքացիական ծառայողների և սպասարկող քաղաքացիական անձնակազմի թիվն անցնում է 51 հզ-ը:

ԶՈՒ-ի երեք հիմնական զորքի տեսակների (ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային) ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 480 հզ.: Մշտական պահեստազորի թիվը գնահատվում է 378 հզ., որից 250 հզ-ը ցամաքային, 55 հզ-ը՝ ռազմածովային, 65 հզ-ը՝ ռազմաօդային ուժերում, 50-ը՝ ժանդարմերիայի հրամանատարությունում:

Թուրքիայում գործում է պարտադիր զինապարտության համակարգը, ըստ որի՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության են ենթակա արական սեռի 20 տարին լրացած քաղաքացիները: Հիմնական ժամկետային զինվորական ծառայության տևողությունը 12 ամիս է, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների համար նաև՝ 6 ամիս: Գործում է վճարի դիմաց պարտադիր զինծառայությունից ա-

զատվելու համակարգը: ԶՈՒ-ից զորացրվելուց հետո քաղաքացին համարվում է զինապարտ և մինչև 45 տարեկանը գտնվում է առաջնային պահեստազորում: Պատերազմական իրավիճակում կարող են բանակ զորակոչվել 16-60 տարեկան տղամարդիկ և 20-46 տարեկան կանայք, որոնք ի վիճակի են զենք կրել:

Թուրքիայի ռազմական բյուջեն 2015թ. կազմել է 22 մլրդ 760 մլն ԹԼ, ինչը 2015թ. հունվարի միջին փոխարժեքով հավասարազոր է մոտ 10 մլրդ ԱՄՆ դոլարի: Ռազմական բյուջեի մոտ 50%-ը կազմում են անձնակազմի, իսկ մնացած մասը սպառազինության, ապրանքների ու ծառայությունների ծախսերը: Սպառազինության համար Թուրքիայում, բացի ռազմական բյուջեից, ծախսվում են նաև արտաբյուջետային հիմնադրամներից ու հատկացումներից: Տարեկան սպառազինության վրա իրականացվող ծախսերը կազմում են մոտ 2-3 մլրդ դոլար, այդ թվում նաև տեղական ռազմաարդյունաբերության միջոցով ապահովվող սպառազինության վրա: ՀՆԱ-ից ռազմական ծախսերի հատկացման ցուցանիշով (շուրջ 1.7%) ՆԱՏՕ-ի կազմում Թուրքիան զբաղեցնում է 7-րդ տեղը: Համաձայն միջազգային հեղինակավոր հետազոտական կառույցների՝ ռազմական ծախսերի ցուցանիշով վերջին տարիներին Թուրքիան զբաղեցնում է 14-15-րդ հորիզոնականներն աշխարհի երկրների շարքում: Ընդհանուր առմամբ, դժվար է տալ ռազմական ծախսերի ու ռազմական բյուջեի ամբողջական հստակ պատկերը, քանի որ պաշտպանական ոլորտում իրականացվող ծախսերը, այդ թվում՝ սպառազինության ոլորտում, չեն սահմանափակվում միայն պետական բյուջեից պաշտպանության նախարարության հատկացված գումարներով: Պաշտպանության ու սպառազինության ոլորտում զգալի գումարներ են ծախսվում նաև արտաբյուջետային միջոցներից: Դրանցից են Թուրքիայի զինված ուժերի զարգացման հիմնադրամը (TSKGV) և Ռազմաարդյունաբերության աջակցության հիմնադրամը (SSDF):

Թուրքիայի ԶՈՒ-ը կազմված են 3 հիմնական զորատեսակներից՝ ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային և ժանդարմերիայի գլխավոր հրամանատարությունից ու Առափնյա անվտանգության հրամանատարությունից: Վերջին երկու հրամանատարությունները գտնվում են ներքին գործերի նախարարության ենթակայության տակ, իսկ պատերազմական իրավիճակում անցնում են ԶՈՒ ԳՇ-ի ենթակայությանը: ԶՈՒ-ի օպերատիվ կառավարումն իրականացնում է ԳՇ-ը, իսկ բանակի բյուջետային, սոցիալական, մատակարարման ու այլ հարցերը գտնվում են պաշտպանության նախարարության իրավասության ներքո:

Ցամաքային ուժերը (ՑՈՒ, Kara kuvvetleri) հանդիսանում են թվաքանակով ամենամեծն ու հիմնական զորատեսակը: ՑՈՒ-ի ընդհանուր թվաքանակը գնահատվում է մոտ 380-400 հազար: Ըստ հիմնական պաշտպանական շրջանների Թուրքիայի տարածքը բաժանված է 4 պաշտպանական զոտիների, որոնք գտնվում են համապատասխանաբար 4 բանակների իրավասության տակ:

ՑՈՒ-ը բաղկացած են՝

4 հիմնական բանակներից, որոնք էլ իրենց հերթին կազմված են 9 կորպուսներից: ՑՈՒ-ի կազմում կա 1 զրահատանկային, 1 մոտոհրաձգային-հետևակային, 2 մեխանի-

զացված դիվիզիա, 7 զրահատանկային բրիգադ, 14 մեխանիզացված հետևակային, 11 մոտոհրաձգային հետևակային, ինչպես նաև 2 հրետանային, 1 ուսումնական-հրետանային բրիգադ, 6 հրետանային գունդ: ՅՈՒ-ի ավիացոն աջակցությունն ապահովվում է 4 ավիացիոն գնդերի և 4 ավիացիոն գումարտակների միջոցով: Հատուկ նշանակության ուժերը կազմված են 5 կոմանդոս բրիգադներից և 1 կոմանդոս գնդից: ՅՈՒ-ի կազմի մեջ են մտնում նաև դոկտրինալ ծրագրերի ու կրթության, թիկունքի և բանակային ավիացիայի հրամանատարությունները:



ՅՈՒ-ի 1-ին բանակի հրամանատարության շտաբը գտնվում է Ստամբուլում և պատասխանատու է երկրի հյուսիս-արևմտյան շրջանների, հատկապես Բոսֆորի և Դարդանելի

նեղուցների, Ստամբուլի պաշտպանության համար: Այն կազմված է 3 կորպուսներից, որոնք իրենց մեջ ներառում են՝

1 մոտոհրաձգային-հետևակային դիվիզիա
1 զրահատանկային-մարտավարական դիվիզիա
7 մեխանիզացված-հետևակային բրիգադ
4 զրահատանկային բրիգադ,
3 մոտոհրաձգային-հետևակային գունդ
2 հրետանային գունդ
2 ականազերծող գունդ
1 կոմանդոս գնդեր:

2-րդ բանակի հրամանատարության շտաբը գտնվում է Մալաթիայում, որը պատասխանատու է հարավարևելյան շրջանների ու Սիրիայի, Իրաքի և Իրանի հետ սահմանների պաշտպանության համար: Այն կազմված է 3 կորպուսներից, որոնք ներառում են՝

1 մարտավարական-հետևակային դիվիզիա
2 մեխանիզացված-հետևակային բրիգադ
3 զրահատանկային բրիգադ
3 կոմանդոս բրիգադ և 1 գումարտակ
1 մեխանիզացված բրիգադ
1 սահմանապահ բրիգադ
1 հրետանային բրիգադ և 1 գունդ:
2-րդ բանակի 4-րդ կորպուսի կազմի մեջ է մտնում Նախագահական պաշտպանության հատուկ գունդը:

2-րդ բանակը լուրջ կարևորություն ունի ՅՈՒ-ի կառուցվածքում, քանի որ դրա զորամիավորումներն են իրակա-

նացնում ռազմական գործողություններ քրդական զինյալների դեմ, կատարում անդրսահմանային գործողություններ Հյուսիսային Իրաքի տարածքում: Հատկապես մեծ դերակատարություն ունեն կոմանդոս հատուկ նշանակության բրիգադները, որոնց անձնակազմի թվաքանակը բավական մեծ է 2-րդ բանակում:

3-րդ բանակի հրամանատարության շտաբը գտնվում է Էրզինջանում (Երզնկա): Այդ բանակի պաշտպանական պատասխանատվության շրջանը ներառում է Թուրքիայի արևելյան ու հյուսիս-արևելյան տարածքների, այդ թվում՝ նաև Հայաստանի հետ սահմանի պաշտպանությունը: Այն կազմված է 2 հիմնական՝ 8-րդ և 9-րդ կորպուսներից: Դրանցում ներառված են՝

Դողու Բայազետի 1-ին մեխանիզացված-հետևակային բրիգադը
Արդահանի 25-րդ մեխանիզացված-հետևակային բրիգադը
Աղրբի 12-րդ մեխանիզացված հետևակային բրիգադը
Կարսի 14-րդ մեխանիզացված բրիգադը
Քաղրզմանի 7-րդ մեխանիզացված բրիգադը
Սարիղամիշի 9-րդ մոտոհրաձգային բրիգադը
Աշքալեի 4-րդ զրահատանկային բրիգադը
Թաթվանի 6-րդ զրահատանկային բրիգադը
Սեբաստիայի 5-րդ հետևակային բրիգադը
Տրապիզոնի, Թունջելիի, Բինգյոլի և Հոզաթի ներքին անվտանգության ու հատուկ նշանակության բրիգադները:

Հարկ է նշել, որ ՅՈՒ-ի 3-րդ բանակի 8-րդ կորպուսի, որի պաշտպանական իրավասության տակ գտնվող շրջաններից մեկն ուղղակի սահմանակից է Նախիջևանին, տարածքներում տեղակայված են 2 մեխանիզացված բրիգադներ (Դողու Բայազետ և Աղրը):

Էգեյան բանակը, որը հանդիսանում է 4-րդ բանակը ՅՈՒ-ի կազմում, իրականացնում է երկրի արևմտյան և հարավ-արևմտյան տարածքների ու սահմանների պաշտպանությունը: Հրամանատարության շտաբը գտնվում է Իզմիրում: Այն որպես առանձին բանակ ստեղծվել է 1975թ.՝ Կիպրական ճգնաժամի տարիներին: Էգեյան բանակի կազմում կա՝

1 հետևակային բրիգադ
1 հետևակային-ուսումնական բրիգադ
1 մեխանիզացված-հետևակային բրիգադ
1 հրետանային բրիգադ
1 հատուկ նշանակության գունդ:

Կորպուսի կարգավիճակով Էգեյան բանակի կազմի մեջ են մտնում նաև Հյուսիսային Կիպրոսում տեղակայված թուրքական ուժերը:

«Հյուսիսային Կիպրոսի թյուրքական հանրապետությունում» տեղակայված թուրքական ուժերի անձնակազմի թիվը հասնում է մոտ 45-50 հզ-ի: Բանակային կորպուսի կարգավիճակ ունեցող ուժերը կազմված են՝

2 մեխանիզացված հետևակային դիվիզիաներից
1 զրահատանկային բրիգադից,
1 ավիացիոն հրամանատարությունից,

հատուկ նշանակության, կոմանդոս 2 զնդերից, հրետանային զնդից և այլ մասնագիտացված ստորաբաժանումներից:

Կիպրոսի թուրքական ուժերն ունեն խաղաղապահ կարգավիճակ, որի օպերատիվ կառավարումն իրականացնում է Թուրքիայի ԶՈՒ-ի ԳՇ-ը: Բացի կղզում տեղակայված թուրքական ուժերից, կա նաև մոտ 5 հզ. անձնակազմ ունեցող դիվիզիայի կարգավիճակով *«Անվտանգության ուժերի հրամանատարությունը»*, որը համարվում է ինքնահռչակ հանրապետության պաշտպանական զորամիավորումը: Ըստ որոշ տեղեկությունների՝ այն գտնվում է Թուրքիայի Էգեյան բանակի հրամանատարության ներքո:

Պրակտիկայում կիրառվում է նաև այն կարգը, որ ՅՈՒ-ի առանձին զորամասերի տրվում են ժանդարմերիայի լիազորություններ: 2015թ. հոկտեմբերին, երկրում քրդական զինյալ պայքարի ակտիվացման շրջանում, ՅՈՒ-ի՝ Դիարբեքիրում տեղակայված 7-րդ և Էլազիգում գտնվող 8-րդ կորպուսներին տրվեցին ժանդարմական գործառույթներ ու լիազորություններ:

Թուրքական բանակը հիմնականում զինված է արևմտյան, մասնավորապես՝ ամերիկյան և գերմանական զենք-զինամթերքով ու սպառազինությամբ, կան սահմանափակ քանակությամբ այլ պետությունների արտադրության զենքեր, նույնիսկ խորհրդային և ռուսական:

ՅՈՒ-ի հիմնական հրաձգային զենքերը դասվում են աշխարհի լավագույն արտադրողների ցանկին: Թուրքական բանակում կան ինչպես գերմանական հայտնի G3 և HK33,

այնպես էլ ամերիկյան M16, M4A1 և խորհրդային AK-47 ինքնաձիգներ: Գրեթե նույն պատկերն է դիպուկահար հրացանների պարագայում՝ СВД, T-12, JNG-90, Phonix Robar 12.7, որտեղ կան նաև սեփական արտադրության նմուշներ: Գնդացիրների (MG-3, HK-21, FN Minimi, ПК, ПКС) և մեծ զնդացիրների դեպքում ևս իրավիճը հայելային է՝ Browning, КПВТ և այլն:

ՅՈՒ-ի սպառազինության մեջ կա մոտ 3500 միավոր տարատեսակ, հին ու նոր հրասայլ.

մոտ 350 միավոր գերմանական Leopard 2A4 մոդելի համամետատաբար նոր հրասայլեր, որոնք թուրքական բանակում կարելի է համարել լավագույները: Պլանավորված է թուրքական ASELSAN ընկերության կողմից կատարելագործել մինչև A6 մակարդակ

մոտ 70 միավոր Leopard 1A3/TU հրասայլեր, որոնք դեռ կատարելագործվում են

150 միավոր Leopard 1A4/T1 հրասայլեր, որոնք կատարելագործվում են

165 միավոր Leopard 1A1A1/T հրասայլեր, որոնք կատարելագործվում են

մոտ 650 միավոր ամերիկյան M60A3 TTS կատարելագործված հրասայլ

ավելի քան 270 միավոր հին M60A1 տարբերակ

մոտ 100 միավոր M60A1 RISE (Passive) կատարելագործված հրասայլ

170 միավոր M60-T Sabra, իսրայելական կատարալագործում անցած հրասայլ

ավելի քան 1200 միավոր ամերիկյան հին M-48 հրասայլեր, որոնց հիմնական մասը հանված է մարտական ստորաբաժանումներից:

Հրասայլերը հիմանականում կուտակված են 2 մեխանիզացված՝ 28-րդ և 39-րդ դիվիզիաներում: Դրանք մեծ մասամբ հնացած են և մի մասն է համապատասխանում ժամանակակից պահանջներին: Թուրքական բանակը արդեն վաղուց իրականացնում է իր սեփական հրասայլի նախագիծը, որը հաջողությամբ է ընթանում և մոտենում է ավարտին՝ մտնելով բանակի սպառազինության մեջ: «Altay» անունը ստացած նախագիծն իրականացվում է տեղական OTOKAR ընկերության և հարավկորեական Hyundai-Rotem ընկերության հետ համատեղ: Թուրքական արտադրության այս մեքենան իրականում իրենից ներկայացնում է ամերիկյան նորագույն հրասայլերի հարավկորեական տեղայնացումների փոխակերպումը: 2012 թ. դրությամբ մեքենան արդեն անցնում էր պետական փորձարկումները:

ՅՈՒ-ում և ժանդարմերիայում միասին վերցրած կա ավելի քան 4600 միավոր թրթուրավոր և անվավոր զրահամեքենա.

մոտ 560 միավոր ACV-300, որը ըստ էության ամերիկյան հայտնի M113-ի ձևափոխված տարբերակներից է
մոտ 110 միավոր FNSS Akıncı ՀՄՄ, որը ևս ամերիկյան մեքենաների փոխակերպումներից է, ավելի ժամանակակից M2 Bradley-ի ՀՄՄ-ի աշտարակով ու սպառազինությամբ

շուրջ 1050 միավոր ACV-300APC, որը ևս առաջին մոդելի ավելի պարզ ու թեթև սպառազինությամբ տարբերակն է
մոտ 1800 միավոր ամերիկյան ԶՓ M113A/A1/A2/T2/T3
մոտ 500 միավոր FNSS Pars 6x6 և 8x8 ԶՓ անվային բազաներով
100 միավոր Otokar Cobra 4x4 անվային բազայով սեփական արտադրության ԶՓ, որոնք կիրառվել էին ռուս-վրացական պատերազմի ժամանակ
260 միավոր Akrep 4x4 սեփական արտադրության ԶՓ
100 միավոր Yavuz 8x8 սեփական արտադրության ԶՓ
320 միավոր խորհրդային БТР-60ПБ, որոնք ձեռք են բերվել Գերմանիայից և կիրառվում են ժանդարմերիայում ինչպես նաև եան 230 միավոր БТР-80 մեքենաներ:

ՅՈՒ-ի հրետանային միջոցների ընդհանուր քանակը անցնում է 6000 միավորը: Դրանց գերակշիռ մասը քարշարկվող է՝ 105 և 155 մմ-ոց հրանոթներ ու հաուբիցներ, 81, 107 և 120 մմ-անոց ականանետեր, համազարկային կրակի ռեակտիվ համալիրներ և այլն: Ինքնագնացները ավելի քիչ են, չնայած տեղական արտադրության միջոցով դրանց թվաքանակն ավելանում է:

ՅՈՒ-ում կա՝

մոտ 150 միավոր սեփական արտադրության T-155 Firtına ինքնագնաց կայան
մոտ 130 միավոր սեփական արտադրության T-122 Sakarya հրթիռահրետանային համալիր
՝ TOROS 230 A/260 A ՀԿՌՀ

մոտ 80 T-300 Kasırga ՀԿՌՀ
մոտ 280 միավոր հին ամերիկյան M110
մոտ 36 միավոր հին M107
9 միավոր հին M55
222 միավոր հին M44T
365 միավոր հին M52T
25 միավոր հին M108T
16 միավոր M270 ATACMS և այլն:

Բանակի հրթիռահրետանային զորքերում բավական թույլ է հրթիռային բաղադրիչը՝ հատկապես մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռների մասով: Ամերիկյան համազարկային կայանները հին են և հարմարեցված չեն նման խնդիրների համար: Այդ պատճառով է, որ թուրքական բանակի զարգացման ապագա ծրագրերում մեծ տեղ է հատկացված նմանատիպ զենքերի ձեռքբերմանը: Այդուհանդերձ, թուրքական բանակում ամենամեծ հեռահարության «երկիր-երկիր» դասի օպերատիվ մարտավարական հրթիռը թուրք-չինական նախագծով ստեղծված «J-600T YILDIRIM»-ն է, որի թվաքանակը գնահատվում է մոտ 100 միավոր: ՅՈՒ-ի սպառազինության մեջ կան նաև ամերիկյան օպերատիվ-մարտավարական «ATACMS MGM 140 Block» հրթիռներ, որոնց թվաքանակը գնահատվում է մոտ 70 միավոր: Հրթիռային սպառազինության ավելացման պատճառով 2005թ. ՅՈՒ-ի կազմում ստեղծվել է առանձին հրթիռային բրիգադ:

Հակատանկային միջոցները ևս չափազանց բազմազան են, ավելի քան 2500 միավոր ամերիկյան «TOW», եվրոպա-

կան «Eryx», «Milan», ռուսական «Корнет», «Конкурс» հակատանկային հրթիռային համալիրներ: Թուրքական բանակում կան նաև ավելի քան 5000 միավոր РПГ-7 և 40.000 միավոր M72A2 հակատանկային նռնականետեր: ՀՕՊ միջոցները ևս բազմազան են և հիմնականում ներկայացված են փոքր միջոցներով: Մասնավորապես՝

2800 միավոր փոքր տրամաչափի ինքնագնաց կայաններ,
1900 միավոր կրովի հրթիռային «Red-Ay», «Stinger», «Игла» համալիրներ, ինչպես նաև դրանց որոշակի ինքնագնաց տարբերակներ:
Միջին հեռահարության ՀՕՊ համալիրները կազմված են ամերիկյան «Nike Hercules» և «I-Hawk» ՋՀՀ-ներից:

ՅՈՒ-ի կազմի մեջ է մտնում բանակային ավիացիան, մասնավորապես հարվածային ուղղաթիռները, որոնց քանակը զարմանալիորեն սակավ է՝ մինչև 5 տասնյակ: Երկար ժամանակ Թուրքիան ԱՄՆ-ից փորձում էր ձեռք բերել ժամանակակից հարվածային ուղղաթիռներ, սակայն մերժում ստանալով՝ թուրքական կողմը նախընտրեց իտալական ընկերության հետ համատեղ ուղղաթիռների արտադրություն սկսել: «T-129 Atak» անունը կրող հետախուզական-հարվածային ուղղաթիռը լրացնելու է ՋՈՒ-ում նման միջոցների հիմնական բազան: Բանակային ավիացիան իր սպառազինության մեջ ամերիկյան «AH-1 Cobra» հարվածային ուղղաթիռներից բացի ունի նաև բազմանպատակ և տրանսպորտային այլ ուղղաթիռներ. Մասնավորապես՝ մոտ 100 միավոր «S-70 Black Hawk», գրեթե նույնքան «AS 532», և «UH-1», մոտ 50-ի

չափ AB-204/206 և շուրջ 2 տասնյակ ռուսական «Ми-17»:

Թուրքիայի ԶՈՒ-ը գտնվում են բարեփոխումների իրականացման գործընթացում, որի շրջանակներում բանակի դիվիզիոն համակարգը փոխարինվում է բրիգադներով: Ներկայում, ՅՈՒ-ը կազմված են հիմնականում կորպուս-բրիգադային համակարգով: Բարեփոխումների շրջանակում նախատեսված են համակարգային լուրջ փոփոխություններ իրականացնել հատկապես ՅՈՒ-ում: Ըստ առաջադրված պլանի՝ նախատեսվում էր 3-րդ և Էգեյան բանակների վերացում, ինչի արդյունքում կմնան 1-ին (Ստամբուլ) և 2-րդ (Մալաթիա) բանակները, որոնց հիման վրա պաշտպանական առումով կկազմվեն Արևմտյան և Արևելյան հրամանատարություններ: Բացի այդ, ԶՈՒ ԳՇ-ի կառուցվածքում ևս իրականացվելու են փոփոխություններ, որի արդյունքում ստեղծվելու է զորքերի 3 տեսակների միացյալ հրամանատարություն: Բարեփոխումների այդ գործընթացն իրականացվում է փուլ առ փուլ, ուստի այն դեռ երկար ժամանակ կպահանջի:

Ռամաօդային ուժերը (ՌՕՈՒ, Hava kuvvetleri) լուրջ դերակատարություն ունեն այդ երկրի ԶՈՒ-ի կառուցվածքում և պաշտպանական պլանավորման մեջ: Հրամանատարության շտաբը գտնվում է Անկարայում:

ՌՕՈՒ-ը կազմված են 1-ին և 2-րդ մարտավարական ռազմաօդային հրամանատարություններից, Ռազմաօդային ուսումնավարժական և Թիկունքի հրամանատարություններից: 1-ին և 2-րդ մարտավարական ռազմաօդային հրամանատարությունները պատասխանատու են համապատասխանաբար երկրի արևմտյան ու արևելյան շրջանների

պաշտպանության համար, որոնց շտաբները գտնվում են Իզմիրում և Դիարբեքիրում:



ՌՕՈՒ-ի հրամանատարության կազմում կա՝

13 մարտական-հարվածային էսկադրիլիա,

1 հետախուզական էսկադրիլիա,

1 օդային նախազգուշացման ու վերահսկման էսկադրիլիա,

1 որոնողա-փրկարարական էսկադրիլիա,

6 տրանսպորտային էսկադրիլիա,

1 վառելիքի լիցքավորման,

7 ռազմաուսումնական էսկադրիլիա,

1 տրանսպորտային ուղղաթիռների պարկ,

2 ռադիոէլեկտրոնային պայքարի օդանավ,

6 ՀՕՊ էսկադրիլիա և 8 միջին հեռահարության ՀՕՊ միավորում:

Թուրքիայի Մալաթիա նահանգի Քյուրեջիք ավանի շրջակայքում է տեղակայված ՆԱՏՕ-ի միասնական հակաօդային և հակահրթիռային պաշտպանության համակարգի «AN/TPY-2» ամերիկյան ռադիոտեղորոշիչ կայանը:

Քոնիայի 3-րդ հիմնական ավիաբազայում են գտնվում օդային նախազգուշացման և վերահսկման (AWACS) թվով 4 Boeing B-737-700 ինքնաթիռներ:

Թուրքիայի ԶՈՒ-ի մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության ՀՕՊ և ՀՀՊ ժամանակակից համալիրներ: Ներկայում Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության «Rapier», «Stinger», սեփական արտադրության Atılgan, միջին հեռահարության «I-Hawk», «Nike Hercules» զենիթահրթիռային համալիրները:

Թուրքական ՌՕՈՒ-ը արդեն երկար ժամանակ է հիմնականում զինված են ամերիկյան մարտական ու ապահովման ինքնաթիռներով, որոնք հիմնականում ժամանակակից են: Ճիշտ է՝ դրանք միշտ մեկ-երկու մոդել հին են լինում ժամանակակիցներից, սակայն, որպես կանոն, բավարարում են բանակի պահանջները:

Այսօր թուրքական ՌՕՈՒ-ը սպառազինված են.

մոտ 50 միավոր F-5,

մոտ 250 միավոր F-16 C/D մոդելների կործանիչներով, մի քանի 100 միավոր ուսումնական, տրանսպորտային և այլ տեսակի ինքնաթիռներով և ուղղաթիռներով:

Հիմնական կործանիչները ամերիկյան արտոնագրով արտադրվում են Թուրքիայում, դրանք իրենց ենթատեսակ-

ների մեջ լավագույնը չեն, սակայն բավական մարտունակ են: Թուրքական օդուժը վերջին տարիներին զգալիորեն բարձրացրել է իր ունակությունները և մարտունակությունը: Մասնավորապես՝ հակառակորդի ՀՕՊ խմբավորումների ճեղքման և հեռահար, զերճշգրիտ ու խիտ հարվածների հասցման առումով թուրքական օդուժը ներկայում կարող է լուրջ վտանգ ներկայացնել անգամ ռուսական ՌՕՈՒ-ի հարավային օկրուգի հրամանատարությանը: Հատկապես վերջին տասնամյակում թուրքական օդուժի համար ԱՄՆ-ից ձեռք են բերվել հակաօդային պաշտպանության դեմ պայքարի օպերատիվ հեռահարության մեծաքանակ հրթիռներ՝ «AGM-88 High-speed Anti-Radiation Missile» (HARM): Ներկայում դրանց քանակը գերազանցում է 100 միավորը: Սակայն թուրքական օդուժի ներուժը հատկապես բարձրացնում են նոր սերնդի օդ-երկիր օպերատիվ հեռահարության (մինչև 200 կմ) 50 միավոր «AGM-84K SLAM-ER» և 100 միավոր «AGM-154A/C JSOW» հրթիռները: Եթե այս ամենին գումարենք նաև մինչև 400 միավոր «GBU-31/38 JDAM» ճշգրիտ ռումբերը և դեռ վաղուց գնված մեծաքանակ «AGM-142» և այլ տեսակի հրթիռներն ու ռումբերը, ինչպես նաև օդային ղեկավարման ժամանակակից ինքնաթիռները, ապա կարելի է պնդել, որ թուրքական օդուժը ի վիճակի է իրականացնել ռազմավարական մակարդակի օդային հարձակողական գործողություն հունական, ռուսական և անգամ իսրայելական օդուժների նկատմամբ՝ ճնշելով կամ ոչնչացնելով հեռահար ՀՕՊ-ի մինչև 10 դիվիզիոն: Այս ամենի իրականացման համար թուրքական օդուժը միայն մեկ խոչընդոտ ունի՝ օպերատիվ և

ռազմավարական մակարդակի նման ռազմագործողության պլանավորման և իրականացման փորձը:

Սակայն այս ամենով հանդերձ թուրքական օդուժը բավական թույլ է իր տեխնիկական հագեցվածության մակարդակով նույն հունական կամ իսրայելյան օդուժից, ինչը մտահոգում է թուրքական ռազմաքաղաքական ղեկավարությանը: Ներկայում ՌՕՈՒ-ի զարգացման վրա ավելի մեծ ուշադրություն է դարձվում: Մասնավորապես՝ զարգացվում են սեփական ԱԹՍ-ների ծրագրեր, ԱՄՆ-ից ձեռք են բերվում օդային ղեկավարման ժամանակակից կենտրոններ: Թուրքիան 2017թ. ստանալու է ավելի քան 100 միավոր նոր սերդի «F-35» կործանիչներ, որոնց արտադրության գործընթացին ևս մասնակցում է: Նշյալ գերժամանակակից կործանիչների հայտնվելը Թուրքիայում կարող է զգալիորեն փոխել ուժային հավասարակշռությունը տարածաշրջանում, քանի որ Թուրքիան կունենա տարածաշրջանում անգերազանցելի հարվածային ավիացիա, թե քանակային, թե որակային առումներով: Միևնույն ժամանակ Թուրքիան քայլեր է իրականացնում բանակը հեռահար զենիթահրթիռային համալիրներով համալրելու ուղղությամբ: Բոլոր այս բաղադրիչների մեկտեղման դեպքում թուրքական ՌՕՈՒ-ը զգալիորեն կբարձրացնեն իրենց մարտունակությունը և կարողություն ձեռք կբերեն ոչ միայն մրցելու իսրայելական օդուժի հետ, այլ նաև կգերազանցեն հունականին:

Թուրքական ՌՕՈՒ-ն իրենց կիրառման փորձով աչքի չեն ընկնում: Չնայած դաշինքի ակտիվ անդամ լինելու հանգամանքին՝ թուրքական օդուժի պատմությունը այնքան էլ հարուստ չէ մարտական կիրառությամբ: Սառը պատերազմի

ժամանակ և դրանից հետո թուրքական կործանիչները մի քանի անգամ բախվել են հարևան երկրների ինքնաթիռների հետ: Խորհրդային կողմը մի քանի անգամ խոցել է Թուրքիայի տարածքից անցած տարատեսակ թռչող սարքեր, բայց դրանք հիմնականում մարտական չեն եղել: Մեկ-երկու բախում եղել է նաև իրաքյան և սիրիական կործանիչների հետ, որոնք ևս թուրքական կողմի համար լավ ավարտ չեն ունեցել: 2015թ. նոյեմբերին թուրքական կործանիչների կողմից ռուսական Cy-24 ինքնաթիռի խոցումը ռուսական կողմի թույլ տված մարտավարական կոպիտ սխալի հետևանքն էր, քանի որ այն ինքնաթիռը եղել է առանց կործանիչային տեխնիկայի ուղեկցության: Ամենաշատ օդային բախումները գրանցվել են Հունաստանի հետ: Չնայած այն հանգամանքին, որ այս երկու երկրները նույն դաշինքի անդամ են, բազմիցս են միմյանց դեմ պայքարել օդում:

Ռազմածովային ուժերը (ՌԾՈՒ, Deniz kuvvetleri) ներառում են 4 հրամանատարություն՝ Ռազմական նավատորմի, Հյուսիսային և Հարավային ռազմածովային գոտիների ու Ուսումնական: Պատերազմական իրավիճակում ՌԾՈՒ-ի ընդհանուր հրամանատարության ենթակայությանն է անցնում Առափնյա անվտանգության հրամանատարության օպերատիվ ղեկավարումը, որը խաղաղ պայմաններում գտնվում է ՆԳՆ-ի ենթակայության տակ: ՌԾՈՒ-ի հիմքը հանդիսանում է ռազմածովային նավատորմի հրամանատարությունը, որի շտաբը գտնվում է Գյոլջյուքի ռազմածովային բազայում: ՌԾՈՒ-ի հյուսիսային գոտու հրամանատարությունը, որի շտաբը գտնվում է Ստամբուլում, պատասխանատու է Բոսֆոր և Դարդանել նեղուցների, Մարմարա ծովի

ու սնծովյան գոտիների պաշտպանության համար: ՌԾՈՒ-ի հարավային գոտու հրամանատարության, որի շտաբը գտնվում է Իզմիրում, պատասխանատվության տակ են մտնում Էգեյան և միջերկրածովյան շրջանների անվտանգության ու պաշտպանության ապահովումը: ՌԾՈՒ-ի հենակետերն ու բազաները գտնվում են Գյոլջյուքում, Էրդեքում, Ստամբուլում, Չանաքքալեում, Էրեգլիում, Բարթընում, Իզմիրում, Ֆոչայում, Աքսազում, Անթալիայում, Մերսինում և Իսքենդերունում: ՌԾՈՒ-ի կազմում գտնվում են նաև ռազմածովային ավիացիոն էսկադրիլիաներ:

Թուրքական նավատորմը այս զորատեսակներից ամենաթույլ զարգացածն է և չնայած որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Սև ծովում լուրջ առավելություն ստացավ, միևնույն է, նավերի քանակը և տեսականին բավական թույլ են, որպեսզի կարողանան սեփական ափերից հեռու որոշակի մարտական խնդիրներ լուծեն:

Թուրքական նավատորմի հիմքը կազմում են ամերիկյան արտադրության, ամերիկյան ու գերմանական նավատորմից հանված «MEKKO» և «Perry» տեսակի, շուրջ մեկ ու կես տասնյակ ֆրեգատները: Դրանք սպառազինված են բավական հզոր հրթիռային հականավային սպառազինությամբ և տորպեդներով, նախատեսված են գործելու ափերից հեռու մինչև մեկ-երկու հարյուր կմ հեռավորության վրա: Երկրորդ օղակում գործում են մեկ տասնյակից քիչ կորվետները, որոնք ևս ամերիկյան ու ֆրանսիական հին նավեր են: Դրանց սպառազինությունը ևս բավական հզոր է մարտավարական հեռավորությունների վրա գործելու համար: Թուրքական նավատորմում են նաև մոտ մեկ ու կես տասնյակ փոքր դիզելային սուզանավեր, որոնք ևս հիմնականում հանված են գերմանական նավատորմի կազմից: Դրանք առավելապես կիրառվում են Սև ծովում և միջերկրածովյան ջրային տարածքներում:

Թուրքական ռազմաարդյունաբերությունը այս հարցում ևս մեծ ու հավակնոտ ծրագրեր ունի, որպեսզի ժամանակի ընթացքում կարողանա կառուցել սեփական նավերը՝ մինչև կորվետ դասի և անգամ սուզանավեր:

ԳՇ-ի հատուկ նշանակության ուժերը (ՀՆՈՒ, Genelkurmay Özel kuvvetleri) կազմում են առանձին միավորում և գտնվում են ԳՇ-ի պետի ենթակայության տակ: Այդ ստորաբաժանումները համարվում են բանակի էլիտար հատուկ ուժերը, որոնք հայտնի են նաև «բոսորագույն սաղավարտներ» (bordo bereliler) անվանումով: 1992թ. հրամանատարությունը վերակազմավորվել է բրիգադի, այնուհետև դիվիզիայի և 2011թ.՝ կորպուսի կարգավիճակով: Հատուկ նշանակության ուժերի հրամանատարության (Özel Kuvvetler Komutanlığı) պարտականությունը երկրի ներսում և դրսում հատուկ ռազմական բնույթի գործողությունների իրականացումն է: ՅՈՒ-ի կազմում կա 5 հատուկ նշանակության կոմանդոս բրիգադ և 1 կոմանդոս գունդ, որոնք ենթարկվում են բանակային կորպուսների հրամանատարություններին: Հատուկ նշանակության ստորաբաժանումներ ու միավորումներ կան երեք հիմնական զորատեսակներում, սակայն դրանց ընդհանուր օպերատիվ ղեկավարումն իրականացնում է ԳՇ ՀՆՈՒ հրամանատարությունը:

ՀՆՈՒ հրամանատարության անձնակազմի թիվը գնահատվում է մոտ 7-10 հզ.: Այդ ուժերը կազմված են A, B, C

ստորաբաժանումներից: A և B ստորաբաժանումները համալրված են համապատասխանաբար սպայական և ենթասպայական կազմով, իսկ C ստորաբաժանումն՝ առավելապես սերժանտականով: ՀՆՈւ-ում ծառայության պայմանները բավարարող զինծառայողներն անցնում են 3 տարի ուսուցում և մասնագիտական հատուկ պատրաստություն:

ՅՈւ-ի կազմում իր պատրաստվածությամբ առանձնանում է «Մարտական որոնողա-փրկարարական ստորաբաժանումը» (MAK), որի պարտականությունների մեջ են մտնում հատուկ որոնողա-փրկարարական գործողությունները, հակառակորդի թիկունք թափանցումը, հետախուզադիվերսիոն, հակաահաբեկչական գործողությունները և այլն: Ստորաբաժանման մոտավոր թվաքանակը հասնում է 100-ի: Համալրումն իրականացվում է հիմնական զորատեսակների լավագույն զինծառայողների հավաքագրման միջոցով: Իրականացվող գործողությունների մարտավարությամբ ու ձևով այս ստորաբաժանումը նման է ամերիկյան բանակի «Դելտա» ջոկատին:

ՌԾՈւ-ի կազմում գործում են 2 հատուկ նշանակության ստորաբաժանումներ՝ «Ստորջրյա մարտիկների» (Su Altı Taaruz) և «Ստորջրյա պաշտպանության» (Su Altı Savunma) ջոկատները, որոնք ստեղծվել են դեռևս 1963թ.: Ջոկատների հրամանատարական կայանը գտնվում է Էգեյան ծովի ափին գտնվող Ֆոչա ռազմածովային բազայում: Դրանց պարտականություններից են ծովային հետախուզության ու դիտարկման իրականացումը, ամֆիբային-դեսանտային գործողությունները, հակառակորդի ռազմածովային ուժերի ու ենթակառուցվածքների խափանման, վնասազերծման համար դիվերսիոն, թիկունքային գործողությունները, ինչպես նաև հակառակորդի ծովային օբյեկտների հայտնաբերումը, վնասազերծումը, օբյեկտների և նավերի ստորջրյա պաշտպանությունը, ականազերծումը: Ստորաբաժանումները մարտական կիրառություն են անցել Կիպրոսի ռազմագործողության և 1995թ. Էգեյան ծովում Հունաստանի հետ Քարդաք (Իմիա) կղզու շուրջ ծագած ճգնաժամի ժամանակ: ՌԾՈւ-ի կազմում գործում է նաև ծովային հետևակի մեկ բրիգադ, որի տեղակայման բազան գտնվում է Ֆոչա ծովային ռազմաբազայում: Հայտնի է, որ բրիգադի գումարտակներից մեկը 1990-ական թթ. գործողություններ է իրականացրել երկրի քրդաբնակ Շըրնաք նահանգի տարածքում, մասնակցել Ալբանիայում խաղաղապահ գործողությունների:

Ռազմական հետախուզության ոլորտի օպերատիվ կառավարումն ու համակարգումն իրականացնում է ԶՈւ ԳՇ-ի հետախուզության վարչությունը (ԳՇ 4-րդ վարչություն), որի ենթակայության տակ կան հետախուզական հատուկ ստորաբաժանումներ, բաժիններ, ծառայություններ: ԳՇ-ի հետախուզության վարչության կազմի մեջ են մտնում հետախուզության, հակահետախուզության ու անվտանգության, ծրագրավորման ու համակարգման, ռադիո-էլեկտրոնային հետախուզության բաժիններն ու վարչությունները:

ԶՈՒ 3 հիմնական զորատեսակների, ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության և Առափնյա անվտանգության հրամանատարության համար սպաների ու կրտսեր հրամանատարական կազմի պատրաստումն իրականացվում է ռազմական դպրոցների միջոցով, որոնք ունեն բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ:

Ցամաքային ռազմական դպրոցը (Kara Harp Okulu) ցամաքային ուժերի և ժանդարմերիայի համար սպաներ պատրաստող հիմնական բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Ուսման տևողությունը 4 տարի է: Կուրսանտների ընդհանուր թվաքանակը հասնում է 3000-ի:

Ռազմաօդային դպրոցը (Hava Harp Okulu) իրականացնում է ՌՕՈՒ-ի հրամանատարական, սպայական կազմի պատրաստումը: Ուսման տևողությունը 4 տարի է: Դպրոցի կազմում 2001թ. գործում է Օդագնացության և տիեզերական տեխնոլոգիաների ինստիտուտը (Havacılık ve Uzay Teknolojileri Enstitüsü), որը կադրեր է պատրաստում ռազմաօդային, տիեզերական համակարգերի, էլեկտրոնիկայի, տեղեկատվական համակարգերի ոլորտում:

Ռազմածովային դպրոցը (Deniz Harp Okulu) ապահովում է ՌԾՈՒ հրամանատարությանն ու Առափնյա անվտանգության հրամանատարության անհրաժեշտ սպայական կադրերով, որոնք ուսումնառությունից հետո կրտսեր սպայական պաշտոնների են նշանակվում ռազմական նավատորմում, ռազմածովային բազաներում, Առափնյա անվտանգության հրամանատարությունում: Ուսման տևողությունը 4 տարի է և ուսումնառության ավարտին կուրսանտները ստանում են բակալավրի աստիճան:

ԶՈՒ-ի ռազմաբժշկական սպայական, ենթասպայական ու բուժական անձնակազմի պատրաստումն իրականացնում է Գյուլիանեի ռազմական բժշկության ակադեմիան (Gülhane Askeri Tıp Akademisi): Ակադեմիայի ռազմական բժշկության ֆակուլտետում իրականացվում է ռազմաբժշկական սպայական դասի ուսուցումը: Ուսումնառությունից հետո շրջանավարտները կրտսեր լեյտենանտի աստիճանով ծառայության են անցնում հիմնական զորատեսակներում և ժանդարմերիայում որպես ռազմական բժիշկներ: Ենթասպայական ու բուժական անձնակազմի պատրաստումն իրականացվում է ակադեմիայի կազմում գործող Ենթասպայական բժշկական մասնագիտացված դպրոցում և Բուժակների բարձրագույն դպրոցում:

Հիմնական զորատեսակների ենթասպայական անձնակազմը պատրաստվում է ցամաքային, ռազմաօդային, ռազմածովային ու ժանդարմերիայի մասնագիտական դպրոցներում (Astsubay Meslek Yüksek Okulu), որոնցում ուսումնառությունը տևում է 2 տարի և համապատասխանում է միջին մասնագիտական կրթության աստիճանին:

Թուրքիայում գործում են նաև 4 ռազմական միջնակարգ վարժարաններ, որոնցից յուրաքանչյուրն իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխան ենթարկվում է հիմնական զորատեսակներից մեկի հրամանատարությանը: Դրանք հանդիսանում են ռազմական նախաբուհական հաստատություններ, որոնք կադրեր են պատրաստում բարձրագույն ռազմական ուսումնական հաստատու-

թյունների համար: Դրանցից հայտնի է հատկապես Ստամբուլում գտնվող Քուլելիի ռազմական վարժարանը և Իզմիրում գործող Մալթեփեի ռազմական վարժարանը: Դրանցում ուսման տևողությունը 4 տարի է և համապատասխանում է ավագ դպրոցների կարգավիճակին:

ԶՈՒ-ի սպայական կազմի վերապատրաստումը, հետբուհական կրթությունն ու բարձր սպայական կազմի դասընթացներն իրականացվում են ԶՈՒ Ռազմական ակադեմիաների հրամանատարության (Harp akademileri komutanlığı) ներքո գործող ակադեմիաների շրջանակում: Դրանցից են Ազգային անվտանգության ակադեմիան, երեք հիմնական զորատեսակների ակադեմիաները և այլն: Հրամանատարությունն իրականացնում է նաև ռազմապատմական, ռազմական ոլորտի հետազոտական աշխատանքներ: Հրամանատարության կազմում գործում է «Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը» (SAREN), որը հանդիսանում է որպես ռազմապատմական ու ռազմաքաղաքական հետազոտական կառույց:

Ռազմարդյունաբերական համակարգը

Ռազմարդյունաբերության և սպառազինության ձեռքբերման, բանակի ապահովման ոլորտում որոշումների կայացման գործընթացն ու մեխանիզմները գործում են դեռևս 1985թ. հաստատված համակարգով: ԶՈՒ-ի սպառազինության ու նյութական կարիքների ապահովումն իրականացվում է ինչպես ուղղակի արտասահմանյան գնումների, այնպես էլ տեղական ռազմաարդյունաբերության միջոցով: Այդ գործընթացն անցնում է կառավարման հատուկ համակարգի մի քանի փուլեր: Նախ, ԶՈՒ-ի կարիքների ապահովման համար որևէ նախագիծ որոշվում և հավանության է արժանանում ԳՇ-ի կողմից, որից հետո հաստատվում Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում: ԳՇ-ի, ՊՆ-ի ու Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության (ՊԱԳՎ) համագործակցությամբ կազմվում է նախագծի պլանավորման ու բյուջեի համակարգը, որից հետո գնման կամ արտադրական գործընթացը կառավարում և իրականացնում է ՊԱԳՎ-ն:

ՊԱԳՎ-ի հիմնական գործառույթներն են՝

- *արտադրական ոլորտի հնարավորությունների կազմակերպումն ու միավորումը պետական քաղաքականության շրջանակներում,*
- *ռազմական արդյունաբերության պետական ու մասնավոր հատվածի պլանավորման աշխատանքները,*
- *ռազմաարդյունաբերական նախագծերի զարգացմանն ու նախատիպերի մշակմանն աջակցությունը,*
- *տեխնիկական ու տնտեսական գնահատումների և որմ՚կի վերահսկողության իրականացումը,*
- *պետության անունից ոլորտի ընկերությունների հետ պայմանագրերի ստորագրումն ու արտադրական գործընթացին օժանդակությունը,*
- *արտադրանքի արտահանման և առևտրային ծրագրերի համակարգումը:*

Ազգային պաշտպանական ռազմավարության հայեցակարգի ու այլ հիմնարար փաստաթղթերի հիման վրա իրականացվում են անհրաժեշտ սպառազինության ձեռքբերման ուղղված պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման աշխատանքները: Պլանավորման նախնական գործընթացում հստակեցվում են ԶՈՒ-ին անհրաժեշտ սպառազինության կարիքները, կազմվում դրանց ապահովմանն ուղղված ռազմավարական նպատակային պլան, ծրագրավորման գործընթացում արդեն կազմվում Մատակարարման տասնամյա ծրագիրը (On Yıllık Tedarik Programı), իսկ հետո՝ նախագծի բյուջեն:

Պաշտպանական արդյունաբերության բարձրագույն համակարգող խորհրդի (Savunma Sanayii Yüksek Koordinasyon Kurulu) նիստում երկրի վարչապետի և խորհրդի 13 անդամների մասնակցությամբ կառավարության կողմից հաստատված ընդհանուր ռազմավարական ծրագրին համապատասխան իրականացվում է ընդհանուր ծրագրավորումն ու համակարգումը, տրվում հանձնարարականներ և ԶՈՒ ԳՇ-ի ռազմավարական ծրագրի շրջանակներում որոշումներ կայացվում անհրաժեշտ սպառազինության մատակարարման մեխանիզմների ու եղանակների հարցում:

ԶՈՒ-ի սպառազինության, ռազմաարդյունաբերական ծրագրերի, մատակարարումների ու գնումների հարցերը քննարկվում և հաստատվում են Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի (Savunma Sanayii Icra Komitesi) նիստերում, որը նախագահում է երկրի վարչապետը: Այդ նիստերում որոշում է կայացվում անհրաժեշտ զինատեսակների տեղական արտադրության կամ ուղղակի

արտերկրից գնումների ճանապարհով դրանց մատակարարման վերաբերյալ, հայտարարվում հայտամրցույթներ, ինչպես նաև ձեռքբերվելիք սպառազինության ուսումնասիրման, արտադրության, նախատիպի ստեղծման, երկարաժամկետ պատվերների ու այլ ֆինանսատնտեսական խնդիրների հետ կապված Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչությանը տրվում հանձնարարականներ:

Մյուս մարմինը Ռազմաարդյունաբերության աջակցման հիմնադրամն է (Savunma Sanayii Destekleme Fonu), որը հանդիսանում է ռազմաարդյունաբերական ու ռազմատեխնիկական նախագծերի ֆինանսավորողը:

Պաշտպանական արդյունաբերության վերահսկման խորհուրդը (Savunma Sanayii Denetleme Kurulu) իրականացնում է ՊԱԳՎ-ի ու հիմնադրամի բոլոր գործառույթների վերահսկողությունը:

ԶՈՒ-ի արդիականացման ու սպառազինության ապահովման հարցում կարևոր դեր ունի տեղական ռազմաարդյունաբերական համալիրը: Ներկայում Թուրքիայում գործում են մի քանի տասնյակ պետական և մասնավոր ռազմաարդյունաբերական ընկերություններ, որոնցից հայտնի են՝ TUSAŞ-ը, ASELSAN-ը, ROKETSAN-ը, OTOKAR-ը, MKEK-ը:

Տեղական ռազմաարդյունաբերական համալիրի միջոցով ԶՈՒ-ի սպառազինության և ռազմական տեխնիկայի կարիքների ապահովման ցուցանիշը 2015թ. հասել է մոտ 60%-ի: «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման տարիներին ռազմաարդյունաբերության ոլորտում իրականացվել է ավելի քան 30 մլրդ դոլարի ներդրում:

Էականորեն ավելանում են նաև թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալները: 2014թ. թուրքական ռազմական արդյունաբերության ու քաղաքացիական ավիացիոն արդյունաբերության արտադրանքի արտահանման ցուցանիշը կազմել է ավելի քան 1 մլրդ 647 մլն դոլար՝ ավելի քան 18%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ռազմաարդյունաբերության ոլորտում գիտահետազոտական-փորձարարակոնստրուկտորային ընդհանուր ծախսերը 2013թ. կազմել են 927 մլն դոլար:

Հանդիսանալով ՆԱՏՕ-ի անդամ՝ Թուրքիան ստանձնել է նաև դաշինքի պաշտպանական քաղաքականության ու ռազմավարության պարտավորությունները: Թուրքիայի տարածքում գործում են ՆԱՏՕ-ի մի քանի բազաներ ու հրամանատարական կենտրոններ: 2013թ. հուլիսին ի պատասխան ԹԱՄԺ-ի ընդդիմադիր պատգամավորներից մեկի հարցապնդմանը Թուրքիայի պաշտպանության նախարարը պաշտոնական գրությամբ ներկայացրել էր Թուրքիայում գործող ՆԱՏՕ-ի ռազմաբազաների ու կենտրոնների վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայում, ըստ Թուրքիայի ՊՆ-ի պաշտոնական տեղեկատվության, Թուրքիայի տարածքում գործում է ՆԱՏՕ-ի 4 հիմնական ռազմական բազա և ռազմական հրամանատարության շտաբ-կենտրոն՝ Իզմիրում, Անկարայում, Ստամբուլում և Քյուրեջիքում: Դրանցից գլխավորը Իզմիրում տեղակայված ՆԱՏՕ-ի Դաշինքի ցամաքային ուժերի հրամանատարության շտաբ-կենտրոնն է (Allied Land Command-LANDCOM): Սկզբնապես Իզմիրում տեղակայված էր ՆԱՏՕ-ի Դաշինքի ռազմաօդային ուժերի շտաբ-հրամանատարությունը, որը 2012թ. վերափոխվեց ցամաքային ուժերի հրամանատարության շտաբ-կենտրոնի: Ստամբուլում տեղակայված է ՆԱՏՕ-ի Արագ տեղակայման կորպուսի հրամանատարական շտաբը (NATO Rapid Deployable Corps - Turkey (NRDC-T): Անկարայում է գործում Ահաբեկչության դեմ պայքարի գերազանցության կենտրոնը (Centre of Excellence Defence Against Terrorism (COE-DAT)): Մալաթիայի Քյուրեջիք ավանում է տեղակայված ՆԱՏՕ-ի միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգի «AN/TPY-2» ռադիոտեղորոշիչ կայանը, որն ունի 2000 կմ դիտարկման շառավիղ:

Թուրքիայի ՊՆ-ն Ադանայում գտնվող Ինջիրլիքի ռազմաբազան չի ներառել այդ ցանկում՝ հիմնավորելով, որ այն գտնվում է Թուրքիայի ԶՈւ ԳՇ-ի ենթակայության տակ, դրա կիրառման իրավասությունը պատկանում է Թուրքիային և այն հանդիսանում է համատեղ օգտագործման ռազմաբազա, որի կիրառման թույլտվությունը պատկանում է թուրքական կառավարությանը: Ինջիրլիքի ռազմաբազան հանդիսանում է Թուրքիայի 2-րդ մարտավարական օդային հրամանատարության 10-րդ հիմնական ռազմաօդային բազան: Այն ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի և Թուրքիայի ԳՇ-ի միջև ստորագրված համաձայնագրի համաձայն հանդիսանում է համատեղ օգտագործման ենթակա ռազմաբազա: Ռազմաբազայի կառուցումն սկսվել է 1951թ. ամերիկյան ընկերությունների կողմից և սկսել կիրառվել 1954թ.ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի հրամանատարության ու Թուրքիայի ԶՈւ-ի միջև ստորագրված համաձայնագրի շրջանակում: Ռազմաբազայի իրավական կարգավիճակն ամրագրված է ինչպես ներօրենսդրական ակտերով, այնպես էլ ՆԱՏՕ-ի հիմնարար փաստա-

թղթով, որը սահմանում է անդամ պետությունների փոխադարձ օգնության ու օժանդակության սկզբունքը: Հյուսիսատլանտյան պայմանագիրը գրեթե բոլոր թուրք-ամերիկյան ռազմական պայմանագրերի հիմքն է կազմում: Թուրքիայում ամերիկյան ռազմաբազաների իրավական կարգավիճակն ու կիրառման հնարավորությունները ամրագրված էին 1969թ. ստորագրված թուրք-ամերիկյան Համատեղ պաշտպանության ու համագործակցության համաձայնագրով, որը լայն լիազորություններ էր տալիս ամերիկյան կողմին: Կիպրոսի ռազմագործողության ու ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի դեմ կիրառված զենքի էմբարգոյի պատճառով 1975թ. Թուրքիան չեղյալ է հայտարարում այդ համաձայնագիրը: Ինջիրլիքի ռազմաբազայի վերաբերյալ երկկողմ հիմնական փաստաթուղթը 1980թ. ստորագրված թուրք-ամերիկյան «Պաշտպանության և տնտեսական համագործակցության համաձայնագրին» կից արձանագրությունն է: Ըստ դրա՝ ռազմաբազան սահմանվում է որպես օդային գործողությունների ու օգնության բազա, նախատեսվում ՆԱՏՕ-ի պլանների շրջանակում ամերիկյան զինվորներին ու ինքնաթիռներին օգնություն ցույց տալու համար:

Ժանդարմերիայի և Առափնյա անվտանգության հրամանատարությունները

Ժանդարմերիան ստեղծվել է 19-րդ դարի առաջին կեսին՝ օսմանյան Թանզիմաթի տարիներին՝ որպես հասարակական կարգի պահպանության ռազմականացված ոստիկանական ուժ: Ժանդարմերիայի ստեղծման պաշտոնական տարեթիվն ընդունված է համարել 1846թ., երբ հիմնվեց Ժանդարմերիայի հրամանատարությունը (Zaptiye Müşirliği): 1909թ. ժանդարմերիան հանձնվեց ռազմական գերատեսչությանը: Այն հետագայում լուրջ դերակատարություն է ունեցել անկախության համար մղված պատերազմում: 1930թ. ընդունված օրենքով ժանդարմերիան ստացավ իր իրավական ժամանակակից կարգավիճակը: Հատկապես 1950-1960-ական թթ. իրականացվեցին մի շարք բարեփոխումներ՝ ժանդարմերիայի միավորումները վերակազմավորվեցին բրիգադային համակարգով և ստեղծվեցին շրջանային հրամանատարությունները: Հետագայում՝ 1984թ. այն ստանձնեց Քրդստանի բանվորական կուսակցության դեմ պայքարի գործողությունների պատասխանատվությունը, և լայն լիազորություններ ստացավ հատկապես երկրի արևելյան ու հարավ-արևելյան նահանգներում:

1983թ. ընդունված «Ժանդարմերիայի կառուցվածքի, պարտականությունների ու լիազորությունների» մասին օրենքի համաձայն՝ ժանդարմերիան հանդիսանում է հասարակական կարգի ու անվտանգության ապահովման ռազմականացված ոստիկանական ուժ: Հրամանատարության հիմնական պարտականություններն են՝

- *հասարակական կարգի ու անվտանգության ապահովում,*
- *ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, մաքսանենգության դեմ պայքար,*
- *սահմանային անցակետերի պահպանություն,*
- *պարտադիր զորահավաքի հարկադրում,*
- *քրեական հետախուզություն,*
- *ռազմավարական նշանակության օբյեկտների պահպանություն,*
- *ԶՈՒ-ի կողմից առաջ քաշված այլ հանձնարարություններ:*

Ժանդարմերիան հանդիսանում է Թուրքիայի ԶՈՒ-ի մի մասը: Խաղաղ ժամանակ այն գտնվում է ՆԳՆ-ի ենթակայության տակ, իսկ պատերազմական իրավիճակում անցնում է ԶՈՒ ԳՇ-ի օպերատիվ կառավարման տակ: Պատերազմական իրավիճակում ԶՈՒ ԳՇ-ի կողմից անհրաժեշտության դեպքում ժանդարմերիայի ստորաբաժանումների մի մասը կարող են անցնել հիմնական զորատեսակների հրամանատարության տակ, իսկ մի մասն էլ՝ շարունակել իրականացնել իրենց վերապահված հիմնական պարտականությունները Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության ենթակայության տակ: Հրամանատարության շտաբը գտնվում է Անկարայում:

Պաշտոնական տվյալներով հրամանատարության ընդհանուր անձնակազմի թվաքանակը կազմում է մոտ 190 հզ., որից ավելի քան 6 հզ-ը կազմում է սպայական, մոտ 24 հզ-ն էլ՝ ենթասպայական անձնակազմը:

2016թ. բյուջեն կազմել է ավելի քան 8.8 մլրդ ԹԼ, ինչը շուրջ 15 %-ով ավել էր նախորդից:

Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարի նշանակումն իրականացվում է ԶՈՒ ԳՇ-ի պետի առաջարկության, ՆԳՆ-ի հավանության, վարչապետի ստորագրության ու նախագահի վավերացման ճանապարհով: Իր պարտականությունների կատարման հարցում նա պատասխանատու է ներքին գործերի նախարարի առջև: Ժանդարմերիայի զինվորական անձնակազմը համալրվում է պարտադիր զորակոչի ու պայմանագրային ծառայության համակարգի միջոցով:

Ժանդարմերիայի զինվորական անձնակազմի մի մասը անհրաժեշտության դեպքում ապահովվում են ԳՇ-ի հավանությամբ՝ ԶՈՒ-ի հիմնական զորատեսակներից:

Թուրքիայի տարածքում գործում է թվով 14 ժանդարմերիայի շրջանային հրամանատարություն: Կան նաև նահանգային և գավառային հրամանատարություններ: Յուրաքանչյուր գավառային հրամանատարության պատասխանատվության տարածքում առկա են Ժանդարմերիայի կայաններ: Անհրաժեշտության դեպքում նահանգային կամ գավառային հրամանատարությունների կազմում կարող են ներառվել Ժանդարմերիայի հատուկ նշանակության ստորաբաժանումներ:

Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության ենթակայության տակ գործում են Ժանդարմերիայի հատուկ նշանակության 2 հիմնական ստորաբաժանումներ: Ժանդարմերիայի հատուկ գործողությունների ստորաբաժանումն (Jandarma Özel Harekat) առավելապես ներգրավված է երկրի քրդաբնակ շրջաններում հակաահաբեկչական գործողու-

թյուններում: Այդ ստորաբաժանման մարտիկները մասնակցել են նաև հատուկ գործողությունների երկրի սահմաններից դուրս՝ հատկապես Իրաքի հյուսիսում: Հատուկ նշանակության ստորաբաժանումները տեղակայված են առավելապես երկրի արևելյան շրջաններում՝ Թունջելի, Դիարբեքիր, Շըրնաք, որտեղ քրդական զինյալների դեմ իրականացվում են հատուկ գործողություններ: Ժանդարմերիայի Հատուկ հասարակական կարգի հրամանատարությունը (Jandarma Özel Asayiş Komutanlığı) գործում է հակահաբեկչական, պատանդների ազատման, ստորջրյա հատուկ օպերացիաների, զանգվածային անկարգությունների կանխման ու վերահսկման գործողությունների ոլորտում:

Ժանդարմերիայի հատուկ նշանակության (JÖH) գումարտակների ընդհանուր անձնակազմի թվաքանակը կազմում է ավելի քան 12 հզ.: Կառավարության որոշմամբ նախատեսված է այդ թիվը 2016թ. վերջին հասցնել մոտ 20 հզ-ի, ինչը պայմանավորված է երկրի ներսում ահաբեկչության դեմ պայքարի անհրաժեշտությամբ և պարեկային ուղեկալների թվի մեծացմամբ:

Ժանդարմերիայի հետախուզական վարչությունն իրականացնում է հետախուզական ու հակահետախուզական գործողություններ:

Ժանդարմերիայի կազմում գործում են նաև ռազմաօդային միավորումները (Jandarma havacılık birlikleri), որոնք իրականացնում են որոնողա-փրկարարական, անձնակազմի, տեխնիկայի տեղափոխման, բնական աղետների ժամանակ բնակչության օգնության ու տարհանման գործողություններ:

Հրամանատարության սպայական կազմի պատրաստումն իրականացվում է Ցամաքային ռազմական դպրոցում, որի շրջանավարտ կուրսանտները, ինչպես նաև պայմանագրային սպայական զինծառայողները մեկ տարի տևողությամբ անցնում են ժանդարմերիայի սպայական հիմնական կուրսը: Ենթասպայական դասի պատրաստումն իրականացվում է ժանդարմերիայի ենթասպայական մասնագիտական դպրոցում (Astsubay Meslek Yüksek Okulu) երկու տարի տևողությամբ:

Երկրի առափնյա հատվածների անվտանգությունն ու պաշտպանությունն իրականացնում է Առափնյա անվտանգության հրամանատարությունը (ԱԱՀ, Sahil Güvenlik Komutanlığı): Անձնակազմի ընդհանուր թիվը հասնում է մոտ 5.5 հզ-ի, որից միայն 625-ն են սպաներ:

2015 թ. ԱԱՀ-ի բյուջեն կազմել է 506 մլն ԹԼ (2015 թ. հունվարի փոխարժեքով՝ մոտ 215 մլն ԱՄՆ դոլար):

ԱԱՀ-ն գտնվում է ՆԳՆ-ի ենթակայության տակ, սակայն պատերազմական իրավիճակում այն ամբողջությամբ կամ մասամբ անցնում է ՌՕՈՒ-ի հրամանատարության կառավարման տակ: ԱԱՀ հրամանատարի նշանակումն իրականացվում է ԶՈՒ ԳՇ-ի պետի առաջարկության, ՆԳՆ-ի հավանության, վարչապետի ստորագրության ու նախագահի վավերացման ճանապարհով:

ԱԱՀ-ն իրենից ներկայացնում է ծովային ռազմականացված ոստիկանություն, որի հիմնական պարտականություններն են՝

- *երկրի առափնյա տարածքների, նավահանգիստների, ծովային կարևոր օբյեկտների պահպանությունը,*

- *ջրային ուղիների վերահսկողությունը,*
- *ջրային տարածքներում ու առափնյա տարածքներում անվտանգության ու հասարակական կարգի պահպանությունը,*
- *հանցավորության դեմ պայքարը:*

ԱԱՀ-ի կողմից է ապահովվում երկրի 8484 կմ ընդհանուր երկարությամբ առափնյա և 378 հզ. կմ² տարածք ընդգրկող ջրային տարածքների անվտանգությունը: Շտաբկայանը գտնվում է Անկարայում:

Կառուցվածքային առումով ԱԱՀ-ն բաղկացած է Սև-ծովյան, Մարմարայի և նեղուցների, Էգեյան, Միջերկրական ծովային տարածաշրջանային հրամանատարություններից, Առափնյա անվտանգության օդային, ուսումնակրթական և թիկունքային-մատակարարման հրամանատարություններից:

ԱԱՀ-ի սպաների ու ենթասպաների պատրաստումն իրականացվում է հրամանատարության ֆինանսավորմամբ՝ ՌՕՊու-ի և ռազմական այլ ուսումնական հաստատություններում: ԱԱՀ-ն համալրված է ավելի քան 100 պարեկային ռազմանավերով ու մոտորանավակներով, 10-նյակից ավել տրանսպորտային ու ծովային պարեկության ինքնաթիռներով և ուղղաթիռներով:

ՆԳՆ, Անվտանգության գլխավոր տնօրինությունը

Անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում գործում են համակարգող, խորհրդակցական երկու հիմնական մարմիններ:

Ահաբեկչության դեմ պայքարի համակարգող խորհուրդը (Terörle Mücadele Koordinasyon Kurulu) իրականացնում է անվտանգության մարմինների միջև ահաբեկչության դեմ պայքարի համակարգումը, այդ ոլորտում քաղաքականության ու գործողությունների գնահատում, խորհրդատվություն: Խորհրդի նիստերը հրավիրվում են ՆԳ նախարարի նախագահությամբ, ԳՇ երկրորդ պետի, Ազգային հետախուզական կազմակերպության ղեկավարի, Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարի, Արդարադատության, Արտաքին գործերի նախարարությունների քարտուղարների, Անվտանգության գլխավոր տնօրենի ու Առափնյա անվտանգության հրամանատարի մասնակցությամբ:

Պետական հետախուզական մարմիններից, անվտանգության այլ ծառայություններից ստացված հետախուզական տեղեկատվության համակարգման, վերլուծության ու փոխանակման, հակաահաբեկչական քաղաքականության ու ռազմավարության մշակման ու իրականացման հսկողության գործառույթներն իրականացնում է «Հասարակական կարգի և անվտանգության քարտուղարությունը» (Kamu Düzeni ve Güvenliği Müsteşarlığı), որը գործում է ՆԳՆ-ին կից: Քարտուղարությունը կազմված է հիմնական, խորհրդատվական ու օժանդակ ծառայություններից ու բաժիններից: Տարբեր մարմիններից ստացված հետախուզական տեղեկատվությունը

հավաքվում, վերլուծվում է քարտուղարության կազմում գործող Հետախուզության գնահատման կենտրոնում:

Ներքին գործերի նախարարությունը հանրապետական գործադիր մարմին է, որն իրականացնում է ոստիկանության ու հասարակական կարգի պահպանության այլ մարմինների կառավարումն ու համակարգումը: ՆԳՆ-ի կազմում գործում է Անվտանգության գլխավոր տնօրինությունը (ԱԳՏ, Emniyet Genel Müdürlüğü), որը հանդիսանում է պետության հիմնական ոստիկանական ուժը: ԱԳՏ տնօրենը նշանակվում է վարչապետի կողմից և պատասխանատու է ՆԳ նախարարի առջև: ԱԳՏ-ի անձնակազմի ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 256 հզ., որից 244 հզ.-ը՝ ոստիկանության ծառայողներ են:

2015 թ. ԱԳՏ-ի բյուջեն կազմել է 17 մլրդ թլ (2015 թ. հունվարի փոխարժեքով՝ մոտ 7.2 մլրդ ԱՄՆ դոլար):

ԱԳՏ-ի կազմում գործում են տասնյակ վարչություններ՝ ըստ ոլորտների: Դրանցից են Հասարակական կարգի, Տեղեկատվական տեխնոլոգիաների, Անվտանգության, Տեղեկատվության, Օդային, Մաքսանենգության և հանցավորության դեմ պայքարի, Անձնագրային և փաստաթղթային անվտանգության, Պահնորդական, Պետական պահպանության, Կիբերանվտանգության, Հակահաբեկչական, Սահմանային անցակետերի, Հատուկ նշանակության, Հետախուզության և այլն:

Բոլոր նահանգներում և գավառներում գործում են նահանգային, գավառային տնօրինությունները (İl ve İlçe Müdürlüklei):

ԱԳՏ-ի Հատուկ գործողությունների վարչության (EGM Özel Harekat Dairesi Başkanlığı) ենթակայությամբ են գործում ոստիկանության հատուկ նշանակության ուժերը (PÖH), որոնք կոչված են իրականացնելու հակահաբեկչական գործողություններ, գործել արտակարգ իրավիճակներում՝ գերիների ազատում, բանկերի կողոպուտ և այլն: Թվաքանակը կազմում է մոտ 8 հազար: Նախատեսված է 2016թ. վերջին ուժերի թիվը հասցնել մինչև 20 հզ-ի: Համապատասխան ուսուցումը հաջողությամբ ավարտած ոստիկանները հատուկ գործողությունների վարչության ստորաբաժանումների կազմում ծառայության են անցնում հիմնականում երկրի արևելյան ու հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններում:

Կառավարության ռազմավարական ծրագրի շրջանակում 2016թ. վերջին ժանդարմերիայի և ոստիկանության ՀՆՈւ-երի ընդհանուր թվաքանակը կհասնի մոտ 40 հզ-ի:

Ներքին հետախուզական ծառայությունը՝ Հետախուզական վարչությունը (Istihbarat Daire Başkanlığı), իրականացնում է երկրի ներքին անվտանգության, հասարակական կարգի ու հանցագործությունների հետ կապված հետախուզական, կանխարգելիչ գործառույթներ, հավաքում անհրաժեշտ տեղեկատվություն և անհրաժեշտության դեպքում դրանք ներկայացնում իրավասու մարմիններին: Հետախուզական գործունեության ոլորտում այն համագործակցում է այլ պետական հատուկ ծառայությունների հետ: Վարչությունը բոլոր 81 նահանգներում ունի բաժանմունքներ:

Ոստիկանության արագ արձագանքման ուժերը (Çevik Kuvvet), որոնք ևս հանդիսանում են հատուկ ստորաբաժանումներից, իրականացնում են զանգվածային միջոցառում-

ների ու երթերի, հավաքների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը, անհրաժեշտության դեպքում՝ ձեռնարկում կանխարգելիչ, միջամտող գործողություններ:

2015թ. սահմանային անվտանգության ու սահմանային պահպանության ոլորտում բարեփոխումների նոր քայլեր ձեռնարկվեցին: ՆԳՆ կազմում ստեղծվեց Սահմանային կառավարման վարչությունը, որի նպատակը սահմանապահ ոլորտում պրոֆեսիոնալ նոր ստորաբաժանման ստեղծումն ու տարբեր ուժերի միջև համակարգման ապահովումն է: Խնդիր է դրված ստեղծել սահմանային ինտեգրացված կառավարման և արդիականացված սահմանային անվտանգության համակարգ: Ստեղծվելիք սահմանապահ ստորաբաժանումը կազմվելու է Անվտանգության գլխավոր տնօրինության, ժանդարմերիայի և Առափնյա անվտանգության հրամանատարությունների անձնակազմից: Դեռևս Թուրքիայում սահմանային անցակետերում ծառայություն է իրականացնում Անվտանգության գլխավոր տնօրինությունը, մաքսային հարցերով՝ Մաքսային ծառայությունը, անցակետերի միջև ցամաքային սահմաններում՝ ժանդարմերիան և ցամաքային ուժերը, իսկ ծովային սահմաններում՝ Առափնյա անվտանգության հրամանատարությունը: Աստիճանաբար այս մարմինների ու զորատեսակների ֆունկցիաները սահմանային անվտանգության մասով փոխանցվելու են նոր ստեղծվող կառույցին ու ստորաբաժանմանը: Նախատեսվում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանային անվտանգության ոլորտում 10 տարիների ընթացքում անցում կատարել նոր համակարգին:

Ոստիկանության ծառայողների ուսուցումն իրականացվում է Ոստիկանության ակադեմիայում, ենթասպայական ու միջնակարգ ոստիկանական ուսումնական հաստատություններում:

Գյուղական պահապանները

Թուրքիայում գործում է գյուղական պահապանների (köy korucu) համակարգը, որն իրենից ներկայացնում է որպես ժանդարմերիային օժանդակ ռազմականացված ուժ՝ ՔԲԿ-ի դեմ պայքարի հարցում: Այն հիմնվել է 1985թ. Վարչապետ Թ. Օզալի նախաձեռնությամբ, երբ երկրում սկսվել էր ՔԲԿ-ի զինյալ պայքարը և քրդաբնակ գյուղական շրջաններում վերահսկողության ուժեղացման ու քրդական զինյալների դեմ պայքարի անհրաժեշտություն էր առաջացել:

Գյուղական պահապանների համակարգը գործում է 22 նահանգներում՝ արևելյան ու հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններում, ինչը կոչված է քրդական գյուղերը պաշտպանել ՔԲԿ-ի ոտնձգություններից, դրա դեմ պայքարի հարցում համագործակցել ժանդարմերիայի հետ: Գյուղական պահապանների համակարգը համալրվում է տեղի քուրդ բնակչությունից՝ կամավորության ու վարձատրության շնորհիվ: Այն, փաստորեն, քրդաբնակ շրջաններից հավաքագրված քրդերից կազմված ռազմականացված մեծ «բանակ» է, որը պայքարում է ՔԲԿ-ի դեմ և հանդիսանում տեղական իշխանությունների ռազմական գործիքը: Այս համակարգում գտնվելը քուրդ «քորուջուներին» ոչ միայն օրինական որոշ

արտոնություններ ու լիազորություններ է տալիս, այլ նաև ոչ ֆորմալ բավական մեծ իշխանություն իրենց տարածքներում:

Գյուղական պահապանները վարչական առումով գտնվում են գավառապետերի (քայմաքամ), իսկ ռազմական գործի առումով՝ ժանդարմերիայի շրջանային հրամանատարությունների օպերատիվ կառավարման ներքո: Գյուղական պահապանների համակարգում գործում է պայմանագրային և կամավորության հիմունքներով ծառայությունը:

2013թ. դրությամբ, պաշտոնական տվյալներով երկրում գյուղական պահապանների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 65 հզ.: Ամենաշատ գյուղական պահապաններ ունեցող նահանգներն են Շըրնաքը, Հաքքյարին, Բիթլիսը:

Ազգային հետախուզական կազմակերպությունը

Թուրքիայում արտաքին հետախուզական գործունեության հանրապետական հիմնական մարմինը Ազգային հետախուզական կազմակերպությունն է (ԱՀԿ, Milli Istihbarat Teşkilatı): Այն իրականացնում և համակարգում է պետության արտաքին հետախուզական և հակահետախուզական գործունեությունը:

Դեռևս 1926թ. հիմնվում է Թուրքիայի Հանրապետության առաջին համակարգված ու պրոֆեսիոնալ հիմքի վրա ստեղծված հետախուզական կազմակերպությունը՝ «Ազգային անվտանգության ծառայությունը» (ԱԱԾ, թուրք. *Milli Emniyet Hizmeti*), որը գտնվում էր բանակի գլխավոր շտաբի ենթակայության տակ: Այդ ծառայությունն ստեղծվել էր հիմնականում երկրի ներսում գործելու համար և արտաքին հետախուզությունը առաջնային չէր համարվում: Ուստի, Գերմանիայի օգնությամբ սկսվեց արտաքին հետախուզության բաժանմունքի կազմակերպման գործընթացը: Սկսած «Հատուկ կազմակերպությունից» մինչև ԱՀԿ-ի ստեղծումը, թուրքական հետախուզական ծառայությունները ռազմական բնույթի էին և գտնվում էին ԶՈՒ ԳՇ-ի ենթակայության տակ: Քաղաքացիական անձանց սկսեցին հետախուզական կառույցներ ընդունել 1970-ական թթ., իսկ մասամբ այն սկսեց «քաղաքացիականացվել» միայն 1990-ական թթ.:

1965թ. հուլիսին ընդունված օրենքով ԱԱԾ-ն վերակազմավորվում է և ստանում իր ներկայիս անվանումը: Թեև ԱՀԿ-ն ստեղծվել էր որպես արտաքին հետախուզական գործառույթներ իրականացնող մարմին, այն երկար ժամանակ գտնվում էր երկրի զինվորականության ազդեցության տակ: Մինչև 1990-ական թթ. ԱՀԿ-ն գտնվել է երկրի զինվորական իշխանությունների ոչ ուղղակի ղեկավարման տակ: 1965-1992թթ. ԱՀԿ-ի բոլոր 11 ղեկավարները եղել են կադրային զինվորականներ:

ԱՀԿ-ի «քաղաքացիականացման» գործընթացի հիմքը դրեց Թուրքիայի վարչապետ Թ. Օզալը, և արդեն իսկ 1990-ականներից սկսած դրանում զինվորականների ազդեցությունը սկսեց աստիճանաբար նվազել: Չնայած ԱՀԿ-ն հիմնադիր օրենքի համաձայն գտնվել է կառավարության հսկողության տակ և ուղղակի կապված է եղել վարչապետի գրասենյակին, այդուհանդերձ, դրանում բավական մեծ է եղել զինվորականության ազդեցությունը:

Կառույցում զինվորականության դերի նվազեցման առաջին ամենամեծ քայլը 1992թ. զինվորական չհանդիսացող կադրային դիվանագետ Սյոնմեզ Քյոքսալի նշանակումն էր ԱՀԿ-ի ղեկավարի պաշտում, որը պաշտոնավարեց մինչև 1998թ.: Դա առաջին դեպքն էր 1965թ. հետո, երբ ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակվում էր քաղաքացիական ծառայող: Ս. Քյոքսալի նշանակմամբ սկսվեց ԱՀԿ-ի ընդհանուր «քաղաքացիականացման» գործընթաց:

Ս. Քյոքսալից հետո 1998-2005թթ. ԱՀԿ-ն ղեկավարել է կրկին ոչ զինվորական Շենքալ Աթասագունը, որը երիտասարդ տարիներից աշխատել էր ԱՀԿ-ում: Նրանից հետո ԱՀԿ-ի բոլոր ղեկավարները եղել են քաղաքացիական պաշտոնյաներ:

2010թ. մայիսից ԱՀԿ-ն ղեկավարում է քաղաքացիական անձ հանդիսացող Հաքան Ֆիդանը, ով համարվում է ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդողանի վստահելի մարդկանցից: 2009թ. ապրիլից նա զբաղեցնում էր ԱՀԿ ղեկավարի տեղակալի պաշտոնը:

ԱՀԿ-ի ու պետական հետախուզական գործունեության հետ կապված բոլոր հարցերը կանոնակարգվում են 1983թ. ընդունված «Պետական հետախուզական ծառայությունների ու Ազգային հետախուզական կազմակերպության» մասին օրենքով:

«Պետական հետախուզական ծառայությունների և Ազգային հետախուզական կազմակերպության մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԱՀԿ-ի պարտականությունն է.

- *Թուրքիայի հանրապետության ու ժողովրդի ամբողջականության, անկախության, անվտանգության, սահմանադրական կարգի դեմ ներքին և արտաքին հնարավոր գործողությունների վերաբերյալ հետախուզական տեղեկատվության ապահովումն ու ներկայացումը երկրի նախագահին, վարչապետին, գլխավոր շտաբի պետին, Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարին և ըստ անհրաժեշտության այլ կառույցներին,*
- *պետության ազգային անվտանգության քաղաքականության հետ կապված պլանների մշակման և իրագործման հարցում երկրի բարձրագույն ղեկավարությանը անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությամբ ապահովումը,*
- *հակահետախուզությունն ու ահաբեկչության դեմ պայքարը:*

ԱՀԿ-ի ղեկավարն իր պարտականությունների կատարման հարցում պատասխանատու է միայն երկրի վարչապետին: Նա նշանակվում է Ազգային անվտանգության խորհրդում թեկնածության քննարկումից հետո՝ վարչապետի առաջարկությամբ և նախագահի հաստատմամբ: ԱՀԿ-ի ղեկավարի առաջարկության հիման վրա, վարչապետի ներկայացմամբ ու նախագահի հաստատմամբ նշանակվում են ղեկավարի տեղակալներն ու վարչության պետերը: Կառույցի մնացյալ անձնակազմի նշանակումը գտնվում է ԱՀԿ-ի ղեկավարի իրավասության ներքո:

ԱՀԿ-ի կենտրոնակայանը գտնվում է Անկարայում, իսկ բոլոր նահանգներում գործում են տարածքային վարչություններ: ԱՀԿ-ում գործում են 6 հիմնական վարչություններ՝ Ռազմավարական վերլուծությունների, Հակահետախուզության, Արտաքին գործողությունների, Անվտանգային հետախուզության, Էլեկտրոնային և տեխնիկական հետախուզության, Ազդանշանային հետախուզության:

Վերջին տարիներին ԱՀԿ-ի բյուջեն շարունակական աճ է գրանցում: Եթե 2010թ. այդ կառույցին պետբյուջեից հատկացվել էր 523 մլն ԹԼ, ապա 2013 թ. այն կազմեց 995 մլն ԹԼ: 2016 թ. ԱՀԿ-ի բյուջեն կազմել է ավելի քան 1 մլրդ 600 մլն ԹԼ, ինչը 36 %-ով ավել է նախորդից: 2006-2016թթ. ԱՀԿ-ի բյուջեն աճել է ավելի քան 419 %-ով: Նման աճի տեմպերը պայմանավորված են այդ կառույցում իրականացվող արդիականացմամբ, կադրային բազայի մեծացմամբ ու նորագույն տեխնոլոգիական միջոցներով համալրմամբ:

ԱՀԿ-ի ընդհանուր անձնակազմի թիվը հասնում է մոտ 8 հազարի, այդ թվում՝ նաև արտերկրում գտնվող գործակալներն ու ներկայացուցիչները: Անձնակազմի մոտ 80 %-ն ունի բարձրագույն կրթություն: Աշխատակիցների մեջ գերակշռում է 26-45 տարիքային խումբը՝ ավելի քան 70 %: Կանանց թիվը ԱՀԿ աշխատակիցների շարքում կազմում է մոտ 18-20 %: ԱՀԿ-ի աշխատակիցներն ու գործակալները հավաքագրվում են Թուրքիայի քաղաքացի հանդիսացող, մինչև 35 տարեկան, օտար լեզուների իմացությամբ, միջնակարգ և բարձրագույն կրթությամբ, բարձր մտավոր ու ֆիզիկական տվյալներ ունեցող քաղաքացիներից: Պահանջվող պայմանները բավարարող և քննական մի քանի էտապները

հաջողությամբ հաղթահարած թեկնածուները 23-24 շաբաթ տևողությամբ գործնական և տեսական ուսուցում են անցնում ԱՀԿ-ի ուսումնական կենտրոնում, որից հետո նշանակվում համապատասխան պաշտոններին:

Ամերիկյան մոդելի օրինակով վերակազմավորումների շրջանակում ԱՀԿ-ի տանիքի ներքո 2012թ-ից գործում է Հետախուզության համակարգման կենտրոնը (*İstihbarat Koordinasyon Merkezi*), որի նպատակը հետախուզական ծառայությունների ու գերատեսչությունների միջև արդյունավետ համագործակցության ու հետախուզական տեղեկատվության համակարգման ապահովումն է: Այն, փաստորեն, երկրի հետախուզական հանրույթի տեղեկատվության համակարգումն ապահովող մարմին է: Կենտրոնը կազմված է ԳՇ-ի, Ժանդարմերիայի, Անվտանգության գլխավոր տնօրինության ու ԱՀԿ-ի կողմից հետախուզության համար պատասխանատու 3-ական ներկայացուցիչներից: ԳՇ-ի, ոստիկանության, ժանդարմերիայի և այլ գերատեսչություններից ստացվող հետախուզական տեղեկատվությունը հավաքվում և գնահատվում է այդ կենտրոնում: Փաստորեն, բոլոր ուժային մարմինների կողմից հետախուզական տեղեկատվության հավաքումն ու փոխանակումն իրականացվում է ԱՀԿ-ի տանիքի ներքո:

ԱՀԿ-ում կառուցվածքային ու գործառութային բարեփոխումներն արդեն իսկ իրողություն դարձան Հ. Ֆիդանի պաշտոնավարման սկզբնական շրջանում: 2010թ. Նոյեմբերին թուրքական ԶԼՄ-ները հրապարակեցին, որ կառավարության գաղտնի որոշմամբ ԱՀԿ-ում կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել: Հատկապես առանձ-

նացվել են ԱՀԿ-ում ներքին հետախուզության ու արտաքին հետախուզության ոլորտները՝ կազմելով համապատասխանաբար Առաջին և Երկրորդ հետախուզությունները: Կազմակերպությունում հետախուզության համար պատասխանատու տեղակալների թիվն ավելացվել է, և հետախուզության ոլորտը համակարգելու են ղեկավարի 2 տեղակալները: Կատարված կառուցվածքային փոփոխություններով ԱՀԿ-ի ղեկավարը նախկին 3 փոխարեն ունենալու է 4 տեղակալ: Ներքին հետախուզության հարցերով պատասխանատու տեղակալը համակարգում է Անվտանգության հետախուզության վարչությունը (*Güvenlik İstihbarat Başkanlığı*) և Հակահետախուզության վարչությունը (*İstihbarata Karşı Koyma Başkanlığı*), իսկ արտաքին հետախոզության հարցերի պատասխանատու տեղակալը՝ Ռազմավարական հետախուզության (*Stratejik İstihbarat Başkanlığı*) և Բաց աղբյուրների վարչությունները (*Açık Kaynaklar Daire Başkanlığı*):

Իրականացված կառուցվածքային այդ բարեփոխումների շրջանակում 2011թ. ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվեց կադրային զինվանագետ, Ճապոնիայում Թուրքիայի դեսպան Աբդուռահման Բիլգիչը, որը պետք է ապահովեր ԱՀԿ-ի ու Արտաքին գործերի նախարարության միջև համագործակցությունն արտաքին հետախուզության ոլորտում:

Գիտահետազոտական ոլորտում աշխատանքներն ակտիվացնելու նպատակով 2011թ. ԱՀԿ-ի ուսումնական կենտրոնի (*Milli Istihbarat Teşkilatı Eğitim Merkezi*) կազմում ստեղծվեց Հետախուզական ուսումնասիրությունների կենտրոն (*Istihbarat araştırmalar merkezi, ISAMER*) անունը կրող

ակադեմիան, որի նպատակը ակադեմիական ուսումնասիրություններն են հետախուզության ոլորտում և անհրաժեշտ նորարարական առաջարկների պատրաստումը:

2014թ. ԹԱՄԺ-ի կողմից «Պետական հետախուզական ծառայությունների և Ազգային հետախուզական կազմակերպության մասին» օրենքում կատարված փոփոխություններով զգալիորեն ընդլայնվեցին ԱՀԿ-ի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հետախուզական գործունեության լիազորությունները: Մասնավորապես՝ օրենսդրական փոփոխություններով ԱՀԿ-ն հատկապես մեծ լիազորություններ ստացավ երկրում ներքին հետախուզական գործունեության ոլորտում, արտաքին ու ներքին գաղտնալսումների, հեռահաղորդակցային միջոցների վերահսկողության իրականացման հարցում դյուրացվեց իրավական ընթացակարգը: ԱՀԿ-ի ծառայողների դեմ հետաքննության մեխանիզմներն էլ ավելի բարդացվեցին: ԱՀԿ-ի ծառայողների դեմ դատական հետաքննության համար պահանջվում է երկրի վարչապետի թույլտվությունը: Ընդլայնվել է ԱՀԿ-ի պարտականությունների շրջանակը՝ ներառելով արտաքին անվտանգության, ազգային անվտանգության, ահաբեկչության, միջազգային հանցավորության դեմ պայքարի և կիբերանվտանգության ոլորտները: Մեծացվել է նաև «Ազգային հետախուզության համակարգող խորհրդի» լիազորությունն ու դերակատարությունը, դրա նկատմամբ երկրի վարչապետի ազդեցությունը, իսկ խորհրդի որոշումները ստացան «պարտադիր» բնույթ: ԱՀԿ-ն օրենսդրական այս նախաձեռնությունը բացատրում էր ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության նոր խնդիրներին ու պահանջներին համահունչ հետա-

խուզական ծառայություն ունենալու հանգամանքով, ինչը հնարավորություն կտար ԱՀԿ-ն վերակազմավորել ժամանակի պահանջներին համահունչ, ապահովել պետական այլ հաստատությունների միջև հետախուզական գործունեության համակարգման և հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացմանը: ԱՀԿ-ի օրենքի լայնամասշտաբ փոփոխությունները, չնայած նշյալ հանգամանքներին, պայմանավորված էին քաղաքական գործոնով, որի հիմքում ընկած էր անվտանգության մյուս մարմինների նկատմամբ ԱՀԿ-ի դերակատարության բարձրացմանն ու լիազորությունների ընդլայնմանը՝ մեծացնելով վարչապետի և կառավարության վերահսկողությունը: ԱՀԿ-ի վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները էականորեն բարձրացնում են այդ կառույցի ինքնուրույնությունն ու նվազեցնում վերահսկելիությունը խորհրդարանի կողմից:

2011թ. սկզբներին վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հանձնարարությամբ աշխատանքներ սկսվեցին ԳՇ-ի Էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը (Genelkurmay Elektronik Sistemler-GES) ԱՀԿ-ի ենթակայությանը կցելու համար: Այդ հրամանատարությունը հանդիսանում է Թուրքիայի ամենահագեցած էլեկտրոնային հետախուզության ու գաղտնալսումների ռազմաբազան և համարվում էր ԳՇ-ի «հետախուզության սիրտը»: Էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը գործում է ԱՀԿ-ի Էլեկտրոնային-տեխնիկական հետախուզության (Elektronik Teknik İstihbarat) վարչության ենթակայության տակ: Սա աննախադեպ քայլ էր, քանի որ ամբողջ բանակի մասշտաբով ամենակարևոր հետախուզական միջոցներից մեկն ուղղակի

դրվում էր ԱՀԿ-ի վերահսկողության տակ, և զինվորականությունը զրկվում էր նման լծակից, որը տարիներ շարունակ կիրառել է նաև քաղաքական նպատակներով: Էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը համալրված է էլեկտրոնային հետախուզության ու գաղտնալսումների համակարգերով, որոնց գործողությունները տարածվում են Բալկաններում, Կովկասում, Մերձավոր Արևելքում: Թուրքիայի տարածքում գործում են հրամանատարության 13 բազաներ: Կենտրոնական-բազան գտնվում է Անկարայի Գյոլբաշը ավանում: Դրանցում ներգրավված են տարածաշրջանային լեզուների իմացությամբ մասնագետներ:

ԱՀԿ-ի կազմում ստեղծվեց նաև նոր ստորաբաժանում, որը պետք է ստանա, համակարգի և վերլուծի ԱԹՍ-ներից ստացված հետախուզական տեղեկատվությունը: Նախկինում սա գտնվում էր բացառապես ԳՇ-ի իրավասության ներքո, և հիմա այն փոխանցվել է ԱՀԿ-ին: Ինչպես Թուրքիայի բանակում առկա «Heron», այնպես էլ մյուս ԱԹՍ-ների հետախուզական պատկերներն ու տեսաձայնագրություններն այսուհետ հավաքվում են նաև ԱՀԿ-ի ներսում: Ավելի ուշ արդեն ԱՀԿ-ն պայմանագիր ստորագրեց թուրքական TÜBİTAK գիտահետազոտական կազմակերպության հետ՝ սեփական կարիքների համար ԱԹՍ-ների արտադրության վերաբերյալ, որոնք կկիրառվեն հետախուզական ոլորտում: Բացի այդ, ԱՀԿ-ի և TÜBİTAK-ի միջև ստորագրվեց մեկ այլ պայմանագիր այդ ընկերության կազմում հետախուզական լաբորատորիայի ստեղծման վերաբերյալ, որտեղ կիրականացվի հետախուզական կառույցների համար անհրաժեշտ հատուկ սարքավորումների արտադրությունը: Շուրջ

220 մլն դոլար արժողության այդ արտադրական փաթեթի ֆինանսավորումն իր վրա վերցրեց Թուրքիայի ՊԱԳՎ-ն: Մեկ այլ հրապարակման համաձայն՝ ԱՀԿ-ի տրամադրության տակ է դրվելու ՌՕՈՒ-ին պատկանող նավ՝ ծովում և ցամաքում հետախուզություն իրականացնելու նպատակով:

ԱՀԿ-ն հատուկ նշանակության ուժերը հավաքագրում են ԳՇ-ի հատուկ նշանակության ուժերի հրամանատարության անձնակազմից, որոնք հայտնի են «Բոսորագույն սաղավարտներ-Bordo bereliler» անվանումով: Հավաքագրումից հետո հատուկ նշանակության զինծառայողներն անցնում են վերապատրաստում արդեն ԱՀԿ-ի ներսում:

ԱՀԿ-ն ակտիվորեն համագործակցում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր կառույցների, հաստատությունների ու անձանց հետ: Բավական մեծ ուշադրություն է դարձվում ԶԼՄ-ների ու հետազոտական տարբեր կառույցների հետ աշխատանքներին:

Ընդհանուր դիտարկումներ՝ մարտունակությունից սպառազինություն

Թուրքական բանակն, իրավամբ, տարածաշրջանի հզոր բանակներից է: Այն մեծ է իր քանակով, տարեցտարի ավելի է զինվում՝ շեշտադրում կատարելով նորագույն զինատեսակների վրա: Թուրքական բանակի ուժեղ կողմերից կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ բանակի սպայակազմի զգալի մասը լավ կրթված է, որոշ մասը փայլուն կրթություն է ստանում նաև արևմտյան ռազմական հաստատություններում: Սակայն, բնականաբար, թուրքական բանակը ևս լրջագույն խնդիրներ ունի: Թուրքական բանակի ամենամեծ խնդիրները բխում են նրա թվաքանակի մեծությունից: Խնդիրը նրանում է, որ ոչ բոլոր երկրները կարող են պահել հսկայական, բայց լավ սպառազինված, պատրաստված ու մարտունակ բանակ: Ինչպես նշեցինք, սպաների մի մասը լավ կրթված են, սակայն այդ նույն սպաներն արդեն ավելի քան 40 տարի է ոչ մի մարտական գործողությունների փորձ չունեն: Հատկապես խոսքը վերաբերվում է լայնածավալ մարտական գործողություններին, որտեղ կիրառվում են մեծ ստորաբաժանումներ: Թուրքական բանակը անգամ մեկ դիվիզիայի կազմով մարտական գործողության իրական փորձ չունի: 1991թ. Ծոցի պատերազմի ժամանակ Թուրքիայի ԳՇ-ը դեմ դուրս եկավ բանակի ծավալուն ներգրավմանը՝ հղում կատարելով այն հանգամանքի վրա, որ անգամ սեփական սահմանների մոտ բանակը ի վիճակի չէ բացազատել, ապահովել և կազմակերպել գործողություններ՝ անգամ 100-150 հազար թվակազմի համար: Ընդհանուր առմամբ, 1990-ականների սկզբներին թուրքական բանակի մարտական պատրաստության ու ռազմական գործողություններ վարելու առումով «ուղենիշային» փորձառություն եղավ ՆԱՏՕ-ի կազմում Ծոցի պատերազմին Թուրքիայի մասնակցությունը: Դեռ պատերազմից առաջ թուրքական ԶՈՒ-ի ԳՇ-ը խիստ զգուշավոր դիրքորոշում որդեգրեց ռազմական գործողություններին Թուրքիայի մասնակցության հարցում: Թուրքական զինվորական վերնախավը բացահայտ կասկածանքով էր վերաբերում իր տարածքներից դուրս ռազմական ուժեր կենտրոնացնելու և պահելու կամ նույնիսկ Իրաքի հետ սահմանին

լայնամասշտաբ արագընթաց, մոբիլ գործողություններ իրականացնելու հնարավորություններին ու կարողություններին: Եվ իրականում, Ծոցի պատերազմը ակնհայտ դարձրեց Թուրքիայի ԶՈՒ-ի ժամանակակից չափորոշիչներով մարտական գործողություններ վարելու անպատրաստությունը: Ընդ որում, այն ՆԱՏՕ-ի եզակի երկրներից էր, եթե ոչ միակը, որը ռազմական գործողությունների առումով չհամապատասխանեց այդ պահանջներին: Փաստորեն, Ծոցի պատերազմում Թուրքիայի մասնակցությունը և զինուժի տեղաշարժը 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումից հետո ամենամեծն էր, ինչն էլ ի ցույց դրեց թուրքական բանակի թերությունները:

Քրդական զինյալների դեմ պայքարն իրենից չի ներկայացնում լայնածավալ մարտական գործողություններ և անգամ այդ իրավիճակում ձեռքբերումները, մեղմ ասած, այնքան էլ փայլուն չեն: Մարտական փորձը բանակների համար չափազանց կարևոր է: Այստեղ հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական բանակը ՆԱՏՕ-ի կազմում ավանդաբար ամենավատ սպառազինությունն է ունեցել: Բավական է նշել, որ մինչև վերջերս թուրքական բանակը հեռահար զենիթահրթիռային համալիրներ չուներ, այն ժամանակ երբ Հոլանդիան նման համալիրներ ստացել է 1990 ականների կեսերին: Թուրքական բանակի հրասայլերի ավելի քան կեսը 1960 ականների ամերիկյան մեքենաներ են մինչև օրս: Բանակի կառուցվածքը մինչև 2010-2012թթ. իրենից ներկայացնում է հին, արդեն վաղուց իրեն չարդարացրած գունդ-դիվիզիա-կորպուս մոդելը, այն ժամանակ, երբ արևմտյան բոլոր բանակները այս ամենից

հրաժարվել էին դեռ 1990 ականներին: Եվրոպական բանակները, որոնք իրենց մակարդակով ու հնարավորություններով թուրքականից ավելի բարձր են, 2011թ. Լիբիական պատերազմում լիարժեք ձախողում կրեցին: Խնդիրը նրանում է, որ այդ բոլոր բանակները առանց ամերիկյան բանակի, որը բոլորի հիմնական մատակարարն է ու կազմակերպիչը, դատապարտված են: Դրանցից ոչ մեկը չկարողացավ ցանցակենտրոն ռազմագործողություն իրականացնել անգամ սահմանափակ տարածքների վրա, փոքր ուժերով: Թուրքական բանակն, իր տեխնիկական հնարավորություններով և փորձով զիջելով անգամ այդ բանակներին, բնականաբար, շատ ավելի համեստ մարտական հնարավորություններ ունի: Ներկայում թուրքական բանակը անցնում է փոխակերպումների լայն գործընթաց կառուցվածքային-կազմակերպչական և սպառազինության առումներով: Դեռևս թուրքական ԶՈՒ-ի կազմակերպման ու կառուցվածքային փոփոխությունների առումով վերջնական կողմնորոշում կամ հստակեցում չկա, և այն գտնվում է դեռ ուսումնասիրությունների դաշտում: 1990-ական թթ. սկսած նոր մարտահրավերների ու սպառնալիքների ի հայտ գալուն զուգահեռ նաև ռազմական ոլորտում սկսվեց հետ-մոդեռնի ժամանակաշրջան, որը կարողացան կյանքի կոչել և նոր իրողություններին համարժեք պաշտպանական ոլորտը արդիականացնել արևմտյան մի շարք երկրներ: Թուրքական բանակն էլ իր հերթին սկսեց արդիականացման ու փոխակերպման մի գործընթաց, որը սակայն մինչև օրս չի ավարտվել և նախնական փուլում է գտնվում:

Բանակների մարտունակության մասին հնարավոր կլինի միայն խոսել ռազմական գործողությունների պարա-

գայում: Ինչ վերաբերում է մամուլում և տարբեր վերլուծականներում թուրքական բանակի՝ տարածաշրջանում ամենամարտունակն ու հզորը հանդիսանալու գնահատականներին, ապա դրա չափումը խիստ հարաբերական է: Թուրքական բանակի հիմնական խնդիրը մնում է զորամիավորումների կառավարման համակարգերի և փորձի հարցը.

- ✓ *թուրքական բանակը արևմտյան բանակների հետևողությամբ հանդիսանալով հանդերձ՝ ունի մեծաքանակ հին սպառազինություն,*
- ✓ *մինչև վերջերս դեռ ուներ գունդ-կորպուս-դիվիզիա կազմի մոդել,*
- ✓ *այն երբեք լայնածավալ մարտական գործողությունների չի մասնակցել, զորամիավորումները իրական բացագատում չեն իրականացրել,*
- ✓ *բարձր սպայակազմը մարտական գործողությունների վարման փորձ չունի,*
- ✓ *բանակը արևմտյան բանակներին հատուկ մարտական գործողություններ վարելու համար թույլ է հագեցած ապահովման և ղեկավարման համակարգերով:*

1974 թ. Կիպրոսի ռազմագործողությունը սահմանափակ էր իր բնույթով ու մասշտաբներով: Հյուսիսային Իրաքում անդրսահմանային գործողությունները ևս չեն կարող տալ թուրքական բանակի մարտական պատրաստության իրական պատկերը, քանի որ դրանք կրում էին սահմանափակ ու անհավասար բնույթ: Ինչ վերաբերում է Թուրքիայի տարածքում քուրդ զինյալների դեմ մոտ 30-ամյա գործողությունների փորձին, ապա, կարելի է նշել բազմաթիվ ձախողումների մասին, իսկ թուրքական բանակի կորուստների թիվը նույնպես խոսուն փաստ է:

Թուրքական բանակը լայնամասշտաբ ռազմական գործողությունների պարագայում անպայմանորեն հաշվի է առնում ՆԱՏՕ-ի իր դաշնակիցների հետ համատեղ գործողությունների անհրաժեշտությունը, այն է՝ թուրքական բանակը դեռևս լայնամասշտաբ ռազմական գործողությունների համար ապավինում է իր դաշնակիցների աջակցությանը՝ թե սպառազինության, և թե կառավարման առումներով:

Իհարկե, թվաքանակի և սպառազինության առումով թուրքական բանակը առաջատար է, սակայն դա դեռ բավական չէ մարտունակության ապահովման համար, որովհետև այն իր մեջ բավական շատ բաղադրիչներ ունի, և թուրքական բանակի հիմնական խնդիրը այսօր էլ մնում է զորամիավորումների կառավարման համակարգերի և փորձի հարցը, որի մասին բարձրաձայնել են մի շարք թուրք զինվորականներ ու փորձագետներ: Այլ խոսքով՝ թուրքական բանակի հզորության կարծրատիպի հիմքում դեռևս ընկած է մեծ թվաքանակը և ՆԱՏՕ-ի անդամ հանդիսանալը:

2014 թ. հոկտեմբերին Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ-ի պետ Ն. Օզելը վարչապետ Դավութօղլուի հավանությանն էր ներկայացրել Թուրքիայի ԶՈՒ-ի զարգացման ռազմավարական պլանը: Թուրքիայի ԶՈւ-ի 2033 պլանները ռազմավարական ծրագիրը նախատեսում է բանակի զարգացման ու վերափոխման երկու հիմնական նպատակային ուղղություն՝ արդյունավետություն և պրոֆեսիոնալիզմ: Ըստ այդ պլանի՝

նախատեսվում է թուրքական բանակը հասցնել պրոֆեսիոնալ բանակի՝ կրճատելով կամ սահմանափակելով ժամկետային զինծառայությունը և էականորեն մեծացնել պրոֆեսիոնալ անձնակազմի մասնաբաժինը: Շատ փորձագետներ, այդ թվում՝ նաև թուրք, հաստատում են, որ թուրքական բանակը ներկայում ավելի շատ հիմնված է քանակի, քան որակի վրա: Իսկ թուրքական բանակի զարգացման այդ պլանն առաջադրվել է, որպեսզի մեծացվի բանակի ոչ միայն կոնվենցիոնալ ու կանոնավոր բանակների դեմ պատերազմի արդյունավետությունը, այլ նաև անհամաչափ ու անկանոն մարտահրավերներին դիմազրավման ունակությունները:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ, ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը

Իրանն իր պաշտպանական ներուժով հանդիսանում է Մերձավոր և Միջին Արևելքի առանցքային դերակատարներից: Իրանի ԶՈՒ-ը համարվում են տարածաշրջանում թվաքանակով ամենամեծերից: Իրանական պաշտպանական համակարգի կառուցվածքային, նորմատիվային առանձնահատկությունները բխում են այդ երկրի կրոնա-քաղաքական համակարգից՝ իրենց վրա կրելով Իսլամական հեղափոխության ուղղակի ազդեցությունն ու գաղափարախոսությունը: Իրանական ԶՈՒ-ի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն կրում է խիստ կրոնական ազդեցություն և համարվում Իսլամական Հեղափոխության պահպանության կարևոր բաղադրիչներից: Այսինքն՝ ԶՈՒ-ը պատասխանատու են նաև երկրի կրոնական կարգի պաշտպանության համար:

Իրանի ժամանակակից ռազմական դոկտրինի ու ԶՈՒ-ի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ իրան-իրաքյան պատերազմը: Ավելի ուշ Իրանի ղեկավարությունը ռազմական դոկտրինի վերասահմանման համար յուրացրեց 2003թ. իրաքյան պատերազմի և 2006թ. Իսրայելի ու Հեզբալլահի միջև պատերազմի դասերը: Ի նկատի ունենալով իրանական բանակի զուտ տեխնոլոգիական առումով զիջելը հիմնական հակառակորդներ ԱՄՆ-ին և Իսրայելին՝ Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմական դոկտրի-

նի հիմքում է դրել անհամաչափ պատասխանի և գործողությունների ռազմավարությունը: Անհամաչափ ռազմավարության հիմքում ընկած է առաջին հերթին մարդկային ու նյութական հսկայական ռեսուրսների միջոցով ռազմական գործողությունների, ինչպես նաև հարակից տարածաշրջաններում իր հակառակորդների համար զգայուն հիմնախնդիրների հարցում առավելություն ապահովելու մարտավարությունը: Իրանը, գիտակցելով դասական պատերազմում իր դիրքերի թուլությունն առաջին հերթին ԱՄՆ-ի հետ, ռազմական դոկտրինի հիմքում է դրել իր հարակից տարածաշրջաններում ամերիկյան ենթակառուցվածքների չեզոքացման, վնաս հասցնելու, կոնֆլիկտային իրավիճակների հրահրման ու տարածաշրջանում կրոնական-շիայական գործոնի ակտիվացման ռազմավարությունը: Ռազմական դոկտրինում մեծ տեղ է տրված տոտալ միբիլիզացիոն հնարավորություններին ու կրոնական մարտիրոսությանը: Շիայական իսլամում առանձնահատուկ տեղ ունի մարտիրոսության գաղափարը և քանի որ ԶՈՒ-ը կրում են կրոնական գաղափարախոսության ուժեղ ազդեցությունն ու կրոնական համակարգի պաշտպանության պատասխանատվություն, այն էականորեն մեծացնում է համընդհանուր մոբիլիզացիոն հնարավորությունները:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ որպես թեոկրատական պետություն՝ երկրի ԶՈՒ-ի գերագույն գլխավոր հրամանատարը հոգևոր առաջնորդն է, ում իրավասությանն է պատկանում պատերազմի հայտարարումը, մոբիլիզացիան և խաղաղության կնքումը: Նա է նշանակում և ազատում ԶՈՒ-ի միացյալ գլխավոր շտաբի պետին, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (այսուհետ՝ ԻՀՊԿ), ԶՈՒ-ի զորատեսակների և ներքին զորքերի հրամանատարներին:

Սահմանադրության 143-151-րդ հոդվածները վերաբերում են ԻՀՊԿ-ի և բանակի կարգավիճակին ու պարտականություններին: Բանակը կոչված է պաշտպանելու երկրի անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու պետության իսլամական կարգը: 144-րդ հոդվածը սահմանում է, որ բանակում կարող են լինել նրանք, ովքեր պատրաստ են անձնազոհության և նվիրված են իսլամական հեղափոխության նպատակներին: 146-րդ հոդվածն արգելում է ընդհանրապես երկրի տարածքում օտարերկրյա ռազմաբազաների գոյությունը նույնիսկ խաղաղ ժամանակներում: ԻՀՊԿ-ն, որն ստեղծվել է իսլամական հեղափոխության հաղթանակի առաջին օրերին, Սահմանադրության 150-րդ հոդվածի համաձայն՝ կոչված է իրականացնելու իսլամական հեղափոխության պահպանությունը: Դրա լիազորություններն ու բանակի հետ փոխհարաբերությունները կարգավորվում են հատուկ օրենքով: Կառավարությունը պարտավոր է քայլեր ձեռնարկել և պլան մշակել իսլամական սկզբունքներին ու նորմերին համապատասխան բոլոր քաղաքացիների համար ռազմական պատրաստություն անցկացնելու ուղղությամբ, որպեսզի նրանք մշտապես պատրաստ լինեն երկրի և իսլամական կարգերի զինված պաշտպանությանը:

Երկրի պաշտպանության ու անվտանգության ոլորտում ընդհանուր քաղաքականության մշակումն իրականացվում է Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի

կողմից՝ որպես ռազմաքաղաքական բարձրագույն խորհրդատվական մարմին: Համաձայն Սահմանադրության 176-րդ հոդվածի՝ Խորհրդի պարտականությունը երկրի ազգային շահերի ու Իսլամական հեղափոխության, տարածքային ամբողջականության ու ազգային ինքնիշխանության ապահովումն է: Այն գործում է երկրի նախագահի ղեկավարությամբ, որի պարտականություններն են՝

- *պաշտպանության ու անվտանգության ոլորտում քաղաքականության սահմանումը երկրի հոգևոր առաջնորդի կողմից ուղեկցված ընդհանուր քաղաքական ուղեգծի շրջանակում,*
- *պաշտպանության ու անվտանգության ոլորտում ձեռնարկվող միջոցառումների հետ քաղաքական, տեղեկատվական, սոցիալական, մշակութային ու տնտեսական ոլորտի գործունեության համապատասխանեցումը,*
- *երկրի նյութական ու մտավոր ռեսուրսների գործադրումը պետության ներքին ու արտաքին սպառնալիքների չեզոքացման համար:*

Խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում երկրի հոգևոր առաջնորդի կողմից դրանց հաստատման պահից: Խորհրդի աշխատանքների համակարգումն իրականացնում է քարտուղարը: Խորհրդի կազմում գործում են երկու կոմիտեներ՝ անվտանգության և պաշտպանության, որոնք հանդիսանում են այդ ոլորտներում իրավասու խորհրդատվական մարմիններ:

Իրան-Իրաքյան պատերազմի փորձառության հաշվառմամբ՝ Իրանի անվտանգության ու պաշտպանության համակարգում կանոնավոր բանակի և ԻՀՊԿ-ի միջև փոխհամագործակցությունն ու համակարգումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով 1988 թ. ստեղծվեց Միացյալ ԶՈՒ-ի գլխավոր շտաբը, իսկ 1989 թ. Պաշտպանության և զինված ուժերի աջակցման նախարարությունը: Ներկայում ԻՀՊԿ-ն բանակի հետ միասին գտնվում է Միացյալ ԶՈՒ-ի գլխավոր շտաբի միացյալ հրամանատարության ու օպերատիվ կառավարման ներքո:

Ստորև ներկայացված է Իրանի պաշտպանական համակարգի կառուցվածքը՝



Չնայած այս քայլերին որոնք շատ անհրաժեշտ էին, ամեն դեպքում բանակի այս երկատումը և ԻՀՊԿ-ին նման մեծ արտոնությունների տրամադրումը պատերազմի ժամանակ կարող է մեծ խնդիրների բերել: Փաստորեն, այն ունի ավելի մեծ ու ավելի էլիտար բանակի ստատուս, ավելի մեծ բյուջեյով: Պատերազմների փորձը ցույց է տվել, որ ամենաէլիտար ստորաբաժանումները և զորատեսակները չպետք է լինեն քանակով շատ մեծ, դրանց ուժը կայանում է նրանում, որ նրանք պետք է լինեն քանակով քիչ, բացառիկ պատրաստությամբ ու լիազորություններով, ենթարկվեն ավելի բարձր հրամանատարության: Իրանում ստեղծվել է մի իրավիճակ, երբ բանակը երկատված է, սովորական ԶՈՒ-և իրենց ուժերով մեծ են, սակայն քիչ են զերազանցում ԻՀՊԿ-ին, որը ավելի մեծ հեղինակություն, միջոցներ և որոշումների իրավունքներ ունի, նույն ժամանակ զուտ հատուկ զործողություններ չի իրականացնում: Այն ունի իր առանձին ցամաքային ուժերը և այլն: Ազգային գվարդիաների, էլիտար դիվիզիաների և զորատեսակների պատմությունը ցույց է տվել, որ դրանք պետք է լինեն քանակով փոքր և ողջ բանակի համար ձգտելու առարկա, կատարեն նեղ մասնագիտական խնդիրներ: Իրանական բանակի ամենաուժեղ կողմը զորքի ոգին ու պատրաստությունն է, որը նման երկատման արդյունքում կարող է չեզոքացվել հզոր հակառակորդի հետ բախման պարագայում:

2016թ. հունվարին իրանական ԶԼՄ-ները հրապարակեցին, որ Իրանի նախագահ Հ. Ռուհանիի կողմից երկրի խորհրդարանին ներկայացված զեկույցի համաձայն՝ նախատեսվում է կրճատել ԻՀՊԿ-ի գլխավոր շտաբի ծախսերը, փոխարենն ավելացնելով բանակի զորքի տեսակների ու զորատեսակների ծախսերը: Ամենայն հավանականությամբ, Իրանի իշխանությունները, վերազնահատելով իրանական ԶՈՒ-ի երկատման հնարավոր բացասական կողմերը, քայլեր են ձեռնարկում պաշտպանական համակարգում արդիական վերակառուցումների ու բարեփոխումների ուղղությամբ:

Սիրիական պատերազմը, որտեղ որոշ տեղեկություններով լայնորեն ներգրավված հենց ԻՀՊԿ-ստորաբաժանումները, ցույց տվեց, որ դրանք հերոսաբար են կռվում, անձնազոհ են, կարգապահ, սակայն ժամանակակից պատերազմների մեծ փորձ չունեն և տեխնիկապես էլ վատ են ապահովված: Մի քանի բարձրաստիճան սպաներ են արդեն զոհվել Սիրիայում մշտապես գտնվելով առաջնագծում և կատարելով բարդ մարտական խնդիրներ:

Հեղինակավոր «The Military Balance 2015» տարեգրքի տվյալներով՝ Իրանի ԶՈՒ-ի ընդհանուր թվաքանակը գնահատվում է 523 հազար՝ ներառյալ ԻՀՊԿ-ի զորատեսակները: Մշտական պահեստազորի թվաքանակը կազմում է շուրջ 350 հազար:

Քանի որ Իրանը չի ներկայացնում ռազմական բյուջեի վերաբերյալ պաշտոնական տվյալներ, դրանք հիմնված են փորձագիտական գնահատականների վրա: Ըստ «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի» (IISS) 2011թ. գնահատականների՝ Իրանի ռազմական ծախսերը կազմել են մոտ 12 մլրդ ԱՄՆ դոլար: «Ստոկհոլմի միջազգային խաղաղության ուսումնասիրությունների ինստիտուտի» (SIPRI) տվյալներով՝ Իրանի ռազմական ծախսերը 2012թ. կազմել են շուրջ 12.7 մլրդ դոլար, ինչը կազմել է պե-

տական բյուջեից ծախսերի մոտ 14.9 %-ը: Սակայն հստակ չէ, թե այդ ծախսերը բաժին են ընկնում ամբողջ պաշտպանական համակարգին ու անվտանգության մարմիններին, թե միայն ԶՈՒ-ին:

2012թ. փետրվարին Իրանի նախագահ Մ. Ահմադինեժադը հայտարարեց, որ 2012թ. ռազմական բյուջեն կրկնապատկվել է: Այսինքն՝ 2011թ. ռազմական բյուջեի թիվը դիտարկելու պարագայում ստացվում է 24 մլրդ, ինչն աննախադեպ մեծ է, և շատ փորձագետներ կասկածի տակ են դնում Իրանի կողմից ռազմական ոլորտին նման չափով գումար հատկացնելու հավանականությունը: «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի» դիտարկմամբ՝ բյուջետային նման մեծ ծավալը պայմանավորված է ոչ թե ուղղակի ռազմական ծախսերի աճով, այլ տարբեր բյուջետային հատկացումները ռազմական բյուջեի մեջ ներառելու հանգամանքով: Ըստ այդ գնահատականների՝ ռազմական բյուջեի մոտ 50 տոկոսը վերապահված է պաշտպանական ոլորտում սոցիալական ապահովության ծախսերին և այլ նախագծերին, որոնց մասնաբաժինն էականորեն մեծ է: Ուստի, առավել իրատեսական է համարվում 12 մլրդ-ի հասնող ռազմական բյուջեն: Նաև պետք է հաշվի առնել իրանական արժույթի արժեզրկման հանգամանքը:

Ամերիկյան հեղինակավոր «Մերձավոր Արևելքի ինստիտուտի» համաձայն՝ ռազմական բյուջեից ԻՀՊԿ-ին և բանակին հատկացումների մեջ կա անհավասարակշռության՝ չնայած, որ բանակն իր թվաքանակով ավելի մեծ է: Այսպես՝ 2010-2011 թթ. պետական բյուջեից ԻՀՊԿ-ին հատկացումները կազմել էին 5.8 մլրդ դոլար, իսկ բանակին՝ 4.8

մլրդ: 2011-2012 թթ. պետական բյուջեից նախատեսված 11.9 մլրդ արժեքով ռազմական բյուջեից ԻՀՊԿ-ին հատկացվել էր 8.9 մլրդ, իսկ բանակին՝ 2.5 մլրդ դոլար:

Ռազմակրթական համակարգը և ԶՈՒ-ի համալրումը

ԶՈՒ-ի համալրումն իրականացվում է համընդհանուր զորակոչի, պայմանագրային ու կամավորական սկզբունքով: Իրանում գործում է համընդհանուր զինապարտության սկզբունքը: Համաձայն 1984թ. օրենքի՝ արական սեռի 18 տարին լրացած անձինք պարտավոր են անցնել պարտադիր զինվորական ժամկետային ծառայություն: Ծառայության ժամկետն ամեն տարի հաստատվում է օրենքով՝ կախված ԶՈՒ-ի կարիքներից: Զինվորական ժամկետային ծառայությունը 2015թ. սկզբի դրությամբ կազմում էր 21 ամիս: Պատերազմական իրավիճակում բանակ զորակոչման կարող են կանչվել երկրի արական սեռի 19-60 տարեկան քաղաքացիները, իսկ խաղաղ պայմաններում 19-50 տարեկանները: Կամավորության սկզբունքով զինվորական ծառայության կարող են անցնել նաև 16 տարին լրացած քաղաքացիները՝ հիմնականում ԻՀՊԿ-ում:

Զորակոչից հետո ժամկետային զինծառայողները մոտ 2 ամիս տևողությամբ անցնում են նախնական զինվորական պատրաստություն: Տարբեր զորատեսակներում գործում են նման ուսումնական կենտրոններ, որից հետո ծառայության են անցնում տարբեր զորատեսակներում:

Սպայական կադրերի պատրաստումն իրականացվում է բանակի և ԻՀՊԿ-ի ռազմական ուսումնարանների ու հաստատությունների, հրամանատարաշտաբային վարժարանների միջոցով՝ ըստ առանձին զորատեսակների: Դրանցից են Ազգային պաշտպանական համալսարանը, Շահիդ Սաթթարի անվան բարձրագույն ռազմաօդային ուսումնարանը, Իմամ Խոմեյնիի անվան բարձրագույն ռազմածովային ուսումնարանը, ԻՀՊԿ-ի Իմամ Հուսեյնի անվան ռազմական համալսարանը և Էմամ Ալիի անվան սպայական համալսարանը: Կրտսեր սպայական կադրերի պատրաստումն իրականացվում է բանակի և ԻՀՊԿ-ի ռազմական ուսումնարաններում տարբեր զորատեսակների գծով: Կուրսանտների ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով մինչև 22 տարեկանների համար: Ուսումնառությունից հետո նրանք ստանում են լեյտենենտի զինվորական աստիճան և ծառայության անցնում համապատասխան զորատեսակներում:

Շահիդ Սաթթարի անվան բարձրագույն ռազմաօդային ուսումնարանը հիմնական ռազմաուսումնական հաստատությունն է, որում կադրեր են պատրաստվում ռազմական ավիացիայի համար: Ուսման տևողությունը 4-5 տարի է՝ ըստ ընտրված մասնագիտության:

Իմամ Խոմեյնիի անվան բարձրագույն ռազմածովային ուսումնարանը միակ բարձրագույն ռազմական հաստատությունն է, որն իրականացնում է ռազմածովային ուժերի սպայական կադրերի պատրաստումն ու նաև քաղաքացիական հատվածի աշխատակիցների վերապատրաստումը, որոնք գործում են նավագնացության ու ծովային հաղորդակցության ոլորտում: Ուսումնառությունը 4.5-5 տարի է:

ԻՀՊԿ-ի սպայական կադրերով ու ծառայողներով համալրելու գործում մեծ կարևորություն ունի Իմամ Հուսեյնի անվան համալսարանը, որը հանդիսանում է ԻՀՊԿ-ի և ժողովրդական աշխարհազորի՝ Բասիջի, սպայական կադրերի պատրաստման հիմնական դարբնոցը: Դրանում մեծ տեղ է հատկացվում նաև կրոնա-գաղափարական պատրաստությանը:

Սպայական դասը ծառայության ընթացքում առաջխաղացման ու կատարելագործման համար անցնում է վեց ամսյա պատրաստական սպայական հատուկ կուրսեր: Ավագ սպայական կազմի վերապատրաստումն իրականացվում է Շտաբի և հրամանատարության համալսարանում (ԴԱՖՈՒՍ): Այն վերակազմավորվել է 1990 թ. ցամաքային, օդային ու ռազմածովային քոլեջների վերամիավորման արդյունքում: Ուսման տևողությունը 9 ամիս է:

Ազգային պաշտպանության ակադեմիան իրականացնում է բարձրագույն սպայական կազմի ու պետական կառավարման համակարգի ծառայողների վերապատրաստումը, կատարում հետազոտական աշխատանքներ ազգային անվտանգության ու պաշտպանության ոլորտներում: Ուսումնառության տևողությունը կազմում է մինչև 1 տարի:

Բանակը և ԻՀՊԿ-ը

Իրանի ԶՈՒ-ի զարգացման առումով էական հարված հասցվեց Իսլամական հեղափոխությունից հետո և իրաք-իրանյան հյուծիչ պատերազմի պատճառով: Նախ, իրանա-

կան բանակը Արևմուտքի կողմից կիրառվող արգելանքների պատճառով մինչ օրս զրկված է ժամանակակից ռազմական տեխնոլոգիաների ձեռքբերման հնարավորությունից: Մյուս կողմից՝ Իսլամական հեղափոխությունից հետո իրականացված ռազմական վերակազմավորումները բացասաբար անդրադարձան միասնական ռազմական համակարգի վրա: Իրանական բանակի հրամանատարության նկատմամբ իրականացված գործողություններն էականորեն զրկեցին բանակին կաղրային բարձրագույն հրամկազմից, ինչն էլ բացասաբար անդրադարձավ նաև բանակի ընդհանուր մարտունակության վրա: Մյուս կողմից էլ՝ ռազմական համակարգի մասնատվածությունն էր լուրջ խնդիրներ առաջացնում միասնական պաշտպանական համակարգի տեսանկյունից: Հեղափոխությունից հետո ստեղծված ԻՀՊԿ-ին ավելի մեծ դերակատարություն ու նշանակություն էր տրվում, քան բանակին և այդ մասնատվածությունն ու նաև հետագայում մրցակցությունն իր բացասական ազդեցությունը թողեց իրանական ԶՈՒ-ի միասնական համակարգի համար: Արևմտյան շատ վերլուծաբաններ գտնում են, որ ԻՀՊԿ-ին ավելի մեծ դերակատարություն էր տրվում, իսկ բանակին ավելի երկրորդային տեղ էր հատկացվում: Ժամանակի ընթացքում ԻՀՊԿ-ն լուրջ զարգացում գրանցեց, այդուհանդերձ, ընդհանուր ԶՈՒ-ի՝ երկու մասի բաժանումը զուտ ռազմական տեսանկյունից բացասական գործոն է մարտունակության համար:

«Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի»՝ «The Military Balance 2015» տարեգրքի տվյալներով՝ բանակի թվաքանակը կազմում է մոտ 350 հազար, ԻՀՊԿ-ինը՝ մոտ 125 հազար: Բասիջ ժողովրդական աշխարհազորի մոբիլիզացիոն թիվը հասնում է 1 միլիոնի: Իրանական աղբյուրները պնդում են մինչև 12 միլիոնանոց անդամ ունենալու հանգամանքը: Սակայն, կարծում ենք, դա չափազանցություն է, կամ ներառում է ամբողջ պահեստազորային ներուժը՝ գումարած անչափահասների այն քանակը, որոնք դպրոցական տարիքից անդամագրվում են և վարժանքներ անցնում:

Բանակի ցամաքային ուժերը բաժանված են կորպուսի կարգավիճակով 5 հիմնական տարածքային հրամանատարությունների, որոնք իրականացնում են տարածքային բաժանմամբ երկրի պաշտպանությունը: Զորամիավորումների հիմնական մասը կենտրոնացված է հատկապես երկրի արևմտյան հատվածում: ՑՈՒ-ի կազմում կա՝

4 զրահատանկային դիվիզիա
2 մեխանիզացված դիվիզիա
4 հետևակային դիվիզիա
1 կոմանդոս դիվիզիա
7 զրահատանկային բրիգադ
17 մեխանիզացված բրիգադ
12 հետևակային բրիգադ
7 կոմանդոս և 1 հատուկ նշանակության բրիգադ
1 օդադեսանտային բրիգադ
4 հարվածային-դեսանտային բրիգադ
5 հրետանային և մի քանի ավիացիոն խմբավորում:

ՑՈՒ-ը զինված են բավական խառը սպառազինությամբ, ինչպես արևմտյան արտադրության, այնպես էլ՝ խորհրդային: Դրանք հիմնականում անցած դարի կեսերի արտադ-

ության զենքեր են: Առհասարակ իրանական ՋՈՒ-ի ամենակարևոր խնդիրներից է հնացած սպառազինությունը բոլոր զորատեսակներում:

Ընդհանուր առմամբ բանակը սպառազինված է ավելի քան 2000 հրասայլով, որոնց մեջ կան և՛ հին՝ ամերիկյան, անգլիական, խորհրդային, չինական մեքենաներ, և՛ համեմատաբար ժամանակակից խորհրդային մեքենաներ: Քիչ քանակությամբ կան նաև Իրանի սեփական արտադրանք համարվող «Zulfiqar» կամ «Zolfaqar», «Safir-74» և թեթև «Tosan» ու այլ հրասայլեր: Դրանցից առաջինները հիմնականում խորհրդային հրասայլերի ձևափոխված տեղայնացումներն են, որոնց վրա տեղադրվել են նաև այլ երկրների սարքավորումներ, ինչպես նաև սեփական արտադրության բաղկամասեր: Զրահատանկային զորքերի մարտունակության և տեխնիկական վիճակի մասին տեղեկությունները սակավ են, չնայած իրան-իրաքյան պատերազմի ժամանակ լավ փորձ ձեռք բերեցին: 2015թ. Իրանի և Արևմուտքի միջև հարաբերությունների, որոշակի ջերմացումից հետո տեղեկություններ հայտնվեցին, որ Իրանը ցանկանում է նոր զենքեր գնել տարբեր երկրներից, այդ թվում՝ ռուսական նոր հրասայլեր:

Իրանական մեքենաներն ավելի շատ մարտական զրահապատ մեքենաներ են: Բանակում կան ավելի քան 1000 այլ զրահամեքենաներ, ավելի քան 2000 հրետանային քարշարկվող միջոց, 300-ից ավելի ինքնագնաց մեքենա և ավելի քան 800 ռեակտիվ հրետանային միջոց: Իհարկե, բոլոր այս միջոցները գերժամանակակից չեն, սակայն անհուսալիորեն հնացած էլ չեն:

Բանակի ՌՕՈՒ-ը, ըստ երկրի տարածքային սկզբունքի, բաժանվում են պաշտպանական 3 գոտիների ու հրամանատարությունների՝ Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային: Անձնակազմի թվաքանակը գնահատվում է մոտ 30 հազար:

ՌՕՈՒ-ի կազմում կա՝

5 կործանիչային էսկադրիլիա
10 մարտավարական (բազմանպատակ) էսկադրիլիա
1 ծովային հետախուզության էսկադրիլիա
1 օդային հետախուզության էսկադրիլիա
1 օդային լիցքավորման էսկադրիլիա
5 տրանսպորտային էսկադրիլիա
4 ուսումնական էսկադրիլիա
1 ուղղաթիռային-տրանսպորտային էսկադրիլիա
առանձին որոնողա-փրկարարական ուղղաթիռային ստորաբաժանում:

Իրանի ՌՕՈՒ-ը բավական խայտաբղետ են: Սպառազինության մեջ են գտնվում 60-ական միավորին մոտ խորհրդային «МиГ-29», ամերիկյան «F-4», «F-5», «F-14A» և չինական ընդօրինակման խորհրդային «F-7M» կործանիչներ: Կան նաև այլ սահմանափակ քանակով խորհրդային «Су-20», «Су-24» և «Су-25» տիպի, ինչպես նաև այլ հետախուզական, տրանսպորտային, ուսումնական ինքնաթիռներ: Այլ գնահատականներով՝ ինքնաթիռների քանակը բավական պակաս է: Ուղղաթիռների ընդհանուր քանակն անցնում է 600-ից, դրանցից մարտական-հարվածային են մոտ 100-ը:

Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ իրանական ՌՕՈւ-ի օդաչուները, չնայած նրան, որ զորատեսակը բազում տեխնիկական խնդիրներ ուներ, իրենց դրսևորել են լավ կողմերով: Կատարվել են բազում բացառիկ մարտական թռիչքներ, որոնց արդյունքում խոցվել են հակառակորդի տասնյակ թռչող սարքեր և բազում ցամաքային նշանակետեր: Արժանահիշատակ են 1980 թ. նոյեմբերի 28-ի և 1981թ. ապրիլի 4-ի մարտերը: Առաջինը կոչվում էր «Մորվարիդ» ռազմագործողություն, որի ժամանակ իրանական ՌԾՈւ-ը և ՌՕՈւ-ը համատեղ փայլուն ռազմագործողություն իրականացրեցին Բասրայի շրջակայքում: Մի քանի րոպեների ընթացքում իրանական բանակը կորցնելով մեկ նավակ և մեկ կործանիչ ոչնչացրեց իրաքյան մի քանի մեծ նավթային աշտարակ ու պահեստարան, յոթ հրթիռային նավակ, յոթ կործանիչ և մեկ ուղղաթիռ: Իրանյան ԹՍ-ները ամերիկյան հրթիռներ էին արձակում լազերային ուղղորդմամբ և վարում հստակ ղեկավարվող բարձրակարգ մարտ: Երկրորդ դեպքում իրանական ՌՕՈւ-ն օդային հուժկու հարված հասցրեց իրաքյան ամենահեռավոր ավիաբազաներից մեկին: Այն իր բնույթով ու իրականացման բարդությամբ ամենազարմանալիներից է օդային հակամարտության ամբողջ պատմության ընթացքում: Իրանի ՌՕՈւ-ի 8 միավոր «F-4» կործանիչ, օդ բարձրանալով իրանական Թավրիզի օդային բազայից, նախ թռան դեպի թուրքական սահման, այնուհետև սահմանի երկայնքով ուղղվեցին դեպի Սիրիա, այնտեղից՝ հարավ:

Մարտական կործանիչներն օդում վերալիցքավորվում էին, քանի որ թռիչքի հեռավորությունը ավելի քան 1500 կմ էր: Դրա համար նույնիսկ լիցքավորող երկու ինքնաթիռ

ուղարկվեց սիրիական բազաներ: Կործանիչներն օդում ղեկավարվում էին օդային ղեկավարման կետ հանդիսացող ինքնաթիռով: Այն կարողանում էր անվտանգ հեռավորությունից ղեկավարել գործողությունները: Իրանյան հարվածային խումբը, խուսափելով իրաքյան ՀՕՊ միջոցներից ու կործանիչներից, «H3» (Ալ Վալիդ) ռազմաբազա հասավ ճիշտ ժամանակին և հարված հասցրեց: Ռմբակոծությունն իրաքյան ՌՕՈւ-ի համար անակնկալ էր ու բավականին արդյունավետ: Միևնույն ժամանակ այլ կործանիչներով լարում առաջացնելով Քիրքուկի և Բաղդադի ուղղությամբ՝ իրանյան կործանիչները շեղեցին իրաքյան ՀՕՊ-ի և կործանիչների ուշադրությունը: Տարբեր տեղեկություններով ավիահարվածի հետևանքով ոչնչացվեց իրաքյան մոտավորապես 45 ինքնաթիռ: Ամերիկյան տեղեկություններով ոչնչացվել է 27 և վնասվել 11 ԹՍ: Իրաքը այս տեղեկությունները հերքում է. ավելին՝ պնդում, որ վնասներ է պատճառել: Սակայն իր բնույթով և, այսպես ասած, կատարողականությամբ սա պատմության բացառիկ ռազմագործողություններից է: Զարմանալի է նաև այն հանգամանքը, որ մինչ օրս որոշ քանակության ամերիկյան կործանիչներ դեռ մարտական կիրառության մեջ են: Վերջերս ռուսական կայքերից մեկը հրապարակել էր լուսանկարներ, որտեղ հստակ երևում էին Իրանի տարածքով թռչող ռուսական ինքնաթիռներին, ռմբակոծիչներին ուղեկցող «F-4» և «F-14A» կործանիչները՝ ամբողջությամբ սպառազինված: Թե դրանք որքանով էին մարտունակ, դժվար է հստակ բան ասել, սակայն արտաքնապես գտնվում էին լավ վիճակում: Բացի այդ, հայտարարություն է եղել նաև այն մասին, որ մի քանի տարի ընդմիջումից

հետո նորից օդ են բարձրացել «МиГ-29» կործանիչները, որոնք վերանորոգվել են իրանցի մասնագետների կողմից:

ՌՕՈւ-ն ունեն ՀՕՊ զարգացած համակարգ: Այն կառուցված է տարածքային-թիրախային սկզբունքով: ՀՕՊ խմբավորումները կենտրոնացած են կարևորագույն ռազմավարական օբյեկտների շրջաններում: Իրանի տարածքը բաժանված է ՀՕՊ 5 շրջանների, որոնք գտնվում են ՀՕՊ պաշտպանության ու դիտարկման տիրույթում.

1. հյուսիս-արևելյան (մայրաքաղաք Թեհրան, Կասպից ծովի հարավային շրջան, Աֆղանստանի հետ սահման),

2. հյուսիս-արևմտյան (Հարավկովկասյան տարածաշրջան, Թուրքիայի հետ սահմանային հատված, Իրաքի հյուսիսային հատված),

3. հարավ-արևմտյան (Իրաք, Քուվեյթ, Սաուդյան Արաբիայի հյուսիսային հատված, Պարսից ծոցի ջրային տարածքներ),

4. հարավային (Պարսից և Օմանի ծոցերի ջրային տարածքներ, նեղուցների գոտի, Կատար, Քուվեյթ, Արաբական Միացյալ Էմիրություններ),

5. հարավ-արևելյան (Աֆղանստանի և Պակիստանի հետ սահմանային տարածքներ):

ՌՕՈւ-ի կազմում գտնվող ՀՕՊ հրամանատարության ենթակայության տակ է գտնվում 16 գումարտակ ամերիկյան I-HAWK ԶՀՀ և 5 էսկադրիլիա կազմող այլ ՀՕՊ միջոցներ (FM-80, Rapier, Tigercat, C-75M, C-200, FIM-92A Stinger, Стрела-2, Тор-М1):

Ինչպես նշվել է, իրանական ՀՕՊ ուժերը խայտաբղետ են ու նաև հին սպառազինությամբ: Դրանք սպառազինված

են ամերիկյան և խորհրդային ինչպես հին, այնպես էլ նոր զենիթահրթիռային համալիրներով: Իրանը մշտապես փորձում է իր ուժերը համալրել նոր համալիրներով, սակայն դա այնքան էլ հեշտ չի ստացվում: Վիճահարույց հարցեր էին առաջացել ռուսական «С-300» համալիրների մատակարարման հետ կապված: Ըստ մամուլի տեղեկությունների՝ այդ համալիրների որոշ բաղկամասեր մատակարարվել էին, չնայած, ավելի ուշ ռուսական կողմը հրաժարվել էր մատակարարումից, սակայն Իրանում կայացած զորահանդեսների ժամանակ ցուցադրում են համալիրներ, որոնք շատ նման էին ռուսական «С-300»-ներին: Հավանաբար դրանք ռուսական համալիրի չինական նմանակներն են եղել (կոչվում են HQ9) կամ արդեն տեղայնացված իրանական նմուշները: Ռուսական կողմի մատակարարման մերժումից հետո Իրանի ղեկավարությունը հայտարարեց, որ պետությունը կստեղծի սեփական համալիրներ, ինչը նույնպես վկայում է Չինաստանի հետ այդ ոլորտում համագործակցության մասին: Ընդհանրապես իրանական ռազմաարդյունաբերական համալիրը լավ կապեր ունի չինականի հետ: Ռուսական համալիրների մատակարարման հարցը երկար ժամանակ գտնվում էր միջազգային դատարանում, իսկ ռուսական կողմը պատրաստակամություն էր հայտնում այլ մակնիշի համալիր մատակարարել: ԱՄՆ-ի կողմից այդ արգելքի վերացումից հետո՝ 2015թ. վերջին, լուրեր հայտնվեցին այն մասին, որ կողմերը եկել են համաձայնության և ռուսական կողմը սկսել է այդ համալիրների մատակարարումը: Ռուս-վրացական պատերազմից հետո «Wikileaks» կայքի հրապարակումներից հետո հայտնի էր դարձել, որ ռուսական կողմը վրացական բանա-

կում եղած իսրայելական համալիրների գաղտնագրերը ստանալու դիմաց Իսրայելին է հանձնել իրանական ԶՈՒ-ում եղած «Top-M1»-երի գաղտնագրերը:

Իրանական ռազմաարդյունաբերության մակարդակն օր-օրի աճում է: Արտադրվում են ինքնաձիգներից մինչև բալիստիկ հրթիռներ ու կործանիչ ինքնաթիռներ:

Մամուլում իրանական հրթիռների կամ այլ զինտեխնիկայի մասին ավելի ու ավելի հաճախ հանդիպող նորություններն արդեն չեն զարմացնում: Գրեթե ամեն ամիս տեղեկություններ են հայտնվում նոր հակատանկային, բալիստիկ կամ այլ տեսակի հրթիռների, զինատեխնիկայի, ինչպես նաև անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) ստեղծման ու փորձարկման մասին:

Բավական հետաքրքիր ձեռքբերումներ է արձանագրում իրանական ինքնաթիռաշինությունը: Արդեն ստեղծվել է «Tazarv» ուսումնամարտական ինքնաթիռը, բացի այդ Իրանում ամերիկյան «F-5» կործանիչի հիման վրա նախագծվել են սեփական «Saegheh» կործանիչը, այս փաստն էլ Իրանին դարձրեց զերձայնային կործանիչներ արտադրող երկիր: Այդուհանդերձ, պետք է նշել, որ իրանական ինքնաթիռաշինության ամենահետաքրքիր նախագիծը «Shafagh» կործանիչն է, որը դեռևս ընթացքի մեջ է: Կործանիչի նախագծով զբաղվում է «Iran Aircraft Manufacturing Company» (HESA) ընկերությունը, որն արդեն որոշակի փորձ ունի այս գործում: Նման ինքնաթիռի ստեղծումը բավական բարդ գործ է, մասնագետներն օգտվում են ռուսական և մասնավորապես չինական տեխնոլոգիաներից: Հետաքրքիր տեղեկություններ են շրջանառվում իրանական անտեսանելի «Sofreh Mahi»

ինքնաթիռի մասին: 2013թ. սկզբին հանրության դատին ներկայացվեց «Ղահեր 313» անունը կրող մի մեքենա, որն անգամ թռիչք կատարեց: Սակայն դիտարկելով այդ կործանիչի արտաքին տեսքը պարզ է դառնում, որ այն կամ իրական չէ, այսինքն վերապատրաստված է ԱԹՍ-ի հիմքից, կամ ունի շատ սահմանափակ հնարավորություններ: Չնայած այդ ամենին ակնհայտ էին, որոշակի գծեր արևմտյան նորագույն կործանիչների հետ:

Իրանցի մասնագետներն աշխատում են նաև բավական բարդ թռչող սարքեր հանդիսացող էկրանաթիռների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես՝ արդեն ստեղծվել է փոքր «Bavar-2» էկրանաթիռը, որը հատկապես ծովային հետախուզության համար կարող է լայն կիրառություն ունենալ:

Հետաքրքիր են նաև իրանական ԱԹՍ-երի նախագծերը, որոնցից մի քանիսը հագեցված են անտեսանելի տեխնոլոգիաներով: Այս խնդրով իրանցի մասնագետները սկսել են զբաղվել դեռ 1980-ականների կեսերին: 1991թ. կոալիցիոն ուժերին պատկանող մի քանի նման սարքեր պատահմամբ հայտնվեցին Իրանի տարածքում: Այդ նմուշների, ինչպես նաև խորհրդային ԱԹՍ-երի ուսումնասիրությունները հիմք ծառայեցին որոշակի աշխատանքների համար: Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի իրանցի մասնագետները ստանան լավ տվյալներ ունեցող արտադրանք: 2005թ. ցուցահանդեսի ժամանակ նրանք ցուցադրել էին «HESA» ընկերության կողմից ստեղծված «AM-79», «Ababil-1», ինչպես նաև «Qods» ընկերության «Saeghe-2», «Talash-1/2» և «Mohajer-2» ԱԹՍ-երը: Առաջին ընկերությունը զբաղվում է հիմնականում ալյումինե կառուցվածքով սարքերի ստեղծ-

մամբ, իսկ երկրորդ ընկերությունն ունի նաև կոմպոզիցիոն մետաղների հետ աշխատելու փորձ: Իրանցի մասնագետները խոստովանում են, որ իրենք դեռ զիջում են արևմտյան շատ ընկերություններին, սակայն բավական փորձ արդեն ունեն և աշխատում են նոր սերնդի ԱԹՍ-երի վրա: Մասնավորապես, 2010թ. հանրությանը ներկայացվեցին «Ra'd» և «Karrar» անունները կրող ԱԹՍ-եր, որոնք արտաքնապես շատ նման են ժամանակակից արևմտյան որոշ նմուշների: Դրանք հավանաբար առաջին իրանական ԱԹՍ-երն են, որոնք ունեն ռեակտիվ շարժիչներ: Ըստ որոշ մասնագետների, ինչպես նաև Իրանի նախագահի հայտարարության՝ դրանք կարող են նույնիսկ մարտական հարվածներ հասցնել՝ կրելով ռումբեր և հրթիռներ: Այս տեղեկությունները որոշակի կասկած են հարուցում: Նշյալ սարքերն այնքան մեծ չեն, դրանց կառուցվածքը մեծ հույսեր չի ներշնչում հայտնաբերման, ցածր տեսանելիության առումով, իսկ կառուցվածքային շատ համակարգեր հավանաբար վերցված են արտասահմանյան նախագծերից: Իրանական ԱԹՍ-երի ստեղծողների և առհասարակ ավիաարդյունաբերության համար շատ լավ նվեր էին 2011թ. հունվարին և հատկապես նույն թվականի հուլիսի 20-ին իրենց տարածքում խոցված ամերիկյան ԱԹՍ-երը: Մամուլում հայտնվել են տեղեկություններ այն մասին, որ այդ սարքերն ուսումնասիրվել են անգամ Մոսկվայում: Զարմանալին սակայն այն է, որ հուլիսի 20-ի դեպքը տեղի է ունեցել Ղոմ քաղաքի մոտ, որը գտնվում է Իրանի գրեթե կենտրոնում: Չնայած եղան նաև այս իրողությունները հերքող լուրեր: Այնուամենայնիվ, 2011թ. դեկտեմբերի 8-ին Իրանի բարձրաստիճան զինվորականները ցուցադրեցին ամերիկյան գերժամանակակից «RQ-170 Sentinel» ԱԹՍ-ն, որը մի քանի օր առաջ հայտարարվել էր որպես Աֆղանստանում անհայտ կորած: Հնչեցին տարբեր տեսակետներ այն մասին, որ սարքը խոցվել է իրանական ՀՕՊ կողմից, կամ ինքնուրույն վայրէջք է կատարել, թեև միանշանակ որևէ բան պնդել դժվար է:

Իրանի ռազմաարդյունաբերական համալիրը տարեցտարի զարգանում է, ստեղծելով սեփական դպրոց, ինչն ամենակարևորն է: Հիմնական խնդիրը նորագույն տեխնոլոգիաներն են, որոնց յուրացման համար կան բազում արգելքներ: Չնայած Արևմուտքի մեծ ջանքերին, իրանական գիտական ներուժի և ռազմաարդյունաբերական համալիրի առաջընթացի տեմպերը նախանձելի են: Նման մեծ ջանքերի և միջոցների ներդրումը չի կարող ապարդյուն լինել: Եթե ոչ այսօր, ապա առաջիկայում նրանք կարող են մեծ ձեռքբերումներ ունենալ:

2012թ. հունվարի 30-ին տեղեկություններ հրապարակվեցին այն մասին, որ Իրանում փորձարկվել են լազերային ուղղորդմամբ հրետանային արկեր, որոնք ունեն մինչև 20 կմ հեռահարություն: Իհարկե, նման արկերը համաշխարհային ռազմաարդյունաբերության վերջին գլուխգործոցները չեն կարող լինել, սակայն մեծ ձեռքբերում կարելի է համարել:

Իրանի ՌՕՈՒ-ը բավական թույլ են զարգացած և սպառազինված: Անձնակազմի ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 18 հազար:

Հիմնականում զինված են երեք հնացած ականակիրներով, հինգ միավոր նույնպես հնացած ֆրեգատներով ու նույնքան կորվետներով: Սպառազինության մեջ են նաև երեք

միավոր խորհրդային դիզելային «877ԷԿՄ» նախագծի սուզանավեր և մեծ քանակությամբ այսպես կոչված «զրպանային նավատորմի» փոքր սուզանավեր ու հրթիռային նավակներ: Այս ոլորտում նրանք համագործակցում են նաև Հյուսիսային Կորեայի հետ: Ձեռք են բերվել նաև «Kajami» (Taedong-B) և «Gahjae» (Taedong-C) տեսակի փոքր սուզանավեր:

Իրանը, զրկված լինելով նորագույն նավերի ձեռքբերման հնարավորությունից, մեծապես զարգացրել է այսպիսի փոքր միջոցների քանակը, որոնցով փորձում են լրացնել որակյալ նավերի պակասը: Հիմնականում ձեռք են բերում չինական հականավային հրթիռներ, որոնց մասին մենք կնշենք հրթիռային սպառազինության մեջ:

Ամերիկյան ռազմական բնույթի վերլուծություններում Իրանի ամենակարևոր սպառազինություններից են համարվում հականավային հրթիռները, որոնց քանակը բավական մեծ է, և Իրանը կարող է զգալի հարված հասցնել հակառակորդի նավատորմին ու նաև տրանսպորտային միջոցներին: Արևմուտքի կողմից պատժամիջոցների մասնակի վերացումից հետո քննարկվում է նաև ռուսական արտադրության հականավային ափամերձ արձակման հրթիռների ձեռքբերումը, որոնք զգալիորեն կհզորացնեն իրանական ՌՃՈՒ-ի կարողությունները: Խոսքը վերաբերվում է օպերատիվ հեռահարության հրթիռներին, որոնք ի վիճակի են խորտակել մեծ նավեր:

Իրանական նավաշինությունը կենտրոնացած է նման նավերի կառուցման վրա և տարեցտարի դրանց քանակը մեծանում է նաև սեփական նավերի հաշվին: «Sina» տեսակի հրթիռային ֆրեգատները և գրեթե նույնանուն նավակները

շատ են հանդիպում հաղորդագրություններում, որ մտել են սպառազինության կազմի մեջ: Իրանի ՌՃՈՒ-ի նավերի հիմնական զենքը տարատեսակ հականավային հրթիռներ են, որոնք սպառազինված են չինական «HY-2 Silkworm» և «YJ-2 (Noor C-802)» հականավային հրթիռներով, անգամ արտադրում են դրանք, ինչը, բնականաբար, բավական մեծացնում է զորքերի հզորությունն ու մարտունակությունը: Այս հրթիռներից մեկը 2006թ. հուլիսի 14-ին լիբանանյան պատերազմի ժամանակ խոցեց իսրայելական «Hanit» կորվետը: Իրանական հրթիռներն օրեցօր դառնում են ավելի հեռահար և կատարյալ: 2011թ. օգոստոսին փորձարկում է անցել «Qader» թևավոր հրթիռը (այսուհետ ԹՀ), որի հեռահարությունը կազմում է մոտ 200 կմ: Այն նախատեսված է վերջրյա նավերին խոցելու համար: Նման հրթիռների ստեղծման աշխատանքները Իրանում բավական ինտենսիվ են ընթանում: Հաճախակի են լինում նորանոր տեղեկություններ տարբեր հրթիռների ստեղծման վերաբերյալ, սակայն հետաքրքիր են նաև տեղեկությունները դրանց զանգվածային արտադրության վերաբերյալ: Այս անգամ խոսքը գնում էր «Zafar» ԹՀ-ի մասին: Բացառված չէ, որ հաճախ նույն հրթիռներին կամ նույնիսկ արտասահմանյան հրթիռներին տրվում են տարբեր անուններ: Իրանում ստեղծվում են նաև «Ghadir» տեսակի սեփական սուզանավեր, որոնց չափերը, իհարկե, մեծ չեն: Զրատարողությունը կազմում է մոտ 150 տոննա, իսկ դրանց քանակը, ըստ տարբեր տեղեկությունների, արդեն անցնում է 10-ը: Նման «թզուկ» սուզանավերի արտադրությունն այնքան էլ բարդ գործընթաց չէ, հատկապես երբ ստեղծող երկիրը օգտվում է որոշակի տեխնոլոգիաներից: 2013թ. Տեղեկու-

թյուններ տարածվեցին մի փոքր ավելի մեծ՝ «Fateh» տեսակի սուզանավերի ստեղծման մասին, որոնց հնարավորությունները ավելի հզոր են՝ դրանց քաշը անցնում է 550 տոննան: Սակայն նշյալ սուզանավերը մեծ մարտական պոտենցիալ չունեն, դրանք հիմնականում նախատեսված են ափամերձ պաշտպանության համար, ինչը իրանական ՌԾՈՒ-ի հիմնական գործողությունների թատերաբեմն է:

Իրանում փորձարկումներ է անցնում նաև «Valfajr» տորպեդը, որն ունի 220 կգ մարտական մաս: Այն իր չափերով փաստորեն միջին տեսակի տորպեդ է, որոնք լայն տարածում ունեն աշխարհում: Դրանք բավական լուրջ սպառազինություն են և կիրառելի են ինչպես տարբեր նավերից, այնպես էլ օդուժի կողմից: Վերջերս ամերիկյան փորձագետները, հաշվի առնելով իրանական այս փոքր նավատորմի աճման միտումները և դրանց վրա կիրառվող տարատեսակ հրթիռները, բավական մտահոգիչ եզրակացության էին եկել, որ ամերիկյան նավատորմի համար կարող են լուրջ խնդիրներ ի հայտ գալ Հորմուզի նեղուցի հատվածում: Սակայն կարծում ենք, որ սա ավելի շատ նախազգուշացնող միտում ունի: Պատմության ընթացքում դեռ ոչ մի պետության չի հաջողվել «գրպանային նավատորմով» հաղթանակ տանել հզոր նավատորմերին: Բանը նրանում է, որ օդային լիարժեք գերակայությունը, որին կարող է առանց մեծ խոչընդոտների հասնել ամերիկյան նավատորմը տարածաշրջանի իր օդային ուժերի հետ միասին, կարող է լիովին չեզոքացնել նման «գրպանային նավատորմին»: Ընդամենը մի քանի նավահանգիստների ռմբակոծությամբ դրանց քանակի զգալի մասը կոչնչանա անմիջապես կայանված տեղում, իսկ մյուսները

ուղղակի անզոր կլինեն, քանի որ հակաօդային հնարավորությունները ուղղակի զրոյական են: Երբեմն իրանական ՌԾՈՒ-ի զորավարժությունները դիտելիս տեսնում ենք այնպիսի սցենարներ, երբ հազարավոր փոքրիկ նավակները «միջատների» նման գրոհում են մեծ նավերին և իրենց մասսայականությամբ ուղղակի կրակով տապալում «փղերի» նման: Իրական մարտում դրա իրականացումն ուղղակի անհնար է չափազանց մեծ տեխնիկական մակարդակի առավելության և կազմակերպվածության հաշվին: Հետո նավատորմի պատմության մեջ նմայն փորձերը միշտ ավարտվել են դառը պարտությամբ:

ՌԾՈՒ-ն ունեն իրենց հատուկ նշանակության ստորաբաժանումները՝ ծովային հետևակի 2 բրիգադ, որոնց անձնակազմի թիվը գնահատվում է մոտ 2600: Իր պատրաստվածությամբ առանձնանում է հատկապես ՌԾՈՒ-ի «Թաքավարան» անունը կրող հատուկ նշանակության ստորաբաժանումը: Որոշ տեղեկությունների համաձայն՝ ծովային կոմանդոս համարվող այս ստորաբաժանումն ունի գումարտակի կարգավիճակ և անձնակազմի թիվը կազմում է մոտ 200 մարդ: Հիմնական պարտականությունը ծովային դիվերսիոն-հետախուզական հատուկ գործողությունների իրականացումն է:

ԻՀՊԿ-ն նույնպես ունի իր հիմնական զորատեսակները: ԻՀՊԿ-ի ՑՈՒ-ը կազմված են՝

30 դիվիզիաներից (26 հետևակային, 2 մեխանիզացված, 2 զրահատանկային)

26 բրիգադներից (15 հետևակային, 6 զրահատանկային, 2 մեխանիզացված, 1 քիմիական, 1 հոգեբանական պատերազմի և այլն)
10 առանձին խմբավորումներից (հրթիռային, հրետանային, ՀՕՊ, ինժեներական, քիմիական պաշտպանության, կապի):

ԻՀՊԿ-ի կազմում առանձնահատուկ կարևորություն ունի Օդատիեզերական ուժերի հրամանատարությունը՝ որպես առանձին զորատեսակ: Այն վերակազմավորվել է Կորպուսի ՌՕՈ-ի բազայի վրա: Այս զորատեսակի կարևորությունը կայանում է նրանում, որ երկրի հրթիռային ուժերը գտնվում են այս զորատեսակում՝ անմիջապես երկրի գերագույն գլխավոր հրամանատարի ենթակայության ներքո: Զորատեսակի հիմքը կազմում են ավիացիոն և հրթիռային զորքերը: Այն կազմված է հրթիռային ուժերի, ռազմաօդային, հակաօդային, թիկունքի ու կապի հրամանատարություններից: Այս հրամանատարության տակ են գտնվում երկրի պաշտպանական ներուժի համար ռազմավարական նշանակություն ունեցող հրթիռային ուժերը՝ մասնավորապես «Շահաբ» դասի երկիր-երկիր բալիստիկ հրթիռները:

Ներկայումս աշխարհի շատ փորձագետների ուշադրությունը հիմնականում սևեռված է իրանական արտադրության հրթիռային տեխնոլոգիաների վրա: Այս ասպարեզում տարեցտարի նոր ձեռքբերումներ են արձանագրվում: Ամեն ինչ կրկին սկսվեց Իրանի և Իրաքի միջև պատերազմից: Չնայած որ Իրանը դեռ վաղուց ԱՄՆ-ից ստացել էր «MGM-52 Lance» տեսակի մարտավարական բալիստիկ հրթիռներ՝

առաջինն այս պատերազմում նմանատիպ հրթիռներ կիրառեց Իրաքը: Դրանք խորհրդային հայտնի օպերատիվ-մարտավարական «Р-17 (8К14, SS-1c Scud-B 9К72 Р-300 Эльбрус)» հրթիռներն էին: Իրանը կարճ ժամանակ անց նման հրթիռներ ձեռք բերեց Լիբիայից, բացի այդ Չինաստանից, Հյուսիսային Կորեայից ստացավ հրթիռներ և տեխնոլոգիական օգնություն: Տարբեր տվյալներով՝ մինչև պատերազմի ավարտն Իրանը հիմնականում արտերկրյա օգնության շնորհիվ յուրացրեց խորհրդային այդ զինատեսակը կամ՝ ավելի հին տարբերակ՝ «Р-11» հրթիռի հիման վրա ստեղծված «Շահաբ-1» (Shihab-1) իրանյան տարբերակի արտադրությունը, որոնցից մի քանի տասնյակ արձակվեց իրաքյան քաղաքների ուղղությամբ: 1987թ.-ից շուրջ 500 մլն դոլար արժողությամբ 100 հրթիռ է գնվել Իրանի կողմից, որից 70-ից ավելին օգտագործվել է իրան-իրաքյան պատերազմի վերջին շրջանում: Իրանին չի հաջողվել երկրում կազմակերպել այս հրթիռների արտադրությունը (այլ տեղեկության համաձայն՝ 1989 և 1991թթ. Իրանը Հս. Կորեայի հետ կնքել է «Scud-B» և «Scud-C» հրթիռների արտադրության համար տեխնոլոգիաների վերաբերյալ մի շարք գործարքներ): 1984-85 թվականներից Իրանը սկսեց լուրջ քայլեր կատարել «երկիր-երկիր» դասի հրթիռների արտադրության նպատակով հրթիռային ծրագրերի զարգացման ուղղությամբ, ինչը պայմանավորված էր Իրանի համեմատությամբ Իրաքի ավիացիոն միջոցների առավելության պայմաններում ուժային հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ: Ըստ տարբեր տվյալների՝ երկու կողմերը միմյանց վրա, հիմնականում

«քաղաքների պատերազմի» ժամանակ, արձակել են ավելի քան 600 տարատեսակ հրթիռներ:

Իրանը, արդեն վաղուց ակտիվորեն համագործակցելով տարբեր երկրների հետ, զարգացնում և հզորացնում է իր ԶՈՒ-ն ու ռազմաարդյունաբերական համալիրը՝ առանցքային տեղ հատկացնելով հրթիռային զինատեսակներին: Չնայած նրան, որ տեղեկություններն այս մասին բավական աղքատիկ են, այնուամենայնիվ, մամուլում երբեմն հայտնվում են որոշակի տեղեկություններ, որոնցից կարելի է կատարել համապատասխան եզրակացություններ: Նշենք, որ վերջին տարիներին Իրանում մշակվել կամ վերափոխվել են ավելի քան 10 տեսակի «երկիր-երկիր» դասի հրթիռներ, լայնորեն աշխատանքներ են կատարվում կարճր վառելիքով աշխատող հրթիռների ուղղությամբ:

Ներկայում այս կամ այն մակարդակի պատրաստությամբ կարող են մարտական կիրառություն ունենալ մի շարք հրթիռներ: Նախ մեծ թիվ են կազմում մարտավարական հրթիռների տեսակները, որոնց ստեղծմամբ և արտադրությամբ իրանցի մասնագետները վաղուց են զբաղվում: Իրանական բանակում հիմնականում կիրառվում են «WS-1» և «Fajer-5» մարտավարական հրթիռները: Դրանք փոքր հրթիռներ են, որոնք ունեն ոչ մեծ մարտական մասեր և բավական մեծ շեղում: Նույն խնդիրներն ունեն նաև իրանական բանակի օպերատիվ-մարտավարական առաջին հրթիռները՝ «CSS-8 (M-7)», որոնք խորհրդային «C-75» համալիրի զենիթային հրթիռների չինական վերափոխումներն են: Տարբեր տվյալներով կան դրանց մի քանի տասնյակ արձակման կայաններ: Իրանական մասնագետների համար բավական մեծ հաջողություն էր 610 մմ-ոց «Zelzal-2» (այլ անուններով Fateh A-110 կամ Mershad) օպերատիվ-մարտավարական հրթիռների ստեղծումը և արտադրությունը: Դրանք ստեղծվել են նաև սիրիացի և օտարերկրյա այլ մասնագետների օգնությամբ: Տեխնոլոգիան հիմնականում նույնն է՝ խորհրդային չինականացված ու կորեականացված հրթիռների հիմքը: Ըստ որոշ տվյալների՝ դրանց հեռահարությունը ներկայում կազմում է մոտ 300 կմ և ունեն մինչև 600 կգ մարտական մաս: Ամերիկյան մի շարք աղբյուրներում նշվում է, որ արձակման կայանի վրա կարող է լինել նման մեկական հրթիռ, որոնցից մի քանի միավոր ունի նաև լիբանանյան Հեզբալլահը: Նշվածները հիմնականում հեղուկ ռեակտիվ շարժիչներով են, ինչը նշանակում է, որ դրանք այնքան էլ ժամանակակից ու հեռանկարային չեն: Մասնագետները կարծում են, որ Իրանը Չինաստանից կարող է գնած լինել «CSS-7» (M-11) տիպի համեմատաբար հուսալի հրթիռներ: Սրանք հաջողված են նրանով, որ կարճր վառելիքով են աշխատում և ունեն համեմատաբար հզոր՝ մինչև 800 կգ մարտական մաս: Ի դեպ մարտական մասը կարող է լինել զանգվածային զենքերի տարբեր տեսակներ:

Ինչպես արդեն վերը նշեցինք, իրանական հիմնական տեղայնացված հրթիռները կոչվում են «Shahab-1»: Առաջին նման հրթիռները ստեղծվեցին հենց պատերազմի ժամանակ, դրանք արտադրվում էին մինչև 1991թ.: Հետագայում աշխատանքները կենտրոնացած էին «Shahab-2»-ի ստեղծման ուղղությամբ: Մինչև 1997թ. հիմնականում Հյուսիսային Կորեայից ձեռք բերվեցին մեծ քանակությամբ հրթիռներ և տեխնոլոգիաներ՝ հիմք դնելով դրանց արտադրությանը: Այս

հրթիռների հիմնական տարբերությունը նախորդ տեսակներից այն էր, որ հեռահարությունը մեծացվել էր մինչև 500 կմ, իսկ մարտական մասը կազմում էր մոտ 800 կգ: Փաստորեն՝ սրանք ևս օպերատիվ-մարտավարական հրթիռներ էին՝ հիմնված նույն տեխնոլոգիաների վրա:

Տարբեր տվյալներով՝ տարաբնույթ զորավարժությունների ընթացքում կիրառված այս երկու հրթիռների արտադրությունը դադարեցված է 2007թ., սակայն, դեռ կան նման հրթիռների 300-ից մինչև 700 միավոր պաշար: Բոլոր այս մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռները, որոնց քանակը բավականին մեծ է չնայած նրան, որ մեծ դիպուկություն չունեն, լուրջ վտանգ են ներկայացնում հատկապես հարևան երկրների տարածքում տեղակայված մեծատարածք թիրախների համար: Նման թիրախներ կան Իրաքում, Պարսից ծոցի երկրներում և այլուր: Այս տեսանկյունից հետաքրքիր է Թուրքիայի տարածքում տեղակայված ՆԱՏՕ-ի ՀՀՊ ՌՏԿ-ն, որը գտնվում է իրանական սահմանից շուրջ 500 կմ հեռավորության վրա: Նման նշանակետերի հրթիռակոծման համար զանգվածային արձակումները կարող են բավական արդյունավետ լինել:

Մասնագետների հավաստմամբ՝ իրանական այս հրթիռների առավելագույն հնարավորությունները սպառված են և դրանցից ավելի հզոր տվյալներ ստանալ հնարավոր չէ: Դրանցից շատերը համարվում են ոչ ժամանակակից հրթիռներ, քանի որ մեծ ժամանակ է պահանջվում մինչև արձակումը կատարվող աշխատանքի համար: Սակայն նախագծերը հավակնոտ են, նպատակ ունեն ավելի մեծ ցուցանիշների հասնել և իրենցից ներկայացնում են հյուսիսկորեական

հրթիռների նախագծերի տեղայնացում: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ ներկայումս յուրացված է կարճր վառելիքով ռեակտիվ շարժիչների արտադրությունը, որը շատ կարևոր է հեռահար հրթիռների ստեղծման գործում: Սա կարող է հիմք հանդիսանալ ոլորտում հետագա ձեռքբերումների համար: Նման բազմազան տեսականին գալիս է ապացուցելու, որ դրանք օժտված չեն մեծ հուսալիությամբ: Ոլորտում դեռ հստակ ձեռքբերումներ չկան, որոնք ամրագրված են:

Սա իրանական բալիստիկ հրթիռների ոչ ամբողջական ցանկն է: Շատ հրթիռներ դեռ լիովին ավարտված վիճակում չեն կամ էլ գտնվում են փորձարկման փուլում: Յուրացվում են ստորգետնյա պահոցները, կառավարման բազմաբնույթ տեխնոլոգիաները և այլն: 2009թ. իրանական հրթիռի միջոցով արձակվեց նաև սեփական արտադրության արբանյակ. սա արդեն բավական մեծ ձեռքբերում կարելի է համարել: Հրթիռները հիմնականում մշակվում են չինական և պակիստանյան, ինչպես նաև այլ մասնագետների օգնությամբ, ունեն տարբեր հեռահարություններ, իսկ դրանց ընդհանուր քանակը բավական մեծ է:

Զորավարժությունների ժամանակ այդ հրթիռների քանակը և կիրառությունը գնալով ավելի ազդեցիկ է դառնում: Հրթիռների ոլորտում իրանական մասնագետների ձեռքբերումներն ավելի իրատեսական են դարձնում միջուկային զենքի ստեղծման պնդումները: Իրանում միայն միջուկային տեխնոլոգիաների ուսումնասիրության կենտրոնների քանակը հասնում է 10-ի:

Անվա-նումը	Հեռահարությունը		Քաշը, կգ		Շեղումը, մ.
	Նվազ.	Առավ.	Ընդ.	Մարտ.	
610 մմ Zelzal-2	-	200	-	600	-
355 մմ Nazeat	-	90	950	150-180	-
333 մմ Fajer-5	-	70	-	110	-
320 մմ WS-1	-	80	-	150	-
230 մմ Oghab	-	40	230	70	2000
CSS-8 (M-7)	-	150-180	-	190	-
Shahab-1 (Scud-B)	50	300	5862	989	900
Shahab-2[1] (Scud-C)	-	55 -700	6400	700	2000
Shahab-3 (Zelzal-3)	-	1300-1500	16000	760-1100	
hahab-3D[2] (Zelzal-3D)	-	1500-3000	16500	760-1200	-

Shahab-4 (Qaveshgar1)	-	1800 -2000	22000	750-1000	-
Shahab-5 (Kosar)	-	3500 -4000	80000	400-1000	-
Shahab-6 (Kosar)	-	5500 - 6400	-	400-1200	-
Ghadr-101	-	800	-	-	-
Ghadr-110	-	2000-2500	-	-	-
Ghadr 110A	-	3000	-	-	-
Ashura	-	2000-2500			
Sajjil (سجيل)	-	2000-2500	26000	500-1000	
Qavesh-2					

ԻՀՊԿ-ի ՌՇՈ-ը համարվում են առանձին զորատեսակ և պատասխանատու են երկրի ջրային տարածքների, բազաների ու ուղիների պաշտպանության համար: Անձնակազմի թվաքանակը գնահատվում է մոտ 20 հազար: ԻՀՊԿ-ի ռազմածովային ուժերում կա ծովային հետևակի 1 բրիգադ, որի ընդհանուր թիվը գնահատվում է 5 հազար: Չափազանց մեծ դերակատարություն է տրված այս զորատեսակին, որը նավատորմի հետ միասին, իրականացնում է Պարսից և Օմանի ծոցերում իրանական ջրային տարածքների պաշտպանությունը: Իրանը լուրջ վերահսկողություն է սահմանում նաև

Հորմուզի նեղուցում: Այն ռազմածովային բազաներ ունի ինչպես Պարսից և Օմանի ծոցերում, այնպես էլ՝ Հորմուզի նեղուցի շրջակայքում: Այն ծոցում ունի 5 տարբեր հրամանատարություններ:

Ժողովրդական աշխարհազորը (Բասիջ) կազմակերպչական առումով գտնվում է ԻՀՊԿ-ի կազմում: Աշխարհազորի հիմնական նշանակությունը առաջին կարգի պաշտպանական ռեզերվի ձևավորումն է պատերազմի ժամանակ, բանակի ու ԻՀՊԿ-ի համալրումը, քաղաքացիական անձանցից մեծաքանակ մոբիլիզացիոն հնարավորությունների ապահովումը: Բասիջը յուրահատուկ ներքին ոստիկանական ֆունկցիաներ է իրականացնում՝ իրավակարգի ապահովման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական-կրոնական նորմերի հսկման, անվտանգության մարմիններին աջակցության և այլն: Բոլոր նահանգներում գործում են Բասիջի գումարտակներ ու կառավարման օպերատիվ կենտրոններ: Բասիջի հիմնական ռազմական միավորը գումարտակներն են: Դրանք կազմված են ըստ սեռային պատկանելության. տղամարդկանց գումարտակները կոչվում են «Աշուրա», իսկ կանանց գումարտակները՝ «ալ-Զոհրա»: Գումարտակի միջին թվաքանակը կազմում է 400 մարդ: Յուրաքանչյուր նահանգում գործում է 15-50 Բասիջի գումարտակ՝ կախված տվյալ նահանգի մոբիլիզացիոն հնարավորություններից: Ըստ որոշ տվյալների՝ Իրանում նման գումարտակների թիվը հասնում է մինչև 2-2.5 հազարի, իսկ Բասիջում ընդհանրապես ներգրավվածների թիվը, ըստ իրանական աղբյուրների, կարող է հասնել մինչև 12 մլն-ի: Բասիջի թվաքանակի ու մոբիլիզացիոն հնարավորությունների հետ կապված էական անհամաչափություն կա իրանական կողմի պաշտոնական տվյալների և արևմտյան փորձագիտական տվյալների միջև: Ըստ արևմտյան փորձագիտական գնահատականների՝ իրատեսական է դիտվում պատերազմի ժամանակ մինչև 1.5 մլն բասիջականների մոբիլիզացիան, մինչդեռ իրանական իշխանությունները հայտարարում են այդ թվից մոտ 10 անգամ շատ հնարավորությունների մասին:

Երկրի տարածքում գործում է պահեստազորայինների վարժեցման 6 հազար ուսումնավարժական կենտրոն: Բասիջում հատկապես մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդների կրոնա-գաղափարական դաստիարակությանը:

Որոշ տվյալներով՝ 2008 թ. Բասիջը մտցվել է ԻՀՊԿ ՑՈՒ-ի կազմի մեջ: Բասիջի սպառազինությունն ու անհրաժեշտ միջոցներն ապահովվում են ԻՀՊԿ-ի կողմից: Իրանի ռազմական դոկտրինում Բասիջին կարևոր տեղ է հատկացված արտաքին ագրեսիայի դեպքում, որոնք պետք է կազմակերպեն առաջնահերթ դիմադրությունը: Որոշ հաշվարկների համաձայն՝ պատերազմական իրավիճակում Բասիջի ռազմականացված գումարտակների բազայի հիման վրա կարող է կազմավորվել հետևակի մինչև 20 դիվիզիա, որոնց ընդհանուր թվաքանակը կգերազանցի 300 հազարը:

ԻՀՊԿ-ի հատուկ նշանակության ուժերի կազմում է գտնվում «Ղոդս» ստորաբաժանումը, որի թվաքանակը գնահատվում է մոտ 15 հազար: Այդ ստորաբաժանման հիմնական պարտականությունների մեջ է մտնում երկրի սահմաններից դուրս հատուկ հանձնարարությունների կատարումը՝ հիմնականում հետախուզա-դիվերսիոն նշանակության: Այն ընդունված է համարել ԻՀՊԿ-ի «երկար ձեռքը»:

ԻՀՊԿ-ի ազդեցությունը թե ֆորմալ, թե ոչ ֆորմալ առումներով բավական մեծ է երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում: Նրա ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը զգացվում է երկրի կրթական, գաղափարական, մեդիա, տնտեսական ոլորտներում: Ժամանակի ընթացքում մեծացավ ԻՀՊԿ-ի ազդեցությունը երկրի տնտեսության վրա, որտեղ տարբեր հիմնադրամների միջոցով այն դարձավ երկրի տնտեսության ու արդյունաբերության ռազմավարական մի շարք ոլորտների նկատմամբ գերիշխող դիրք ու վերահսկողություն ունեցող կառույցի: Ամենամեծ տնտեսական հիմնադրամներից մեկը «Խաթամ ալ-Անբիյա» ընկերությունն է, որը տնտեսության կարևոր ճյուղերում նախագծերի իրականացման հսկայածավալ պայմանագրեր է կնքել: Այս համատեքստում կարելի է համեմատականներ անցկացնել հատկապես 1960-ականներից հետո Թուրքիայի ԶՈՒ-ը հետ, երբ թուրքական բանակը իր հիմնադրամների միջոցով (OYAK) վերածվեց տնտեսության ու արդյունաբերության ոլորտի կարևոր դերակատարի՝ խոշոր արդյունաբերողի: Գաղափարական-տեղեկատվական դաշտում նույնպես մեծ է Կորպուսի դերկատարությունը, որն արտահայտվում է իր հովանավորության տակ գտնվող մեդիա միջոցներով: Կրթության ոլորտում նրա ազդեցությունը նույնպես մեծ է տարբեր կրթական կառույցների ու ճամբարների գործունեության միջոցով, ինչպես օրինակ՝ Դասախոսական և Ուսանողական բասիջ կազմակերպությունը:

Հատուկ ծառայությունները, անվտանգության մարմինները

Հատուկ ծառայությունների ոլորտում գործում են մի քանի կառույցներ ու մարմիններ, որոնք որոշ դեպքերում գտնվում են մրցակցության մեջ: Արտաքին հետախուզության ու հակահետախուզության հանրապետական մարմինը «Տեղեկատվության նախարարությունն» է (այսուհետ՝ ՏՆ, պարսկ. Վեզարաթ-է էթելաաթ): Մինչև այս նախարարության ստեղծումը 1979-80 թթ. Իրանում ստեղծվել էին մի քանի հատուկ ծառայություններ, որոնցից թերևս նշանավորը «Ազգային հետախուզության ու անվտանգության գործակալությունն» էր: Այն հիմնվել էր շահական «Սավաքի» բազայի վրա: Սրա հետ միասին հեղափոխությունից հետո սկզբնական շրջանում արտաքին հետախուզության ոլորտում էր գործում նաև ԻՀՊԿ-ն: 1980-ական թթ. սկզբներին ԻՀՊԿ-ի գործունեությունը արտաքին հետախուզության ոլորտում մեծացավ: Միևնույն ժամանակ, խիստ կարիք էր զգացվում միասնական, համակարգված արտաքին հետախուզական կառույցի:

2014 թ. հոկտեմբերին իրանական «Ֆարս» լրատվական գործակալությունը, ՏՆ-ի կողմից հրապարակված հատուկ զեկույցի հիման վրա գրել էր, որ Իրանում հետախուզական-անվտանգային 16 պետական կառույցներ են գործում: Լրատվական գործակալությունը նշել էր, որ վերջին տարիներին այդ ոլորտում ստեղծվել են նոր կառույցներ, սակայն չէր մանրամասնել դրանց մասին: Ամենայն հավանականությամբ, նման մեծ թիվը ներառում է ինչպես ՏՆ-ը, ԻՀՊԿ-ի

հետախուզությունը, բանակի և ոստիկանության հետախուզական վարչությունները, այնպես էլ մի շարք գերատեսչական կառույցների նմանատիպ վարչություններն ու ստորաբաժանումները:

ՏՆ-ն ստեղծվել է 1983 թ. որպես միասնական հետախուզական կառույց: Այն համարվում է երկրի կարևորագույն մարմիններից մեկը, որը գործում է ներքին ու արտաքին հետախուզության, հակահետախուզության ոլորտում: Հետախուզության ոլորտի փորձագետները իրանական հետախուզությունը համարում են Մերձավոր Արևելքի ազդեցիկ ու անձնակազմով մեծաքանակ հատուկ ծառայություններից մեկը: Նախարարության հիմնական պարտականություններն են. արտաքին ու ներքին հետախուզական տեղեկատվության ապահովումն ու վերլուծումը, հակահետախուզական գործունեությունը, պետական գաղտնիքի պահպանության հսկողությունն ու պետական գերատեսչությունների գործունեության համակարգումը արտաքին հետախուզության ոլորտում: Անձնակազմի ընդհանուր թվաքանակը գնահատվում է շուրջ 30 հազար:

Հարկ է նշել, որ նախարարությունը, չնայած գերատեսչական գործադիր մարմին է, այդուհանդերձ գտնվում է հոգևոր առաջնորդի ուղղակի վերահսկողության տակ: Նախարարին նշանակում է երկրի նախագահը հոգևոր առաջնորդի հաստատմաբ և միևնույն ժամանակ առանց հոգևոր առաջնորդի հավանության նախագահը չի կարող պաշտոնից ազատել հետախուզական կառույցի ղեկավարին:

Օրենսդրությամբ նախարարությանը տրված են լայն լիազորություններ: Ռազմական կառույցները պարտավորվում են ռազմական հետախուզության ոլորտում համակարգել աշխատանքները ՏՆ-ի հետ: Բոլոր նախարարությունները, պետական կառույցներն ու գերատեսչությունները, բանակն ու ոստիկանությունը պետք է իրենց տրամադրության տակ գտնվող հատուկ տեղեկատվությունն անհապաղ ներկայացնեն ՏՆ-ին և ըստ անհրաժեշտության տրամադրեն ցանկացած տեղեկատվություն: ԻՀՊԿ-ն ներքին հետախուզության ու հակահեղափոխական տարրերի հետ պայքարի հարցում պետք է իր գործողությունները համապատասխանեցնի ՏՆ-ի հետ և անհրաժեշտության դեպքում օժանդակություն ստանա: ԻՀՊԿ-ի արտաքին հատուկ գործողությունների հիմնական ուժը հանդիսացող «Ղոդս» ստորաբաժանումը պարտավոր է իր գործողությունների վերաբերյալ զեկուցել ՏՆ-ին և անհրաժեշտության դեպքում ստանալ լոգիստիկ ու այլ օգնություն:

Որոշ տվյալներով՝ ՏՆ-ն ունի 15 վարչություններ, որոնցից են անվտանգության, հակահետախուզության, արտաքին գործողությունների, տեխնոլոգիական, քաղաքական, գնահատումների ու ռազմավարական հարցերի, հետազոտական, կրթական վարչությունները:

2005 թ. Իրանում ստեղծվեց հակահետախուզական նոր ստորաբաժանում «Օղաբ-2» անվամբ, որի հիմնական նպատակը Իրանի միջուկային ծրագրի հետ կապված հակահետախուզական միջոցառումների ուժեղացումն էր: Ամենայն հավանականությամբ, այդ ստորաբաժանումը գործում է ՏՆ-ի ենթակայությամբ:

ՏՆ-ի բյուջեի վերաբերյալ ընդհանրապես տվյալները բացակայում են, այն գտնվում է խիստ գաղտնիության

պայմաններում և նույնիսկ տվյալները չեն ներկայացվում խորհրդարանին:

1996 թ-ից Իրանում գործում է «Հետախուզության հարցերով բարձրագույն խորհուրդը», որի նպատակը Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի հետ պետական հետախուզական գործունեության համակարգումն է: Դրա ղեկավարումն իրականացնում է ՏՆ-ի նախարարը: Ըստ որոշ տվյալների՝ խորհուրդի տանիքի ներքո գործում է մոտ 20 հազար ծառայող և այն ունի 12 տարբեր վարչություններ:

Արևմտյան փորձագետների գնահատականով՝ Իրանի հատուկ ծառայությունները բավական ճյուղավորված հետախուզական ցանց ունեն ոչ միայն Մերձավոր և Միջին Արևելքում, այլ նաև Արևմուտքում:

Ներկայում ՏՆ-ի հետ միասին հետախուզական գործունեության ոլորտում ակտիվ է գործում ԻՀՊԿ-ի հետախուզական վարչությունը: Արտաքին հատուկ նշանակության գործողությունների հարցում սերտ համագործակցում են «Ղոդս» ստորաբաժանումն ու ՏՆ-ը: Ռազմական հետախուզության ոլորտում գործում է բանակի հետախուզական վարչությունը: ԳՇ-ի հետախուզական վարչությունն ապահովում է նաև ուժային բոլոր կառույցներում հակահետախուզական գործողությունները:

Ներքին գործերի նախարարության ենթակայության տակ գործող ոստիկանական ուժերի թիվը գնահատվում է մոտ 120 հազար: Բրիտանական հեղինակավոր «Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի» տվյալներով՝ թավաքանակը գնահատվում է 40-60 հազարի սահմաններում: Ժամանակակից ոստիկանությունը ստեղծվել է 1990-ական թվականների սկզբներին՝ դեռևս շահական ժամանակներում գործող ժանդարմերիայի, ոստիկանության ու իսլամական հեղափոխական կոմիտեների միավորման արդյունքում: Այն հիմնականում պատասխանատու է երկրում հասարակական կարգի պահպանության, հանցավորության դեմ պայքարի ու սահմանների հսկողության ոլորտում:

Չնայած երկարաժամկետ տեխնոլոգիական ու սպառազինության արևմտյան արգելանքին՝ Իրանը կարողացել է որոշակիորեն լուծել իր ռազմական արդիականացման խնդիրները թե տեղական ռազմաարդյունաբերության միջոցով, և թե Ռուսաստանից, Չինաստանից և Արևմուտքը շրջանցող այլ երկրներից ձեռքբերման միջոցով: Ամերիկյան փորձագետները գտնում են, որ չնայած տեխնոլոգիական դժվարություններին ու բանակի արդիականացման ոչ բավարար մակարդակին՝ Իրանն ի զորու է իր ռազմական ուժերով ու ռազմականացված ստորաբաժանումներով անհամաչափ ռազմավարության կիրառմամբ լուրջ խնդիրներ առաջացնել ԱՄՆ-ի և հատկապես Պարսից ծոցում ամերիկյան դաշնակիցների համար: Որպես հակակշիռ Իրանին՝ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում և հատկապես Պարսից ծոցում մեծացնում ու հզորացնում է ոչ միայն իր ռազմական ներկայությունը, այլ նաև արդիականացնում ու սպառազինում իր դաշնակիցներին՝ Սաուդյան Արաբիային, ԱՄԷ-ին, Կատարին և այլն: Կանոնավոր Բանակն ու ԻՀՊԿ-ն տարիների ընթացքում ձեռք են բերել ԱՄՆ-ի և ամերիկյան դաշնակիցների դեմ անհամաչափ ռազմագործողություններ վարելու ունակություններ: Իրանի ներկայիս սպառազինությունն ու ուժերը

հնարավորություն են տալիս նախաձեռնել, իրականացնել անհամաչափ, անկանոն ու հիբրիդային ռազմագործողություններ: Ամերիկյան փորձագետներն առանձնացնում են նման հնարավորությունը փաստող մի շարք գործոններ՝ տանկերային պատերազմ, Ղոդս ուժերի կիրառում Իրաքում, շիադական խմբավորումների վարժեցում և զինում Իրաքում, մատակարարումն ու աջակցությունը Հեզբալլահին, Բահրեյնում, Սաուդյան Արաբիայում շիայական գործոնի ակտիվացում, ներկայում նաև Յեմենում, հեռահար բալիստիկ հրթիռներ, ծոցում ծովային փոխադրումների արգելափակում, հավանական հարված և այլն:

2015 թ. հուլիսի 14-ին Վիեննայում երկարատև բանակցություններից հետո կնքվեց Իրանի միջուկային ծրագրի շուրջ Իրանի և «Վեցյակի» միջև համաձայնությունը, որը նախատեսում է միջուկային ծրագրի ոլորտում մի շարք սահմանափակումների փոխարեն վերացնել Իրանի նկատմամբ սահմանված տնտեսական պատժամիջոցները: Հուլիսի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ բանաձև, որը նախատեսում է Իրանի նկատմամբ սահմանված բոլոր պատժամիջոցների վերացում 10 տարի անց, եթե հիարկե Իրանը ԱԷՄԳ-ի վերահսկողության ներքո կատարի «Վեցյակի» հետ ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները: Համաձայնագրով, սակայն դեռևս 5 տարով ուժի մեջ է մնում ՄԱԿ-ի կողմից Իրանի նկատմամբ սահմանված զենքի էմբարգոն: Չնայած այն վերաբերում է բոլոր զինատեսակներին, սակայն ակնհայտ է, որ դրա հիմքում առաջնային հրթիռային տեխնոլոգիաներն ու

այն միջոցներն են, որոնք կարող են կիրառվել միջուկային զենքի ոլորտում:

Չնայած Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերացման երկարատև ժամանակահատվածի հաստատման՝ այդ համաձայնագրի կատարումն էականորեն մեծացնում է Իրանի աշխարհաքաղաքական դերակատարությունը: Այն ոչ միայն կապահովի Իրանի էներգետիկ-տնտեսական ոլորտում դերակատարության ավելացումն, այլ նաև ռազմաքաղաքական ազդեցության մեծացումը: Ռազմաքաղաքական առումով Իրանը լուրջ դերակատարություն ունի հատկապես մերձավորարևելյան գործընթացներում, իսկ ապագայում Իրանի և Արևմուտքի միջև հարաբերությունների բարելավման ֆոնին այդ երկիրը կարող է ստանձնել նաև յուրատեսակ «կայունարար-վերահսկիչ գործառույթներ» ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ՝ Աֆղանստանում: Հեռանկարում չի բացառվում Իրանի և Արևմուտքի՝ հատկապես ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացման պարագայում Իրանին տարածաշրջանային ակտիվ դերակատարության «մանդատային» գործառույթների հանձնում: Այս համատեքստում, ապագայում Իրանի նկատմամբ կիրառվող զենքի էմբարգոյի վերացմամբ Իրանը մեծ հնարավորություն կստանա իր ԶՈՒ-ն ապահովել ժամանակակից սպառազինությամբ և նոր որակի բարձրացնել ռազմատեխնիկական հնարավորություններն ու ներուժը: Իրանի բանակի սպառազինության հիմնական մասը արևմտյան և մասնավորապես ամերիկյան զինտեխնիկա է, և դրանք վերանորոգելու ու վերազինելու ծավալները չափազանց մեծ են:

Այսպիսով փաստենք, որ Իրանի ԶՈՒ-ն ունեն՝

- ✓ *մեծ ներուժ քանակով,*
- ✓ *այն մարտունակ է իր անձնակազմի բարձր մարտական ոգով,*
- ✓ *ունի հզոր ցամաքային հրթիռային պոտենցիալ,*
- ✓ *ներկայում ձեռք է բերում մարտական փորձ:*

Միևնույն ժամանակ՝

- ✓ *այն ունի տեխնիկական, ժամանակակից սպառազինության հագեցվածության խնդիր,*
- ✓ *անձնակազմը հիմնականում մեծ մարտական գործողությունների փորձ չունի,*
- ✓ *ամբողջական ԶՈՒ-ի կառավարումը երկատված է:*

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը

Ադրբեջանի սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝ երկրի ԶՈՒ-ի գերագույն գլխավոր հրամանատարը երկրի նախագահն է: 95-րդ հոդվածով՝ խորհրդարանին է պատկանում երկրի ԶՈՒ-ի կիրառման թույլտվության իրավասությունը: Նախագահի դիմումի հիման վրա խորհրդարանն է պատերազմ հայտարարում և խաղաղություն կնքում: Ըստ 109-րդ հոդվածի՝ երկրի նախագահն է նշանակում և ազատում ԶՈՒ-ի գլխավոր շտաբի պետին, բարձրագույն հրամանատարական կազմին, հայտարարում մասնակի կամ ամբողջական զորահավաք, նախագահում Ազգային անվտանգության խորհուրդը, հայտարարում արտակարգ և ռազմական դրություն, խորհրդարանի համաձայնությամբ հայտարարում պատերազմ և կնքում խաղաղություն:

ԶՈՒ-ի ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 120 հզ.: Պահեստազորի թիվը գնահատվում է մոտ 300 հզ.: ԶՈՒ-ի համալրումն իրականացվում է համընդհանուր զինապարտության համակարգի և պայմանագրային զինծառայության միջոցով: Գործում է նաև այլընտրանքային ծառայության համակարգը: «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» օրենքի համաձայն՝ պարտադիր զինվորական ժամկետային ծառայության ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները: Պարտադիր ծառայության ժամկետը կազմում է 18, իսկ բարձրագույն կրթություն ունեցող-

ների համար՝ 12 ամիս: Արական սեռի քաղաքացիները մինչև 35 տարեկանը գտնվում են զինապարտության մեջ, իսկ մինչև 50 տարեկանը՝ պահեստազորում: Զորակոչ անց է կացվում տարին 4 անգամ՝ հունվար, ապրիլ, հուլիս և հոկտեմբեր ամիսներին:

Բանակը կազմված է ցամաքային, ռազմաօդային ուժերից, որի կազմում են գտնվում ՀՕՊ զորքերը, և ռազմածովային ուժերից:

ՅՈՒ-ը քանակապես ամենամեծն են՝ ավելի քան 70 հզ., չնայած պաշտոնապես դրանց թվաքանակը կազմում է մոտ 56 հզ.: ՅՈՒ-ն իրենց մեջ ներառում են այլ զորատեսակներ՝ մոտոհրաձգային, հրետանային, ինժեներական, զրահատանկային և այլն:

ՅՈՒ-ը բաժանված են 1 առանձին համազորային բանակի և 4 առանձին բանակային կորպուսների: Դրանց կազմում կա մինչև 3 տասնյակ մոտոհրաձգային, 5-6 առանձին հրետանային և հակատանկային, 1-2 առանձին տանկային, մինչև 4 առանձին լեռնահրաձգային բրիգադներ: Կորպուսներից զատ, առանձին բրիգադները պահուստային օպերատիվ և ռազմավարական ուժեր են, քանի որ կորպուսներն իրենց կազմում ունեն համապատասխան միջոցների բավարար քանակ:

ՅՈՒ-ի ընդհանուր կառուցվածքը հետևյալն է՝



Բրիգադային հիմնական միավորները կազմված են 5-6 գումարտակներից, տանկային և հրետանային գումարտակ-դիվիզիոններից: Բացի այդ, ըստ արևմտյան չափանիշների, դրանց կազմում պետք է գործի նաև մեկական ուղղաթիռային էսկադրիլիա: Բրիգադներն ունեն հիմնականում 700-ական նիշերով համարակալումներ՝ 701, 702, 740 և այլն: Սպառազինության պակասի և տեսականու առանձնահատկությունների պատճառով գումարտակները արևմտյան հստակ կառուցվածք և բաժանում չունեն: Կան նաև որակական պատճառներ:

ՅՈՒ-ի մոտոհրաձգային և հրաձգային ջոկերի, դասակների և վաշտերի կառուցվածքը տե՛ս ստորև բերվող աղյուսակներում.



2013թ. Նախիջևանի ինքնավար հանրապետությունում տեղակայված 5-րդ բանակային կորպուսը վերակազմավորվեց որպես առանձին համազորային բանակի, որով այն ինքնուրույն ռազմական խնդիրներ լուծելու ավելի լայն հնարավորություններ ստացավ: Նախիջևանում բավական մեծ է Թուրքիայի ռազմական ազդեցությունն ու դերակատարությունը: Նախիջևանյան զորամիավորումը գտնվում է թուրքական ԶՈՒ-ի լուրջ վերահսկողության տակ, իսկ հավանական պատերազմի դեպքում նախիջևանյան ճակատի բացումը կարող է պայմանավորված լինել նաև թուրքական գործոնով: Զորամիավորման ողջ հեռահաղորդակցային, կապի համակարգերը ներդրվել են Թուրքիայի կողմից, որով այն վերակազմավորվել է արևմտյան չափանիշներով: Նախիջևանում գործում է մշտական թուրքական ռազմական ստորաբաժանում: Այս զորամիավորումը կամաց-կամաց դառնում է աղրբեջանական բանակի ոչ միայն ամենամեծ, այլ

նաև ամենահզոր զորախումբը: Բացի զրահատանկային միավորների ու դիվերսիոն ստորաբաժանումների միջոցով մարտական գործողությունները Արարատյան դաշտավայրի սիրտը տեղափոխելու հնարավորությունից, այս զորամիավորումը իր սպառազինության մեջ ներառում է ինչպես ավիացիոն կոնտինգենտ՝ ուղղաթիռային էսկադրիլիա, այնպես էլ հրթիռային հարձակողական միջոցներ՝ մեծ տրամաչափի համազարկային կրակի համակարգեր. չի բացառվում նաև հրթիռային մարտավարական հեռահարության համակարգերի առկայությունը: Դրանց միջոցով ՀՀ մայրաքաղաքին կարող են սպառնալ նաև հեռահար կրակով:

2015թ. Ադրբեջանի պաշտպանական բյուջեն կազմել է ավելի քան 3.3 մլրդ մանաթ (գրեթե 4.8 մլրդ դոլար), շուրջ 27%-ով ավել նախորդ տարվա ցուցանիշի համեմատությամբ: Այն կազմում է պետական բյուջեի մոտ 18 %-ը: Պաշտպանական բյուջեի տակ ներառված են հիմնական ուժային կառույցները: Պաշտպանական բյուջեից մոտ 1.7 մլրդ մանաթը հատկացվել է ԶՈՒ-ին: Պետական սահմանապահ ծառայությանը՝ ավելի քան 157 մլն մանաթ, Մոբիլիզացիայի և զորակոչի պետական ծառայությանը՝ 22 մլն մանաթ, Ռազմական արդյունաբերության նախարարությանը՝ 4 մլն, Ազգային անվտանգության նախարարությանը[3]՝ 121 մլն, Պետական հատուկ պահպանության ծառայությանը՝ 85 մլն, ՆԳՆ-ին (ներքին զորքեր)՝ 165 մլն և այլն:

Թեև 2016թ. բյուջեում նախապես հատկացվել էր նախորդ տարվանից ավելի մեծ գումար, սակայն երկրում ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով այդ գումարները պաշտոնապես մոտ կրկնակի անգամ կրճատվեցին՝ կազմելով մոտ 1.8 մլրդ մանաթ: Սա միայն պաշտոնական տվյալներն են, որում հաշվի չի առնված մանաթի արժեզրկումը, որը անուղղակիորեն ազդում է թե ռազմատեխնիկական գործարքների, թե զինծառայողների աշխատավարձերի վրա: 2016թ. փետրվարի դրությամբ, որոշակի վերանայումներից հետո պաշտպանական բյուջեն, ըստ պաշտոնական տվյալների, կազմել է մոտ 2.1 մլրդ:

Բանակի սպայական կադրերի պատրաստումն իրականացվում է բազմապրոֆիլ ձևով, հիմնականում սեփական ռազմաուսումնական հաստատություններում պատրաստելով բակալավրի աստիճանի մասնագետներ և սպաներ, իսկ ավելի բարձր կազմը հիմնականում պատրաստվում է Թուրքիայում, Ռուսաստանում: Որոշ ուղղություններով ռազմական ոլորտի մասնագետներ պատրաստվում են նաև այլ երկրներում՝ ԱՄՆ, Ուկրաինա, Պակիստան, Գերմանիա և այլն:

ՑՈՒ-ի սպայական կադրերի պատրաստումն իրականացվում է Հ. Ալիևի անվան բարձրագույն ռազմական ուսումնարանում: 1999թ. այս ռազմական ուսումնարանի հիման վրա ստեղծվել է նաև ռազմական ակադեմիա, որտեղ ռազմական բարձրագույն կրթություն են ստանում արդեն ծառայող սպաները, սակայն այս օղակում հիմնականում վերապատրաստվում են արտերկրում: Բաքվում գործում են նաև

[3] Տվյալները բերված են 2014թ. նոյեմբերին ներկայացված պետական բյուջեի նախագծից, երբ դեռևս գործում էր Ազգային անվտանգության նախարարությունը: 2015թ. Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությունը լուծարվեց, որի հիմքի վրա ստեղծվեցին երկու ծառայություններ՝ *Պետական անվտանգության ծառայությունը* և *Արտաքին հետախուզության ծառայությունը*: Հետագայում նման կառուցվածքային փոփոխություններ եղան նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում:

ռազմածովային և ավիացիոն բարձրագույն ռազմական ուսումնարաններ: Այս ռազմական հաստատություններն ունեն ԲՈՒՀ-ի կարգավիճակ: 1998թ. Բաքվում գործում է Հ. Ալիևի անվան Ազգային անվտանգության նախարարության ակադեմիան, որն իրականացնում է ազգային անվտանգության մարմինների համար անհրաժեշտ կադրերի պատրաստումն ու որակավորումը:

Ադրբեջանում գործում է նաև ռազմաօդային ուսումնարան, որտեղ պատրաստում են օդաչուներ, ավիացիայի սպասարկող տեխնիկական և ՀՕՊ մասնագետներ, սակայն վերջիններիս որակը այնքան բարձր չէ, ինչի մասին հաճախ են արտահայտվել միջազգային փորձագետները:

Բանակի հատուկ նշանակության ուժերը հիմնականում պատրաստություն են անցնում Թուրքիայում, ինչպես նաև Հյուսիսային Կիպրոսում: Բացի այդ, թուրք զինվորականները մշտապես ուսումնավարժական պարապմունքներ են անցկացնում Ադրբեջանի տարածքում: ԶՈՒ-ի համազորային միավորումներում գործող հետախուզադիվերսիոն խմբերից զատ, ըստ որոշ տեղեկությունների, բանակային կորպուսներում կան նման գումարտակներ, իսկ համազորային բանակում՝ մինչև 2 գումարտակ: Ջալիլաբադի շրջանի Գյոյթեփե քաղաքում տեղակայված է հատուկ նշանակության զորամասերից մեկը, որտեղ իրականացվում է ժամկետայինների նախնական պատրաստություն: Բաքվի Ղարադաղի շրջանի Շուբանի գյուղում է գտնվում հատուկ նշանակության ռադիոտեխնիկական գունդը: Օպերատիվ ենթակայությամբ գործում են 1 աէրոմոբիլ և 3 հատուկ նշանակության բրիգադներ: Դրանցից մեկը տեղակայված է Գյանջայում, մյուսը՝ Ցաշմայում:

Սահմանապահ ստորաբաժանումների սպայական կադրերի պատրաստումն իրականացնում է Պետական սահմանապահ ծառայության ակադեմիան:

ՌՕՈՒ-ի հրամանատարության անձնակազմի ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 8 հզ., իսկ ՌԾՈՒ-ինը՝ մոտ 2.5 հզ.:

ՌՕՈՒ-ը կազմված են՝

2 հարվածային-կործանիչային էսկադրիլիաներից

1 տրանսպորտային էսկադրիլիայից

1 մարտական-տրանսպորտային ուղղաթիռային գնդից

ՀՕՊ ստորաբաժանումներից (ՀՕՊ զորքերը կազմված են ԶՀՀ դիվիզիոններից և ԶՀ դասակներից. Բաքվի և այլ կարևորագույն շրջաններում գործում են նաև ՀՕՊ բրիգադներ):

ՌՕՈՒ-ը և ՀՕՊ զորքերը բավական լավ սպառազինված են, հատկապես վերջին տարիներին ձեռք են բերել նորագույն ТОР-М, БУК-М և այլ համալիրներ: Սակայն, դրանով հանդերձ, աչքի են ընկնում զենքերի չափազանց մեծ տեսականիով: Հատկապես ՀՕՊ-ը անհամաչափ է զարգացած պետության առջև կանգնած մարտահրավերներին համապատասխան և ավելի շատ կենտրոնացված է Ապշերոնյան թերակղզում:

ՌԾՈՒ-ը հիմնականում նախատեսված են ափամերձ գործողությունների համար՝ չնայած տարեցտարի դրանք լավ սպառազինվում են և Ադրբեջանի բարձր մակարդակի

ռազմականացման մեջ լուրջ տեղ են զբաղեցնում: Անգամ օդուժի և ՀՕՊ-ի շատ ստորաբաժանումներ իրականում նախատեսված են ծովուժի թատերաբեմում գործելու համար: Ներկայում ադրբեջանական ՌՕՈ-ի կազմում կա մարտական մոտ 40 նավ ու նավակ, որոնք գերազանցապես վերջրյա են: Դրանցից ընդամենը 1-և է 1000 տոննա ջրատարողություն ունեցող, որը հին խորհրդային արտադրության նավ է: Մնացածի չափերը փոքր են՝ հիմնականում մինչև 400-700 տոննա ջրատարողությամբ նավակներ, որոնցից մի քանիսը ունեն հրթիռային, մյուսները՝ հիմնականում 30-76 մմ. հրանոթային սպառազինություն: Նավակների մեջ հետաքրքիր են հատկապես վերջին ձեռքբերումները Թուրքիայից և Ռուսաստանից: Դրանց մասին տեղեկությունները հակասական են, դրանք նոր տեսակի նավակներ են և սպառազինված են հիմնականում մոտակա գործողության հականավային հրթիռներով ու թեթև հրանոթահրաձգային սպառազինությամբ: Սակայն մինչև օրս էլ հստակ չէ, թե այդ նավակներն ունեն ամերիկյան հրթիռներ, թե ոչ:

Առհասարակ, Ադրբեջանի համար ծովային ուղղությունը կարծես թե ավելի ու ավելի արդիական է դառնում, կապված Կասպից ծովում նավթազազային ռեսուրսների պահպանման և վիճելի ջրային տարածքների հետ: Հատկապես Թուրքմենստանի հետ կան գազային հանքավայրերի պատկանելության հետ կապված վիճահարույց հարցեր: Ջրային տարածքների պատկանելության շուրջ լուրջ հակասություններ կան նաև Իրանի հետ: Ադրբեջանի սպառազինությունների ձեռքբերման մասսայական ծրագրերում մեծ տեղ են սկսում զբաղեցնել ծովային թատերաբեմի համար

նախատեսված զենքերը, իսկ երկակի թատերաբեմերի համար նախատեսվածները ավելի հաճախ տեղակայվում են ծովափնյա շրջաններում: Մասնավորապես՝ Իսրայելից ձեռք բերված մեծաքանակ զենքերի մեջ կային հականավային զենքեր, որոնք միայն այս հատվածում է հնարավոր կիրառել, իսկ նորագույն ԶՀՀ-ները և հիմնական կործանիչ ինքնաթիռները տեղակայված են Ապշերոնյան թերակղզում և ծառայություն են իրականացնում ծովափնյա շրջաններում: Ադրբեջանի կողմից այս զենքերի ձեռքբերման ժամանակացույցը նաև զարմանալիորեն համընկնում է Թուրքմենստանի ակտիվ սպառազինման ծրագրերի հետ:

Ադրբեջանի ԶՈ-ի կազմի մեջ է մտնում Պետական սահմանապահ ծառայությունը, որի թվաքանակը գնահատվում է մոտ 5 հզ.: Պետական սահմանապահ ծառայության կազմի մեջ է գտնվում Առափնյա անվտանգության ծառայությունը, որն իրականացնում է Կասպյան ավազանի ու առափնյա հատվածների պաշտպանությունն ու անվտանգության ապահովումը:

Սպառազինման միտումները և ծրագրերը

Ադրբեջանը մեծ տեմպերով ավելացնում է սպառազինությունը և ռազմական բյուջեն: Տարբեր երկրներից ակտիվորեն ներկրվում են տարատեսակ զինատեսակներ. սպառազինման լայնամասշտաբ ծրագրերն սկսվել են հատկապես 2002-2003թթ-ից: 2004-2007թթ. Ադրբեջանը միայն Ուկրաինայից ներկրել է 80.000 միավոր զենք: 2007թ. մինչ օրս այդ

մատակարարումները տարբեր գնահատականներով բազմակի մեծացել են: 2003-2008թթ. Ադրբեջանի հիմնական մատակարարները եղել են Ուկրաինան (364 մլն դոլար), Ռուսաստանը (128 մլն դոլար) և Վրաստանը (108 մլն դոլար): 2010թ. տվյալներով մատակարար երկրների ցանկը ևս չի փոխվել. միայն ավելացել են ծավալները և փոխվել են տեղերը: 2004-2008թթ. համեմատությամբ՝ 2009-2013թթ. Ադրբեջանի կողմից սպառազինության ներկրման ծավալներն աճել են 378%-ով: SIPRI-ի տվյալներով՝ 2009-2013թթ. Ադրբեջանի կողմից ներկրված սպառազինության մեջ Ռուսաստանի մասնաբաժինը կազմել է մոտ 80%: Մնացյալ մասը բաժին է ընկնում Ուկրաինային, Իսրայելին, Թուրքիային, Հարավ-աֆրիկյան հանրապետությանը, Բելառուսին և այլն: Թուրքիայի վիճակագրական կազմակերպության (TÜIK) պաշտոնական տվյալներով՝ 2011-2015թ. մայիսն ընկած ժամանակահատվածում Թուրքիայից Ադրբեջան զենք-զինամթերքի, ռազմական նշանակության ապրանքների արտահանման ցուցանիշը կազմել է շուրջ 89 մլն դոլար, որից 82 մլն-ը՝ 2013-2014թթ.: Իհարկե, սրանք զուտ այն պաշտոնական տվյալներն են, որոնք ֆիքսված են ընդհանուր թուրքական ապրանքների արտահանման հաշվեկշռում: Թուրքիայից Ադրբեջանին տրամադրված (այդ թվում նաև անհատույց) սպառազինության, ռազմական նշանակության ապրանքների ընդհանուր ծավալը գերազանցում է մի քանի 100 միլիոնը:

2010թ. 240 մլն դոլար արժողության պայմանագրով Թուրքիան Ադրբեջանին է մատակարարել 107 և 122 մմ տրամաչափի հրետանային համալիրներ ու անհրաժեշտ սպառազինություն: 2013 թ. մատակարարվել են նաև թուրքական

արտադրության «T-300 Kasırga» հրետանային համալիրներ, իսկ 2014թ.՝ 36 T-155 ինքնագնաց հրետանային համալիր:

Ադրբեջանին ռազմական մատակարարումների հարցում ՌԴ-ն առաջատարների շարքում է: Միայն վերջին մի քանի տարիներին «Մի-35Մ», «Մի-17» ուղղաթիռների և «C-300 ՊՄՍ-2» ԶՀՀ-ի ռուսական մատակարարումների ծավալները կազմում են մոտ 1-1.5 մլրդ դոլար: Իսկ վերջին 5 տարում միայն ՌԴ-ից իրականացված զինատեսակների գնումների գումարային արժեքն ավելի քան 4 մլրդ դոլար է, այսօր ակտիվորեն քննարկվում է ևս այդքան գնումների հարցը: Մասնավորապես՝ Ադրբեջանը շահագրգռված է նոր կործանիչ ինքնաթիռների, ուղղաթիռների և հրասայլերի նոր խմբաքանակի, ինչպես նաև հատուկ սարքավորումների ու տեխնիկայի մեծ ծավալի ձեռքբերման հարցում: 2016թ. սկզբների դրությամբ, սակայն, հայտնի դարձավ, որ որոշ զինատեսակներ, որոնց պայմանագրերը կնքվել էին երեք-չորս տարի առաջ, դեռ չեն ստացվել և մատակարարման փուլում են: Բյուջետային հատկացումների աճին զուգահեռ, ավելանում է նաև Ադրբեջանի կողմից տարբեր երկրներից ձեռք բերվող սպառազինության ընդհանուր գումարային արժեքը: Ադրբեջանական ռազմական բյուջեի ավելացումն ունի կոնկրետ հասցե. ստեղծվել է ռազմական արդյունաբերության նախարարություն: Այդ գերատեսչությունն արդեն ունի մի քանի տասնյակ ձեռնարկություններ և արտադրում է մոտ 700 անուն ապրանք: Ադրբեջանը թուրքական, իսրայելական և այլ երկրների ռազմարդյունաբերական ընկերությունների հետ կնքում է սպառազինությունների գնման, արդիականացման ու նաև համատեղ արտադրության պայմանագրեր:

Իհարկե, նման ծավալների ծախսերը չեն կարող որոշակի մտահոգություն չառաջացնել: Դա գերռազմականացում է, որը նույնիսկ ամենավատ որակի դեպքում անգամ վտանգներ ունի:

Ադրբեջանական բանակի սպառազինության արդիականացման և ձեռքբերման գործում հետաքրքիր նախագծեր կան, որոնք հանգամանալից վերլուծության կարիք ունեն: Հրադադարի հաստատումից ի վեր՝ Ադրբեջանը տեղաղին զինվում է՝ ավելացնելով ներմուծվող զենքերի ու տեխնիկայի և՛ քանակը, և՛ տեսականին: Ուշագրավ են հատկապես հարձակողական տարատեսակ միջոցների, ԱԹՍ-երի ձեռքբերումը, որոշ զինատեսակների արտադրության հիմնումը, որոնք կարող են որոշակի վտանգ ներկայացնել:

Դեռ տարիներ առաջ Իսրայելից ձեռք էին բերվել «Aeronautics Defense Systems» ընկերության «Orbiter» և «Aerostar» ԱԹՍ-ներ, որոնք բազմիցս կիրառվել են շփման գոտում: Ադրբեջանը իսրայելական ընկերությունների հետ ցանկանում էր նաև արտադրել սովորական ու մարտական ԱԹՍ-ներ: Գործարանն արդեն գործում է, և, կարելի է ասել, որոշ ժամանակ անց ադրբեջանական բանակում ԱԹՍ-ների քանակը կհասնի մինչև մի քանի հարյուրի: Այդ ԱԹՍ-ները ներկայացվեցին 2014թ. հունիսի 26-ի զորահանդեսին: Չի բացառվում, որ աշխատանքը կատարում են իսրայելցի մասնագետները: Պատահական չէ նաև, որ ադրբեջանական մամուլում հայտնվեցին տեղեկություններ այն մասին, որ ադրբեջանական բանակն առաջիկա տարիներին կհամալրվի մարտավարական ԱԹՍ-ներով, որոնք կարող են անգամ զենք կիրառել, այսինքն՝ լինեն մարտական: Իհարկե, սա

հիմնականում քարոզչական բնույթ է կրում, սակայն չեն բացառվում նաև հետագայում այդ ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Մարտական ԱԹՍ ստեղծելը դյուրին գործ չէ: Աշխարհում մոտ 100 պետություն զբաղվում է ԱԹՍ-ների ստեղծման աշխատանքով, սակայն լիարժեք մարտական ԱԹՍ-ներ ներկայում արտադրում են միայն ԱՄՆ-ն ու Իսրայելը:

Բացի այդ, նման սարքերի ձեռքբերման համար պայմանագիր է կնքվել թուրքական «TAI» (Turkish Aerospace Industries) ընկերության հետ, որը արտադրում է «Turna», «ANKA» ԱԹՍ-ները: Ավելին՝ ադրբեջանցի սպաները Թուրքիայում մասնագիտական պատրաստություն են անցնում «Turna» սարքերը ղեկավարելու համար: Իհարկե, թուրքական արտադրության ԱԹՍ-ները որակական չափանիշներով չեն կարող համեմատվել իսրայելականների հետ, բայց դրանք հարկ եղած դեպքում ևս կարող են օգտագործվել որպես մարտական-հարվածային միջոցներ: Մի քանի տասնյակ ԱԹՍ-ների գրագետ և ճիշտ օգտագործումը կարող է լավ արդյունքներ ապահովել, հատկապես հետախուզության և կրակի կառավարման գործում: Բայց նաև նկատի ունենանք, որ թուրքական կողմը ևս ԱԹՍ-ների կիրառման հետ կապված լուրջ խնդիր ունի: Իսրայելական համանման սարքերը տարբեր, այդ թվում թուրքական զինծառայողների «բարձր մասնագիտական պատրաստության» պատճառներով կորցնելուց հետո, փորձ արվեց կիրառել սեփական արտադրության մեքենաներ, սակայն ինչպես պարզվում է՝ զինվորականները մնացել են առանց համապատասխան հետախուզական միջոցների: Չնայած դրան՝ մամուլում ցուցա-

դրվել են թուրքական նոր, հաջողված «ANKA» ԱԹՍ-ի փորձնական թռիչքները: «ANKA»-ն միջին չափի, երկար թռիչքներ կատարող սարք է:

Ի՞նչ ասել է ադրբեջանական մարտական ԱԹՍ: Դա չի լինելու ամերիկյան «RQ-4 Global Hawk», «X-45» կամ «X-47» մարտական օդային հարթակների նման հզոր միջոց: Այնուամենայնիվ, այս տեղեկությունը պետք է որոշակիորեն զգաստացնի հայկական զինված ուժերին: Նախ պարզենք՝ ի՞նչ է ադրբեջանական սովորական, հետախուզական ԱԹՍ-ն:

Ադրբեջանական հետախուզական ԱԹՍ-ները հայկական տարածքներում թռիչքներ կատարել են: Իհարկե, եղան այս իրողությունը հաստատող և հերքող բազում տեղեկություններ, սակայն մասնագետները լավ են հասկանում, որ դա միանգամայն հնարավոր է: 2012թ. սեպտեմբերի 12-ի ադրբեջանական ԱԹՍ-ի խոցումից հետո հայկական կողմը ևս խոստովանեց այդ փաստը: Աշխարհում վաղուց են կիրառվում ԱԹՍ-ներ, և բազմիցս ապացուցվել է, որ ավանդական, հին զենիթային միջոցներով դրանց դեմ պայքարելն արդյունավետ չէ: 1960-ական թթ. բազում փորձեր են կատարվել այդ ուղղությամբ, և արդյունքները գաղտնիք չեն: 2008թ. Հվ. Օսեթիայում և Աբխազիայում ռազմական գործողություններն ապացուցեցին, որ ԱԹՍ-ների դեմ պայքարը պահանջում է զենիթահրթռային լուրջ պատրաստվածություն: Զենիթային որոշ փոքր համալիրներ երբեմն անզոր են, իսկ մեծերը, որոնք կարող են խոցել, թանկարժեք են:

Փաստորեն, ադրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարությունը, յուրացնելով սովորական ԱԹՍ-ների հնարավորությունները, առանց ժամանակ կորցնելու անցավ նաև

մարտական ԱԹՍ-ների ձեռքբերմանն ու կիրառմանը, որոնց հնարավորություններն անհամեմատ մեծ են: Եթե նույնիսկ ադրբեջանական ԱԹՍ-ները հստակ ինտեգրված չեն գլոբալ համակարգերին, ապա տվյալ դեպքում դա մեծ բան չի փոխում: Այդ ամենը ընդամենը ժամանակի հարց է: Այս գործընթացն աշխարհում ունեցել է ավանդական զարգացում: ԱԹՍ-ները նախ կատարել են սովորական հետախուզություն, հետո հետախուզություն են կատարել որոշակի համակարգի մեջ, այսինքն՝ միաժամանակ օգնել են այլ միջոցների: Դրանք կարող են լինել հարվածային որոշակի համալիրներ, կապի, ռադիոպայքարի միջոցներ և այլն: Այնուհետև անցել են հաջորդ փուլ, եղել են հարվածային միջոցների մի մասնիկը կամ հենց միջոցը, այսինքն՝ հետախուզահարվածային միջոցը: Դրանից ավելի առաջ գնալը Ադրբեջանի համար դեռ շատ վաղ է:

Մարտական ԱԹՍ-ներով Ադրբեջանը ստացել է բավական հզոր միջոցներ, որոնց դեմ պայքարելն այլ մակարդակի խնդիր է: Իսրայելական «Haropp» (Harpy 2) ԱԹՍ-ն, որը կիրառվեց ապրիլյան պատերազմում, ինչպես նաև թուրքական «Turna» ԱԹՍ-ները բավական լուրջ միջոցներ են հարվածներ հասցնելու համար: Մի քանի տարի հետո Ադրբեջանը կարող է ունենալ 50-100 միավոր մարտական ԱԹՍ, որոնք իրականում կլինեն օպերատիվ-մարտավարական խորության վրա գործող ԹՀ-եր: Անգամ թուրքական վերը նշված ԱԹՍ-ները կարող են հարվածներ հասցնել մինչև 50-100 կմ խորության վրա: Թռչող սովորական հարվածային սարքերին խոցելու համար ՋՀՀ-ն ծախսում է 3-5 հրթիռ, այն էլ հարաբերական բարենպաստ վիճակում ունենալով հակազդեցու-

թյան մինչև 10 վայրկյան ժամանակ: Նման հակազդեցություն ունեցող համալիրները բացառիկ են: ՀՀ ՀՕՊ համակարգը բավական զարգացած է տարածաշրջանում, սակայն ապագա մարտահրավերների համար հարկավոր է ձեռք բերել հիմնականում փոքր, մեկ մեքենայի վրա տեղակայված, նվազագույն հակազդեցության ժամանակ ունեցող համալիրներ: Այս բոլոր միջոցառումները պահանջում են խնդրի համակողմանի և խորը վերլուծություն:

Այս զարգացումներին զուգահեռ ադրբեջանական սպառազինման գործընթացում կան, այսպես ասած, նաև ուշագրավ դրվագներ, որոնք ռազմական պլանավորման և նախապատրաստման ոչ մի տրամաբանության մեջ չեն տեղավորվում: Ադրբեջանը շարունակում է ակտիվորեն գնել այս կամ այն երկրների արտադրած բազմազան զենքերի տարատեսակ նմուշներ, սակայն երբեմն այդ ձեռքբերումները անկանոն են և անհիմն: Այսպես՝ ադրբեջանական բանակի ստորաբաժանումներում արդեն կիրառվում են մի քանի տեսակի և զանազան երկրների արտադրության հրաձգային զենքեր: Տարբեր ստորաբաժանումներ կիրառում են խորհրդային, ամերիկյան, գերմանական, իսրայելական և այլ երկրների արտադրության զենքեր («TAR-21», «MP5», «HK G3», «Remington 700», «JNG 90 Bora» և այլն): Մամուլում տեղեկություններ կան այն մասին, որ Բաքուն բանակցություններ է վարում չեխական «Ceska Zbrojovka» ընկերության հետ՝ «Scorpion EV03 A1» տեսակի ատրճանակ-գնդացիրներ գնելու համար: Իսկ ամենաուշագրավն այն է, որ ավանդական «Կալաշնիկովի» ինքնաձիգն Ադրբեջանում արտադրելիս այլ անուն է ստանում՝ «Հազրի»: Մամուլում հանդիպում

են աղոտ տեղեկություններ այն մասին, որ Ադրբեջանը արտադրում է «Շիմշեք» կոչված գրոհային հրացան, «Հազրի» ինքնաձիգ, «Զաֆար» և «Ինամ» ատրճանակներ: Ի դեպ, գրոհային հրացանն ու ինքնաձիգը նույն զենքի արևմտյան և խորհրդային տեսակավորումն են: 2016թ. Ադրբեջանը պատրաստակամություն է հայտնել ձեռք բերել թուրքական (MKEK) ընկերության արտադրության MPT-76 ինքնաձիգներ:

Ադրբեջանը տարբեր ժամանակներում ձեռք է բերել գերմանական, թուրքական, իսրայելական, անգլիական, ռուսական զրահամեքենաներ ու տրանսպորտային տարատեսակ միջոցներ: 2010թ. հայտնվեցին տեղեկություններ, որ ադրբեջանական նորաստեղծ ռազմաարդյունաբերության նախարարությունը հարավաֆրիկյան «Paramount Group ընկերության հետ դեռ 2007թ. աշխատանքներ է տանում երկու տեսակի զրահամեքենաների՝ «Marauder APC»-ի և «Matador»-ի արտադրության ուղղությամբ: Վերջինը ստեղծվել էր հարավաֆրիկյան ընկերության և հորդանանյան «Middle East Defence Systems» (MDS) ընկերության հետ համատեղ: Այս մեքենաների արտադրությունն Ադրբեջանում կազմակերպելը բխում էր երկկողմ շահերից: Մեքենաները շատ ընդհանրություններ ունեն. նախ նրանց շարժիչները նույնն են, ապա նաև ընթացային մասում կան նույն հիմքը կազմող բաղկամասեր: Մեքենաների արտադրության և դրանց մատակարարման մասին տարբեր տեղեկություններ են շրջանառվում: Սկզբում մի փոքր խմբաքանակ էր առաքվել Ադրբեջան, որի հիմքի վրա էլ, հավանաբար, կատարվել են ուսումնասիրությունները և կազմակերպվել է արտադրությունը: 2009թ. «Paramount Group»-ն առաքել էր 10 միավոր

«Marauder»: Նույն թվականին Հարավաֆրիկյան հանրապետությունից ընդհանուր ռազմական մատակարարումները գերազանցում էին 22 մլն դոլարը: Մեքենաների քանակի մասին տեղեկությունները սահմանափակ են: Հայտնի է միայն, որ դրանց արտահանման հնարավորություններն այնքան էլ մեծ չեն: Վերջերս էլ պարզ դարձավ, որ այս ծրագիրն ընդհանրապես տեղից չի շարժվել:

Ադրբեջանական բանակում կան նաև թուրքական Otokar ընկերության արտադրության «Cobra» զրահամեքենաներ, որոնք բավական տարածված են աշխարհում: 1997թ. արտադրվող այս մեքենան կիրառվել է նաև 2008թ. «Հնգօրյա» պատերազմում: Ադրբեջանական ԶՈՒ-ում դրանց քանակը ևս ստույգ հայտնի չէ: 2011թ. Բաքվում կայացած զորահանդեսին այս մեքենաների սահմանափակ քանակություն ցուցադրվեց, որից հետո կրկին տեղեկություններ հայտնվեցին դրանց նոր խմբաքանակի մատակարարման մասին:

Ռուսական «Рособоронэкспорт» ընկերությունն Ադրբեջանին առաջարկել է իր տարածքում «Тигр» զրահամեքենաների արտոնագրված արտադրություն սկսել: Այդ մասին «ԱՐՄՍ-ՏԱՍՍ»-ին հայտնել է Ադրբեջանի ռազմարդյունաբերության նախարարի օգնական Ազադ Մամեդովը՝ սպառազինությունների և ռազմական տեխնիկայի Աբու-Դաբիում տեղի ունցած «IDEX-2011» 10-րդ ցուցահանդեսի ժամանակ:

Այդ ցուցահանդեսի շրջանակում Ադրբեջանը և Թուրքիան ռեակտիվ հրթիռների համատեղ արտադրության պայմանագիր են ստորագրել: Դեռ 2009թ. թուրքական «Roketsan» և ադրբեջանական «Iqlim» ընկերությունների միջև համագործակցության պայմանագիր էր կնքվել: Ըստ պայմանագրի՝

նախատեսվում էր համատեղ արտադրել համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր (ՀԿՌՀ) 107 և 122 մմ-ոց հրթիռներ:

Թուրքական վերը նշված ընկերությունը վաղուց մասնագիտացել է արևմտյան և խորհրդային այդ տրամաչափերի չղեկավարվող հրթիռների արտադրության գործում: Ըստ վերը նշված պայմանագրի՝ հրթիռների որոշ բաղկամասեր պատրաստի առաքվելու էին Թուրքիայից, մնացածը համատեղ արտադրվելու էր տեղում: Այս ընկերությունը նշված հրթիռների հեռահարությունն ավելացրել է: 2011թ. ստորագրված մեկ այլ պայմանագրով 107 և 122 մմ-ոց հրթիռների համար արտադրվելու էին նաև համապատասխան արձակման կայաններ: 2014թ. դրությամբ այդ ոլորտում ևս գործերը շատ դանդաղ էին առաջ ընթանում: «TR-107» և «TRB-107» հրթիռների հեռահարությունը հասցվել է 11 կմ-ի, իսկ «TRB-122» հրթիռներն արդեն ունեն 40 կմ հեռահարություն, կան նաև պակաս հեռահարության այլ հրթիռներ:

Վերը հիշատակված թուրքական ընկերությունը վաղուց խորհրդային «БМ-21» մեքենայի բազում կլոնավորումներից մեկի հիման վրա ստեղծել էր «T-122 Sakarya» ՀԿՌՀ-ն: 107 մմ-ոց նման առանձին համալիր Թուրքիայում չի ստեղծվել, դա Արևմուտքում 1950-ականներից լավ տարածված տրամաչափ է, որի համար ստեղծվել էին արձակման բազում կայաններ: Այսօր այն, մեծ հաշվով, մերժված տրամաչափ է:

Ադրբեջանն իր բանակի համար կամենում է ձեռք բերել չինական հրթիռներ: Թե ինչ տեսակի, դեռ պարզ չէ, սակայն չինական կողմի հետ բանակցություններ են ընթանում: Խոսքը մարտավարական հրթիռների մասին է, սակայն

այստեղ ես ինչ-որ անկանոն բան է ստացվում: Հարցն այն է, որ ադրբեջանական բանակում մարտավարական հրթիռներ արդեն կան. դրանք խորհրդային հայտնի «Точка-У» (9К79-1) համալիրներն են: Նույն տեսակի չինական հրթիռների տեսականին բավական մեծ է, սակայն դրանք չեն փայլում մեծ հուսալիությամբ ու արդյունավետությամբ: Նորից ստացվելու է խիստ կասկածելի տվյալներով և հուսալիությամբ հրթիռների բազմազանություն:

Զանազան սպառազինությունների համատեղ արտադրության բանակցություններ էին վարվում տարբեր երկրների հետ: Այդ զինամիջոցների թվում քիչ չեն նաև հրթռային տեխնոլոգիաները: Նշվում էր ուկրաինական հակատանկային «Скиф» և «Барьер» հրթիռների ձեռքբերման, նաև դրանց տեղայնացման մասին: Այս հրթիռները նոր չեն ստեղծվել, դրանք խորհրդային հին նմուշների ուկրաինական տեղայնացումներն են, և մասնագետների հավաստմամբ՝ բավական արդյունավետ են, մասնավորապես, գիշերային մարտերում: Նույն ժամանակ ձեռք են բերվել նաև բելառուսական, ռուսական և իսրայելական նոր հակատանկային հրթիռային համալիրներ:

Զենքերի նման բազմազանությամբ են «փայլում» նաև ադրբեջանական բանակի մնացած զորատեսակները և, մասնավորապես, ՌՕՈ-ը: Ադրբեջանի ԶՈ-ում արդեն առկա հրաձգային շատ զենքեր սնվում են ՆԱՏՕ-ական չափանիշների փամփուշտներով, այն դեպքում, երբ զենքերի գերակշիռ մասը դեռ խորհրդայիններն է կիրառում: Ադրբեջանի նման ոչ մեծ երկրի համար զինատեսակների նման բազմազանությունը ոչ մի դրական առավելություն չի կարող ունենալ,

ընդհակառակը՝ խնդիրը հատկապես բարդանում է զինվորականների համար նման բազմազան տեսակների յուրացման տեսանկյունից:

Զրահամեքենաները

Հարավաֆրիկյան «Paramount Group» ընկերությունը բավական հայտնի է սպառազինությունների արտադրության ոլորտում: Ադրբեջանում այդ ընկերության հետ համատեղ արտադրված զրահամեքենաներն էլ չնայած տարածված չեն, սակայն կրում են գերմանական շարժիչներ և օժտված են հակաականային հատկանիշներով: Սրանք արդեն կարող են խոսել այս մեքենաների որակի մասին: Ներկայում աշխարհում նման զրահամեքենաների արտադրությունը և տեսականին բավական մեծացել է, սակայն առաջին հայացքից դրանց լավ բնութագրերի մեջ դժվար է գտնել բացառիկներն ու լավագույնը: ԱՄՆ-ի բանակում նման մեքենայի համար մրցույթ էին հայտարարել, որի պահանջները շատ խիստ էին: ՌԴ-ում մինչ օրս չեն կարողանում վերջնական որոշում կայացնել այս հարցի շուրջ՝ գնել սեփական, թե արտասահմանյան մեքենաներ: Մեծ աղմուկ բարձրացավ սեփական արտադրության «Тигр» զրահամեքենայի և իտալական «Iveco LMV M65»-ի միջև ընթացող մրցավազքի շուրջ:

Սա հենց այն մեքենան է, որը չի ընդունվում ռուսական բանակում, բայց առաջարկվում է ադրբեջանական բանակին:

Ահա, թե ինչու, չնայած շատ երկրներ, այդ թվում՝ Ադրբեջանը և Թուրքիան նման մեքենաներ են արտադրում,

սակայն դա չի նշանակում, որ դրանք որակյալ են: Այսօր աշխարհում ստեղծվում են նոր տեսակի զրահամեքենաներ, որոնք ունեն մոդուլային կառուցվածք, արագ կարող են ձևափոխվել և սպառազինվել տարբեր զենքերով: Այս առումով շատ երկրներ անգամ չեն շտապում ձեռք բերել նոր զրահամեքենաներ, քանի որ դեռ չլուծված շատ հարցեր կան: Նման երկրները հասկանալի պատճառով չեն գնում նաև հին մեքենաները, քանի որ դրանց ժամանակներն անցել են: Ընդունված էր, որ Ուկրաինան զրահամեքենաների արտադրության առաջատարներից մեկն է: Այդ երկիրը հիմնականում վաճառում է «БТР-3 Гардиан» и «БТР-4 Буцефал» զրահամեքենաներ, որոնք ստեղծվել են խորհրդային հայտնի զրահամեքենաների հիմքի վրա: Դրանք հիմնականում առաքվում են այնպիսի երկրներ, որոնք չեն զիջվում զերժամանակակից սպառազինությամբ: Նման հին մեքենաներ է վաճառում նաև ՌԴ-ը, որը ևս զրահամեքենաների վաճառք իրականացնող առաջատար երկրների ցանկում է: Զրահամեքենաների առաջատարը այժմ Ֆինլանդիան է, որը մատակարարում է ժամանակակից մոդուլային «Patria AMV» (Rosomak) զրահամեքենան: Այս մեքենան ժամանակակից է: Այն շատ հատկանիշներով տարբերվում է հատկապես ռուսական և ուկրաինական այն մեքենաներից, որոնց հետ մրցակցում է: Զարմանալին այն է, որ Հարավաֆրիկյան հանրապետությունը ևս գնել է ֆիննական այս մեքենաներից, ընդ որում՝ բավական մեծ քանակությամբ (ավելի քան 250 միավոր): Սա նշանակում է, որ հարավաֆրիկյան այն զրահամեքենաները, որոնք առաջարկվում են Ադրբեջանին, որքան էլ լավը լինեն, միևնույն է, զիջում են աշխարհի առաջատարներին: Եթե դրանք շատ որակյալ լինեին, արտադրողը ևս իր սեփական զինուժում կգործածեր:

Ադրբեջանական բանակը մեծ հետաքրքրություն ունի նաև հետևակի մարտական տարատեսակ մեքենաների նկատմամբ: Ադրբեջանը մտադրություն ունի ձեռք բերել ռուսական «БМП-3» մեքենաներ: Այս մեքենաները ևս հակասական համբավ են ձեռք բերել: Մասնագետները քննադատում են հատկապես այս մեքենայի սպառազինությունը, նշանոցային հարմարանքները, հակաականային պաշտպանությունը: Իհարկե, կան նաև այլ՝ հակառակ կարծիքներ, սակայն շատ տարրական հարցեր անպատասխան են. եթե այս մեքենաներն այդքան լավն են ու որակյալ, ապա ինչո՞ւ ռուսական բանակը հրաժարվեց դրանց ձեռքբերումից, ինչո՞ւ հրաժարվեցին նաև այլ զնորդներ, իսկ գրեթե միակ մեծաքանակ զնորդ Արաբական Միացյալ Էմիրությունները 135 մեքենայի համար հատկացնում է լրացուցիչ 75 մլն դոլար, որպեսզի դրանք կատարելագործվեն: Մեքենաները կատարելագործման կարիք ունեն, իսկ դա խոսում է առկա խնդիրների մասին: Կատարելագործման գինն ապշեցնում է՝ ամեն մի մեքենայի համար ավելի քան 0.5 մլն դոլար: Դա մեքենայի գրեթե ամբողջ գինն է: Ահա, թե ինչ է ցանկանում ձեռք բերել Ադրբեջանը: Վերջին տվյալներով՝ այնտեղ արդեն կա ավելի քան 2.000 միավոր զրահամեքենա, ընդհանուր՝ մոտ 10 տեսակի: Ռազմական տեսակետից, սա աբսուրդ է, որը միշտ դառը ավարտ ունեցել: Լավագույն օրինակը ԽՍՀՄ-ն էր՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ:

Ըստ որոշ փորձագիտական գնահատականների՝ ադրբեջանական բանակի ամենահզոր զորատեսակը ՌՕՈ-ն են: Դրանք անհամեմատելի առավելություն ունեն հայկականի նկատմամբ: Ավելին, որոշ մասնագետների հավաստմամբ՝ դրանք 2015թ. ընթացքում պետք է կիսով չափ վերազինվեին ժամանակակից սարքերով և ավելանային քանակով՝ դրանով ապահովելով օդային գերակայություն տարածաշրջանում: Փորձենք պարզաբանել այդ իրողությունը:

Տեղեկատվական բազմաթիվ աղբյուրների և հրապարակումների համաձայն՝ ադրբեջանական ՌՕՈ-ի սպառազինության մեջ մինչև 2010-2011թթ. գտնվում էին «МиГ-21», «МиГ-25», «МиГ-29», «Су-17», «Су-24», «Су-25» մարտական ինքնաթիռներ: Դրանց քանակի մասին կան տարբեր տեղեկություններ՝ ավելի քան 100 մարտական ինքնաթիռ: Ուղղաթիռները ներկայացված են խորհրդային «Ми-24» և «Ми-8» մեքենաներով, չնայած վերջին ժամանակում ակտիվորեն համալրվում են դրանց նոր տարատեսակներով: Տարբեր գնահատականներով ԹՍ-ների ընդհանուր քանակը հասնում է 300-ի, որոնց մեջ օրեցօր ավելի մեծ տեղ են զբաղեցնում ԱԹՍ-ները: 300 ԹՍ-ներով պլանավորված ռազմական գործողությունները մանրամասն վերլուծություն են պահանջում:

ՌՕՈ-ի ինքնաթիռներից առանձնահատուկ ուշադրության է արժանի «МиГ-25» կործանիչը, որը ադրբեջանական օդուժում քանակով ամենաշատն է: Այս ինքնաթիռի համաշխարհային և հատկապես ադրբեջանական կիրառության փորձը շատ հետաքրքիր է: Սա բացառիկ տվյալներ

ունեցող ինքնաթիռ է, որը պահանջում է վարման մասնագիտական բարձր որակավորում և տեխսպասարկման հարցում հատուկ վերաբերմունք: Ունենալով մեծ արագություն, թռիչքի բարձրություն և օդային մարտի յուրահատուկ հնարավորություններ՝ «МиГ-25»-ն իրեն այնքան լավ չի դրսևորում մարտական այլ խնդիրներ լուծելիս: Կործանիչի նվազագույն արագությունը մեծ է, փոքր են ճկունությունը, մարտական բեռնվածքի քաշը և այլն: Ինչպես ցույց տվեց փորձը, այս ինքնաթիռները շատ դժվար է կիրառել վերգետնյա նշանակետերին հարվածելու համար:

Ադրբեջանում ԽՍՀՄ-ից մնացել էին «МиГ-25РБ» հետախույզ ռմբակոծիչներ և «МиГ-25ПДС» կործանիչներ:

Անհաջողության պատճառներից էր «МиГ-25РБ»-ի նշանոցային բարդ հարմարանքը: Ադրբեջանն Իրաքի նման չկարողացավ այդ սարքերը մշտապես ճշգրտել: Օգտագործելով ինքնաթիռների վերանորոգման գործարանը՝ նրանք ինքնաթիռները հարմարեցրին կոպիտ ռմբանետմանը, քանի որ բնակավայրերի վրա ռմբանետման ծրագիրն իրագործելու համար առանձնահատուկ նշանոց հարկավոր չէր:

Փաստորեն, այս բարդ և հզոր ինքնաթիռներն Արցախյան պատերազմում Ադրբեջանի կողմից կիրառվում էին որպես սովորական ռմբակոծիչներ՝ 50-ամյա վաղեմության մեթոդներով ռումբ նետելու համար: Կործանիչի ուժեղ կողմերը կիրառելու բնագավառ ուղղակի չկար, իսկ հայկական կողմը չուներ բարձրաթռիչք ինքնաթիռներ: Ամեն ինչից զատ, որպես կործանիչ այս ինքնաթիռը վերջնականապես հնացել է: Չնայած նրան, որ ադրբեջանական ինքնաթիռները վարում էին փորձառու խորհրդային օդաչուները, նույնիսկ այս բա-

ցառիկ տվյալներ ունեցող կործանիչներն Արցախյան գոյամարտում մարտական կորուստներ ունեցան: Ընդ որում՝ «МиГ-25» ինքնաթիռի խոցման փայլուն դեպքերից մեկը կապված է հենց հայ հակաօդայինների հետ:

Մամուլում հայտնված այն տեղեկատվությունը, թե «МиГ-25» կործանիչին «օդ-օդ» դասի ջերմային ինքնուղղորդվող գլխիկ ունեցող հրթիռներով խոցել են հայկական տանկերը, չեն համապատասխանում իրականությանը: Նախ՝ այս ինքնաթիռով, որն ունի մեծ արագություն և օդաչուի վատ տեսադաշտ, լեռներում զրահատեխնիկա հայտնաբերելն անգամ դժվար է, իսկ գրոհելը՝ գրեթե անհնար: Բացի դրանից, այդ հրթիռներով ցամաքային տեխնիկա խոցելն անհնար է՝ ելնելով տեխնիկական սահմանափակումներից: Հրթիռները նվազագույն բարձրության սահմանափակում ունեն, նաև բեկորային մարտական մասերը չեն կարող խոցել նման զրահ: Չնայած ներկայում հայկական կողմն ունի ռազմական ինքնաթիռներ, միևնույն է, «МиГ-25»-ը լեռնային տեղանքում ցածրաթռիչ օդային նշանակետերի դեմ պայքարի համար ընդհանրապես պիտանի չէ, քանի որ շատ ծանր է և բարձր արագությամբ է թռչում, իսկ նշանոցային սարքավորումներն ու սպառազինությունը շատ հին են: Թվարկված խնդիրները ժամանակի պահանջներից դուրս գտնվող այս կործանիչի եզակի թերությունները չեն: Կործանիչն օգտագործում է հատուկ և թանկարժեք ռեակտիվ վառելիք: Ընդ որում, «МиГ-25»-ը մեկ թռիչքի ընթացքում օգտագործում է ադրբեջանական այլ ինքնաթիռներից նվազագույնը կրկնակի շատ վառելիք, ինչը, գնի հետ զուգարած, ունենում է մեծ ծախսեր:

Այսինքն՝ նման կործանիչն ընդհանրապես որևէ երկրի ՌՕՈ-ին առհասարակ պետք չէ, սակայն, ինչպես երևում է, Ադրբեջանում այդպես չեն մտածում: 1998թ. Ադրբեջանը Ղազախստանից գնել է 8 «МиГ-25» կործանիչ, որոնց վիճակը, հաշվի առնելով տարիքը, բնականաբար չի կարող իդեալական լինել: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ Ուկրաինան վերանորոգում է ադրբեջանական այս ինքնաթիռները: Սա փաստում է, որ Ադրբեջանում նման ինքնաթիռների հետ դեռ որոշակի հույսեր են կապում, չնայած 2014թ. հունիսի 26-ի Բաքվի զորահանդեսին այս կործանիչները կրկին բացակայում էին: Իհարկե, դա կարող է նաև նշանակել, որ դրանք վերանորոգվում էին: Այդ մասին արդեն եղել են որոշ հաղորդագրություններ:

Ադրբեջանական ինքնաթիռներից հայկական ՌՕՈ-ի հիմնական հակառակորդ կարելի է համարել «МиГ-29»-ը: Այն հայկական ԹՍ-երին կարող է մեծ վնաս հասցնել՝ հատկապես հարթավայրերում թռիչքներ կատարելիս:

Իրականում ինչի՞ է ընդունակ բավական հայտնի և գովազդված այս կործանիչը:

Ցանկացած զենքի լավագույն ստուգատեսը պատերազմն է: Մինչ օրս այս կործանիչը մասնակցել է մարտական մի քանի գործողությունների և ոչ մի տեղ աչքի չի ընկել: Կիրառվելով Իրաքում, Հարավսլավիայում, Աֆրիկայում և նախկին ԽՍՀՄ-ի տարածքում՝ «МиГ-29»-ն օդային մարտերում պայքարել է իր սերնդակից կործանիչների դեմ և, չունենալով ապացուցված և ոչ մի հաղթանակ, կրել է մոտավորապես 15 պարտություն:

Ադրբեջանական ՌՕՈ-ի կործանիչները Ուկրաինայում համապատասխան կատարելագործում են անցել, որպեսզի կարողանան կիրառել նաև «օդ-երկիր» դասի սպառազինությունը: Սա արդեն որոշակի մտահոգություն է առաջացնում:

Թուրքիան, ըստ նախատեսված ժամկետի, 2017թ. «F-35»-երի իր չափաբաժինն ստանալով, ստիպված է լինելու ազատվել մոտ 100-150 «F-16C»-երից, որոնցից մի քանիսը, ամենայն հավանականությամբ, կարող է փոխանցեն Ադրբեջանին: Այս ինքնաթիռները վտանգավոր են նրանով, որ ադրբեջանական ՌՕՈ-ում դրանք կլինեն իրական առաջին բազմանպատակ ինքնաթիռները՝ կործանիչի մեծ հնարավորություններով: Ի դեպ, «F-16C»-ի պատմությունը շատ հետաքրքիր է նրանով, որ այն ևս, ի սկզբանե, ստեղծվել էր որպես թեթև կործանիչ՝ օդային մոտակա մարտերի համար: Առաջին իսկ կիրառությամբ այն ապացուցեց իր կոչումը, սակայն լինելով շատ հարմար մեքենա, շուտով կատարելագործվեց և դարձավ բազմանպատակ: 1991թ. սկսած «F-16C» կործանիչները բազմիցս կիրառվել են վերգետնյա հարվածների համար և մեծ մասամբ իրենց արդարացրել են: Ամերիկյան այս կործանիչը, իր չափերով լինելով նույնիսկ ավելի փոքր, քան «МиГ-29»-ը, և ունենալով ընդամենը մեկ շարժիչ, ունի ավելի հզոր տվյալներ: Մասնավորապես, լրիվ վառելիքի պայմաններում (ներքին բաքերում՝ 3200-3500 կգ) կործանիչը կարող է կրել մինչև 8500 կգ բեռ, որից ավելի քան 5000 կգ ռումբ: Նման բեռով այն կարող է թռչել մինչև 2000 կմ: «F-16C»-ը կենտրոնական կախոցներից կարող է կրել մինչև 1587 կգ բեռ, կան նաև 1000 կգ կրող կախոցներ: Ինչպես կարող եք նկատել, սա անհամեմատելի է «МиГ-29»-ի հետ: Զարմանալի չէ, որ այս կործանիչն աշխարհում ամենատարածվածն է:

Ադրբեջանական ՌՕՈ-ի մնացած ինքնաթիռներից առանձնակի ուշադրության են արժանի «Су-24» և «Су-25» ինքնաթիռները, որոնք մարտական բավական հզոր միջոցներ են, սակայն սրանց հետ կապված ևս բազում խնդիրներ կան: Նախ՝ դրանք բավական հին են, չեն կարող կիրառվել թույլատրելի բոլոր ռեժիմներում, հետո՝ չեն կրում ժամանակակից նշանառման սարքավորումներ և գերձգրիտ սպառազինություն, որոնց հասցրած վնասները, սովորական սպառազինության հետ համեմատած, զգալիորեն մեծ են: ՕՀՄ-ի կիրառությունն արդյունավետ չէ հատկապես լեռնային տեղանքում: Եթե խորհրդային փորձառու օդաչուներն այս ինքնաթիռներով ռմբակոծություն կատարելիս երբեմն սխալվում էին[4], ապա նույնը կարող են անել նաև ադրբեջանական օդաչուները, որոնք նախորդների նման թռիչքաժամեր և մարտական կիրառության փորձ չունեն: Առանձնապես հետաքրքիր է «Су-24» ռմբակոծիչը, որը, սակայն, ևս քանակապես քիչ է: Հատկանշական է, որ 2011թ. Բաքվի զորահանդեսին այս ռմբակոծիչները չմասնակցեցին:

Ժամանակին որոշակի լուրեր շրջանառվեցին Ադրբեջանի կողմից չին-պակիստանյան «JF-17» ինքնաթիռի ձեռքբերման մասին, որը, սակայն, դեռ չի իրականացվել: Այս ինքնաթիռն առայժմ անհասկանալի է՝ կործանի՞չ է, կործանիչ-ռմբակոծի՞չ, թե՞ ուղղակի գրոհիչ: Ինչևէ, հայկական

[4] Օդաչուների ռմբահարության սխալների պատճառով 1994 թ. մարտի 25-ին Հորադիզում երկու ինքնաթիռ հարվածեց ադրբեջանական դիրքերին:

բանակի համար մեծ վտանգ չի ներկայացնում, քանի որ նախ՝ չի կարող կրել մեծ ռումբեր, հետո՝ դեռ լիովին փորձարկված չէ հատկապես մարտական գործողությունների ժամանակ: Այս ինքնաթիռի բարձրակարգությունը կասկածելի է նաև նրանով, որ այն ստեղծված է խորհրդային և այլ հին տեխնոլոգիաների չին-պակիստանյան տեղայնացմամբ, որոնք, ինչպես ցույց է տվել փորձը, զիջում են իրենց բնօրինակներին: Փաստորեն, ադրբեջանական ՌՕՈ-ն որդեգրում է «երկինքնաթիռային» մոդելը՝«МиГ-29» և «Су-25», ինչը ընդունված է շատ երկրներում: 2015թ. տեղեկություններ հայտնվեցին Ադրբեջանի կողմից ռուսական «Су-27» կործանիչների ձեռքբերման հավանականության մասին:

Ադրբեջանի ուղղաթիռները, ինչպես նշեցինք, արդեն բավական հին են, և դրանց քանակն էլ այդքան մեծ չէ: Դրանք չունեն գերձշգրիտ սպառազինություն և արդիական սարքավորումներ: «Ми-24» և «Ми-8» ուղղաթիռները մարտական բազում գործողություններում կիրառված և փորձված մեքենաներ են, սակայն դրանք արդեն բարոյապես հնացած են:

«Ми-24»-ի հիմնական թերությունը, որպես հարվածային ուղղաթիռ, չափերն ու շարժիչներն են: Լրացուցիչ դեսանտային բաժինն արդեն վաղուց իրեն սպառել է: Իր դասի մեջ ոչ մի ուղղաթիռ այսօր չունի նման բաժին, հետևաբար, այսպիսի չափեր և քաշ: Դեռ աֆղանական պատերազմի ժամանակ մասնագետները եկան այն եզրակացության, որ «Ми-24» ուղղաթիռի քարշազինվածությունը (էներգազինվածությունը) քիչ է հատկապես բարձրլեռնային պայմաններում, որտեղ շարժիչների հզորությունը զգալիորեն նվազում է: 1999թ. մայիս-հուլիս ամիսներին Հնդկաստանի և Պակիստանի միջև

տեղի ունեցած Կարգիլյան հակամարտության ժամանակ կրկին ապացուցվեց, որ «Ми-24»-ը և նույնիսկ ավելի կատարելագործված «Ми-35»-ը կաղում են շարժիչների բազում խնդիրներից, որոնցից է բարձրաթռիչք լինելը: 3-4 կմ բարձրության վրա նրանք նորից չեն կարողանում մարտական խնդիրներ կատարել: Նաև սա էր պատճառը, որ հնդկական բանակը վերջերս հրաժարվեց ձեռք բերել ռուսական անգամ նոր «Ми-28» ուղղաթիռներ՝ որոշում կայացնելով հօգուտ ամերիկյան ուղղաթիռների:

Ադրբեջանը ներկայում ձեռք է բերում «Ми-35» ուղղաթիռներ: 2010թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ռուսական «Роствертол» ընկերության հետ կնքվել է մարտական «Ми-35М» 24 միավոր ուղղաթիռների մատակարարման պայմանագիր: Այդ ուղղաթիռներից որոշ քանակություն արդեն մատակարարվել է: Մամուլում տեղեկություններ հայտնվեցին դրանց քանակի մեծացման վերաբերյալ: Իհարկե, ինչպես նշվեց, այս ուղղաթիռները ևս մեծ խնդիրներ ունեն և գերժամանակակից չեն, սակայն դրանք, սովորական «Ми-24»-երի համեմատ, ունեն զգալիորեն բարելավված մարտական հնարավորություններ և զրահատեխնիկայի դեմ պայքարում բավական լուրջ գործոններ են: Ներկայում ադրբեջանական բանակը հիմնական շեշտը դնում է մարտական այս ուղղաթիռների վրա, որոնք մատակարարվում են համազորային բրիգադներին:

Ադրբեջանը Ուկրաինայի և Հարավաֆրիկյան հանրապետության մասնագետների հետ լրջորեն իրականացնում է հին «Ми-24» ուղղաթիռների կատարելագործման աշխատանքներ: Ուղղաթիռները, ինչքան էլ կատարելագործվեն,

հին են, սակայն նոր սարքավորումները, սպառազինությունը և թեթևացված քաշը բավական բարձրացրել են այս ուղղաթիռների մարտական հնարավորությունները: Այս մոդելը բավական հետաքրքիր լուծում է, հիմնական թերությունները վերացված են: Մասնավորապես՝ բարելավված է ուղղաթիռի սպառազինության համակարգը, որը շատ կարևոր է: Ժամանակի ընթացքում սրանք, ամենայն հավանականությամբ, կհանվեն սպառազինությունից, քանի որ «Ми-35» ուղղաթիռների քանակն ավելացվում է:

Սրանից բացի, մոտ ապագայում Ադրբեջանը կարող է ձեռք բերել Թուրքիայում արտոնագրով արտադրվող իտալական «T-129» մարտական ուղղաթիռներ, որոնք հարվածային բավական հզոր միջոցներ են: Այդ ուղղաթիռների արտադրությանը մասնակցելու առաջարկ էր արվել Թուրքիայի կողմից դեռևս 2010թ.:

Ադրբեջանը սահմանապահ զորքերի համար օդանավակայան է կառուցում Բելիազանի շրջանում: Ի՞նչ է նշանակում սահմանապահ զորքերի համար առանձին օդանավակայանի կառուցումը: Իրականում այդ նոր օդանավակայանը կառուցվում է Արցախի հարավարևելյան սահմանների ուղղությամբ և մարտական գործողությունների վերսկսման դեպքում այդտեղ կարող են տեղակայվել մարտական ԹՍ-ներ: Հավանաբար, ադրբեջանական ԳՇ-ը հաշվել է, որ այդ ուղղությամբ ակտիվորեն գործելու համար օդանավակայանները չէին բավարարում:

Ադրբեջանական ՌՕՈՒ-ն, ինչպես տեսանք, տեխնիկապես բազմազան են և համալրված հիմնականում ոչ արդիական մեքենաներով: Նման բազմազանությունը և հատ-

կապես ոչ գերճշգրիտ սպառազինությունների կիրառությունն ու կառավարման հին մեթոդները չեն կարող դրական ազդեցություն թողնել մարտական հնարավորությունների վրա: Ռազմական տեխնիկայի քանակով ոչ այնքան մեծ ադրբեջանական ՌՕՈՒ-ը կազմված են մի քանի տեսակի ինքնաթիռներից, որոնք, բնականաբար, պահանջում են առանձին՝ միմյանցից անկախ սպասարկումներ, սպառազինություն, մասնագիտացում և այլն: Սակայն սա դեռ խնդիրների ամբողջ փաթեթը չէ: Արցախյան գոյամարտի ժամանակ նույն ադրբեջանական ՌՕՈՒ-ը, զինված լինելով բազմաքանակ տեխնիկայով և փորձառու օդաչուներով, կատարելով մոտ 10.000 մարտական թռիչք[5], նշանակալի ոչ մի հաջողության չհասան և կորցրեցին մոտ 30 ԹՍ: Նկատենք, որ մարտական գործողությունների ժամանակ հայկական օդային հակազդեցությունը, բնականաբար, շատ ավելի թույլ էր, քան հիմա:

Հաշվի առնելով մարտական ավիացիայի կիրառության համաշխարհային փորձը՝ մի քանի խոսքով ներկայացնենք, թե ինչպիսին կարող են լինել ադրբեջանական ՌՕՈՒ-ի հնարավորությունները մարտական ակտիվ և լայնածավալ գործողությունների վերսկսման ժամանակ:

Ադրբեջանական բանակի ղեկավարվող ԹՍ-ների ընդհանուր քանակն անցնում է 100-ից, ինչն առաջին հայացքից լուրջ թիվ է, իսկ ընդհանուր ԹՍ-ները կարող են լինել մինչև

[5] Թվերը ստացել ենք հաշվարկային մեթոդով: Երբեմն ադրբեջանական ավիացիան կատարում էր օրական 10 և ավելի թռիչք: Նման ակտիվությամբ թռիչքներ են կատարվել 1992-1994 թթ., դրանից առաջ կատարված թռիչքները եղել են քիչ պակաս: Միջինը ընդունելով 5-6 թռիչք օրական, պատերազմի ավելի քան 1800 օրերի դեպքում ստացվում է 9000-10800 թռիչք:

300 միավոր: Անգամ 60-70 % մարտական պատրաստականության դեպքում (*ինչը բացառիկ և դժվար ձեռք բերվող ցուցանիշ չէ*) նշված քանակի ԹՍ-ները կարող են օրական կատարել մինչև 150-200 և ավելի մարտական թռիչք: Հանկարծակի հարձակման դեպքում նման քանակի մարտական և խանգարող թռիչքները տեսականորեն կարող են զգալի վնաս հասցնել ՀՀ և ԼՂՀ ԶՈւ-ին, պաշտպանական կառույցներին և խաղաղ բնակչությանը: ՀՕՊ-ի՝ միայն վերգետնյա համալիրներով կազմակերպված օդային հարվածների դեմ պայքարում, անհնար է հասնել մեծ արդյունքների: Նման քանակության սարքերը կարող են ուղղակի փորձել քանակով խեղդել ՀՕՊ-ին:

Ավիացիայի կիրառության և ՀՕՊ համալիրների հակազդեցության համաշխարհային փորձը վկայում է, որ մարտական պայմաններում խոցված յուրաքանչյուր ինքնաթիռի վրա միջինը ծախսվել է «երկիր-երկինք» դասի առնվազն 5 հրթիռ: Հատկապես խորհրդային ԶՀՀ-ներն արձանագրում են նման և ավելի վատ ցուցանիշներ: Մինչև օրս զրեթե իդեալական պայմաններում լավագույն ցուցանիշն ապահոված ամերիկյան «Patriot» ԶՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված ԹՍ-ի համար ծախսել է 1-3,5 հրթիռ:

Ադրբեջանական ավիացիայի մարտական գործողությունները դադարեցնելու համար, ասել է թե, որպեսզի այն զրկվի օդային գերազանցությունից, պետք է գոնե 2 օր անընդմեջ նրանց հասցվի 15-20 % վնաս: Եթե 2 օր անընդմեջ օրական խոցվի առնվազն 20-30 ինքնաթիռ կամ գոնե 10 ինքնաթիռ, ապա դրանք կարող են դադարեցնել թռիչքները: Սակայն այստեղ ավելի շատ կարող է դեր խաղալ քաղաքա-

կան որոշումը և զոհերի հետ հաշվի նստելու հանգամանքը: Անգամ չհաշվելով ԶՀՀ-ի կորուստը, դրանց ժամանակավոր շարքից դուրս գալը՝ հրթիռների մեծ քանակ է հարկավոր ծախսել այդ ցուցանիշն ապահովելու համար (օրական մինչև 100-150 հրթիռ): Պարզ է, որ սա անմատչելի խնդիր է: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հրթիռներ կարող են արձակվել ուղղակի շեղող ԹՍ-ների վրա, ինչն անօգուտ ծախս է, ապա ԶՀՀ-ներն ուղղակի չեն կարող դիմանալ նման ծանրաբեռնվածությանը: Սակայն մյուս կողմից՝ մենք այստեղ նկարագրեցինք արդեն իրողություն դարձած օդային մի գերակայություն, որում ամեն ինչ բարձր մակարդակի վրա էր, ամեն ինչ հստակ, անթերի աշխատում էր. դա, այսպես կոչված, ամերիկյան օդային հարձակման մի մոդել է: Մարտական մեծաքանակ թռիչքներ կազմակերպելը, իրականացնելը և նպատակին ծառայեցնելը բավական դժվար գործընթաց է, որը պահանջում է ճշգրիտ պլանավորում, նրբագույն իրազործում, մարտական մեծ հմտություններ և այլն: Մեկ օրում 100 ինքնաթիռ օդ բարձրացնելը, տարբեր խնդիրներ առաջադրելն ու իրականացնելը դյուրին գործ չէ:

Հայտնի է, որ նման ռազմագործողություն իրականացնելու համար հարկավոր են ավտոմատացված բարդ համակարգեր, օդային ղեկավարման կետեր, գերճշգրիտ հարվածային միջոցներ, մասնագիտական բարձր որակներ և այլն, որոնք այսօր ադրբեջանական բանակում բացակայում են: Ապրիլյան պատերազմը ցույց տվեց նաև, որ ադրբեջանական օդուժը կարող է ծանր կորուստներ կրել մասսայական թռիչքների դեպքում:

Մենք հաշվեցինք, թե ադրբեջանական ԶՀՀ-ները տեսականորեն առավելագույնը ինչի կարող են հասնել, սակայն իրականությունն այլ բան է ասում: Խնդիրը բարդանում է հատկապես սպառազինության կիրառությամբ: Լեռնային պայմաններում օրական 200-300 թռիչքն էլ կարող է մեծ արդյունք չապահովել, եթե այդ հարվածները չլինեն գերճշգրիտ, ժամանակակից և հզոր սպառազինությամբ: Արդրեջանական ՌՕՈւ-ը զինված չեն նման սպառազինության մեծ քանակով, իսկ ԹՍ-ներն էլ դրանք կիրառելու մեծ հնարավորություն չունեն: Այն տեսակետը, որ գումարների և արտասահմանյան մասնագետների շնորհիվ նրանք վերը նշված ինքնաթիռներից կարող են գերճշգրիտ միջոցներ կիրառել, ոչնչով հիմնավորված չէ: Որպես ցայտուն օրինակ տեղին է նշել Հյուսիսատլանտյան դաշինքի օդային գործողությունները Լիբիայում: Ինչպես հայտնի է, դաշնակիցները բոլորը միասին մարտական գործողությունների համար սկզբից հատկացրել էին մոտ 350 մարտական ԹՍ: Դրանց թվում էին գերժամանակակից եվրոպական և ամերիկյան կործանիչներ ու ռմբակոծիչներ, որոնք զինված էին գերճշգրիտ խոցման միջոցներով, մինչև իսկ օպերատիվ-մարտավարական ԹՀ-ներով: 6 ամսում դաշնակիցները բավական արդիական և հզոր սպառազինությամբ (որոնցից, բնականաբար, Ադրբեջանը չունի) կատարեցին մոտ 9000 մարտական թռիչք (ընդհանուր թռիչքները գերազանցում են 23000-ը), երբեմն դրանց քանակն օրական հասնում էր մինչև 100-150-ի: Բացի ավիացիայի մարտական թռիչքներից, դաշնակիցների նավերից արձակվել է նաև ավելի քան 110 միավոր մեծ թնավոր հրթիռ: Արդյունքները բոլորին են հայտնի, գործողությունները ձգձգվեցին բավական երկար ժամանակ: Դժվար չէ դաշնակիցների հնարավորությունները համեմատել ադրբեջանական ՌՕՈւ-ի հնարավորությունների հետ: Սակայն խնդիրը միայն քանակական համեմատությունը չէ: Դաշնակիցների մի քանի անգամ մեծ ուժերը զինված են նաև աշխարհի ամենաարդիական համակարգերով և սպառազինությամբ, մասնագետները պատրաստության բարձր մակարդակ ունեն, բավական հարուստ փորձ, հակառակորդը հիմնականում գտնվում է հարթավայրում, ինչը նշանակում է, որ ցանկացած նշանակետ հեշտությամբ կարելի է հայտնաբերել, իսկ լիբիական ՀՕՊ-ը չափազանց ցածր մակարդակի վրա էր: Ակնհայտ է, որ Ադրբեջանի դեպքում բոլորովին այլ բան կարող է ստացվել, քանի որ առկա են բոլորովին այլ պայմաններ նաև կողմերի պատերազմական ընդհանուր խնդիրների առումով, ինչը միանշանակ ադրբեջանական օդուժի օգտին չէ:

Սովորաբար ՌՕՈւ-ի հաջող կիրառության փորձը, որը հիմնականում պատկանում է սահմանափակ թվով երկրների, իրագործվում է նորագույն և հզորագույն միջոցների գերլարմամբ ու մեծ ծախսերով: Դրանց համար անհրաժեշտ են բազում բաղադրիչներ, որոնք ներկայում Ադրբեջանում չկան: Այստեղ խնդիրը հատկապես գերճշգրիտ սպառազինություններն են: Ճիշտ է, դաշնակիցների անգամ այս ցուցանիշները հասանելի չեն Ադրբեջանին, սակայն իրական հաջողության համար ՆԱՏՕ-ն պիտի կատարեր ոչ թե օրական առավելագույնը 100-150, այլ՝ 1000 թռիչք, ինչպես դա իրականացվում էր նախկինում: Որպես համեմատություն՝ հիշենք կոալիցիոն ուժերի գործողություններն Իրաքում, Հա-

ռավելավիայում և այլն, որտեղ օրական հազարավոր թռիչքներ էին կատարվում: Իսկ այդ 22.000 թռիչքները կատարվում էին մի քանի օրում, սակայն այն ժամանակ կար ԱՄՆ-ն և ներգրավված էր ավելի քան 1.500-2.000 մարտական ինքնաթիռ: Ամերիկյան այդ մոդելը ևս կայացել է տասնյակ տարիների ընթացքում: Այն, ինչ իրականացրել են ամերիկացիները, փորձել են կրկնել արաբական երկրների բանակները, Պակիստանը, Մեծ Բրիտանիան, ՌԴ-ն, սակայն ոչ այնքան հաջող: Ինչպես երևում է, Ադրբեջանի համար դա անգամ 5 մլրդ դոլարանոց բյուջեով հասանելի չէ:

Մարտական ավիացիայի կիրառությունը ոչ գերճշգրիտ սպառազինությամբ մինչև օրս լավագույն դեպքում ապահովել է 30-35 տոկոս հարվածների ճշտություն կամ արդյունավետություն: Այն էլ՝ նշված ցուցանիշն ամերիկացիներն ապահովել են միայն բազում միջոցառումների ապահովման արդյունքում: Այլ ՌՕՈ-ի կողմից նման կիրառությունների արդյունավետությունը չի գերազանցել 20 տոկոսը: Մարտական պայմաններում հակառակորդի ՀՕՊ-ի կողմից խոցված յուրաքանչյուր ԹՍ-ի փոխարեն կիրառվում է երկուսը, որպեսզի չեզոքացվի զենիթային այդ միջոցը:

Թե ինչպիսի հնարավորություններ ունի հայկական ՀՕՊ-ը պատերազմից հետո, արդեն մի քանի անգամ ապացուցվել է զորավարժությունների ժամանակ: Ներկայում հայկական ՀՕՊ-ը բազմաշերտ, թվային տեխնոլոգիաներով հագեցած համակարգ է, որն ունի վեց դիվիզիոն «Ս-300» համալիրներ:

Ռազմական ամենափայլուն գործողությունների ժամանակ անգամ ամերիկյան ՌՕՈ-ն մարտական թռիչքների

մոտ կեսը հատկացնում է ՀՕՊ-ի չեզոքացմանը, իսկ առաջին հարվածի ժամանակ հարվածային երկու ԹՍ-ների ուղեկցում է ՌԷՊ-ի առնվազն մեկ ինքնաթիռ, այսինքն՝ առաջին հարվածի դեպքում ադրբեջանական ԹՍ-ներին հասցված հարվածները կարող են տապալել օդային ողջ հարձակումը: Շատ երկրներ են փորձում իրենց ՌՕՈ-ն նմանեցնել ամերիկյան օդուժին, սակայն դա ընդամենը ցանկություն է, իսկ ադրբեջանական տարբերակն առհասարակ նման հնարավորություն չունի, քանի որ հին են մեթոդները, մոտեցումներն ու միջոցները:

Այստեղ մի հատկանշական դեպք կա, որի քննությունը որոշակի հետևությունների տեղիք է տալիս: 2013թ. դեկտեմբերի 26-ին Ադրբեջանի Թազին (նախկին Նաստնի) բնակավայրում տեղակայված ռազմական օդանավակայաններից մեկում դժբախտ պատահար գրանցվեց: Վրաստանի քաղաքացի Յուրի Կուլաչկովը, որը ռազմաօդային ուժերի «Su-25» ինքնաթիռը պատրաստում էր ուսումնական թռիչքի, ընկել էր օդանավի ռեակտիվի շարժիչի տուրբինի մեջ և մահացել: Կուլաչկովը ինքնաթիռի տեխնիկն էր: Մասնագիտական տեսանկյունից այս տվյալների մեջ մի քանի հետաքրքիր փաստ կարելի է արձանագրել. նախ և առաջ՝ ի՞նչ գործ ունի Վրաստանի քաղաքացին ադրբեջանական ՌՕՈ-ում, եթե դա, ասենք, համատեղ զորավարժություն չէ: Ադրբեջանական կայքերից մեկում նշված էր, որ Կուլաչկովը եղել է գործուղման մեջ:

Սա կարող է մի քանի բան նշանակել.

- ✓ Ադրբեջանը չի կարողանում շահագործել տվյալ տեսակի ինքնաթիռները և մարտական գործողությունների ժամանակ օգտվում է վարձկանների ծառայությունից,
- ✓ Ադրբեջանը զբաղվում է այս տեսակի ինքնաթիռների կատարելագործմամբ կամ վերանորոգմամբ և օգտվում է վրացական կողմի ծառայություններից: Նման հնարավորությունն առկա է, քանի որ Վրաստանում այս ինքնաթիռների վերանորոգման գործարան կա:

Երկրորդ դեպքում լրացուցիչ հարցեր են առաջանում: Այն է՝ վրացական գործարանի ավիատեխնիկը սովորական ուսումնական թռիչք չի սպասարկել, այլ, հավանաբար, փորձնական: Սակայն նա ինչու է Ադրբեջանում, երբ նման թռիչքները իրականացվում են հիմնականում վերանորոգող երկրում, իսկ եթե անգամ Ադրբեջանում է դա իրականացվում, ինչո՞ւ է նման բարձրակարգ տեխնիկը այդքան անփույթ եղել: Նման պատահարների ժամանակ քիչ հավանական է, որ մեղավոր լինի միայն տվյալ անձը. սովորաբար անվտանգության կանոնները խախտում են նաև օդաչուները: Իսկ օդաչուն հավանաբար եղել է ադրբեջանական բանակի սպա: Այս բոլոր տարբերակները, անկախ կոնկրետ մեկի հավանականությունից, բերում են այն եզրակացության, որ ադրբեջանական ՌՕՈ-ն, չնայած ահռելի ծախսերին և ձեռնարկվող միջոցներին, դեռ շատ հեռու է մարտունակ և բարձրակարգ լինելուց, ինչպես ներկայացվում է: Եթե տվյալ

դեպքում խոսքը համեմատաբար հասարակ ինքնաթիռի մասին է, ապա ինչպիսի՞ն է վիճակը ավելի բարդ մեքենաներ հանդիսացող կործանիչների պարագայում: Վերջերս բացահայտվեց այս զարմանալի պատմության ողջ թնջուկը: Պարզվում է, դեռ հինգ տարի առաջ Ադրբեջանը Վրաստանի հետ պայմանագիր է կնքել, որպեսզի Թբիլիսիի ավիագործարանը Սումգայիթում կառուցի ավիավերանորոգման գործարան, տեխնոլոգիաներ փոխանցի, մասնագետներ պատրաստի և շուրջ երկու տասնյակ ինքնաթիռներ տրամադրի ադրբեջանական կողմին: Գործարքի արժեքը կազմել է մոտ 200 միլիոն դոլար: Սակայն ռուս-վրացական պատերազմը խանգարել է այս գործարքի իրականացմանը, չնայած հետագայում այն վերսկսել են, և Սումգայիթում բացել վերանորոգման մի գործարան:

Չի բացառվում, որ իրականում ադրբեջանական կործանիչների շահագործումն իրականացնում են ուկրաինացի մասնագետները և իսրայելական օդաչուները:

Ադրբեջանական օդուժը, ինչպես արդեն նշեցինք, զարգանում է՝ որոշակիորեն շեշտադրում անելով մարտական ուղղաթիռների վրա, և շատերը սա օրինաչափ ու օգտակար են համարում, քանի որ մարտական հավանական գործողությունները լեռնային-անտառային տեղանքում են լինելու: Մարտական այդ ուղղաթիռներն արևմտյան չափանիշներով հիմնականում տեղակայվում են համազորային բրիգադների կազմում, սակայն այստեղ մի էական խնդիր կա. Ադրբեջանը, այսպես կոչված, զորային օդուժը զարգացնելով արևմտյան չափանիշներով՝ մարտավարական օդուժը թողնում է խորհրդային մակարդակի վրա, որը մեծագույն սխալ է: Օդուժը

առանց մարտավարական հզոր բաղադրիչի չի կարող արդյունավետ գործել, քանի որ անկանոն ցրված ու առանձին գործող ՀՕՊ միջոցներն ուղղակի «կբզկտեն» ուղղաթիռային նման օդուժին: Ահա, այսպիսին է ադրբեջանական ամենամարտունակ և հզոր զորատեսակի մարտական հնարավորությունը, զորատեսակ, որը շատ անգամ անհիմն ներկայացվում է որպես անպարտելի:

Հրթիռահրետանային միջոցները

Ադրբեջանական բանակի հրետանին բաղկացած է շուրջ 1000-1500 առանց ականանետերի տարատեսակ հրանոթներից, հարվածային այլ միջոցներից: Դրանք ավանդական հրետանային՝ հիմնականում խորհրդային միջոցներ են: Այդ քանակությունից՝ մեծ նշանակություն ունեն մարտավարական հրթիռային «Точка-У» (9K79-1) համալիրները, «Смерч» (9K58), «Ураган» (9K57), «LAR-160», «T-300» և «Lynx» ՀԿՌՀ-ը: Ադրբեջանը ցանկություն ունի ձեռք բերել նաև իսրայելական օպերատիվ-մարտավարական «LORA (Long – Range Attack)» հրթիռներ, որոնք իրենց տեսակով բացառիկ նմուշներ են: Նշված հրթիռներից մի քանիսը համարվում են գերճշգրիտ և հեռահար սպառազինություն: Իսրայելական «Lynx» համակարգի ոչ բոլոր տեսակի հրթիռներն են գերճշգրիտ, և ընդհանրապես այս համակարգը մեծ խնդիրներ ունի, իսկ ռուսական «Смерч» (9K58)-ը, որքան էլ ներկայացվում է որպես հարձակողական հզոր միջոց, այնուամենայնիվ, Ադրբեջանում դեռ գերճշգրիտ չէ:

«Точка-У» համալիրն ինքնագնաց մեքենայի վրա ունի մեկ հրթիռ (9M79-1K կամ 9M79-1Ф), որի մարտական մասը ավելի քան 400 կգ է և կարող է նշանակետեր խոցել մինչև 120 կմ հեռավորության վրա: Առավելագույն հեռավորության վրա հրթիռի սխալվելու չափը կազմում է մոտ 200-300 մ՝ չնայած մարտական պայմաններում եղել են մինչև 50 մ դիպուկության դեպքեր: Համալիրների քանակը ստույգ հայտնի չէ, սակայն եթե այն մոտենում է մեկ տասնյակի, դա արդեն լուրջ գործոն է: Նման հրթիռներից պաշտպանվելը շատ դժվար է: Կան ընդամենը մեկ-երկու զենիթահրթիռային համալիրներ, որոնք ի վիճակի են խոցել մեկ-երկու նման հրթիռ՝ ոչ մեծ հուսալիությամբ:

Մեծ ուշադրության է արժանի զորահանդեսին ցուցադրված իսրայելական ՀԿՌՀ-ն: «Lynx»-ն ունի հրթիռների մի քանի տեսակի արձակման հնարավորություն: Տարբեր տվյալներով՝ այն կարող է արձակել 122 մմ-ոց, 160 մմ-ոց, 300 մմ-ոց և 330 մմ-ոց հրթիռներ կամ ԱԹՍ-ներ: Առանձնապես հետաքրքիր են մեծ հզորությամբ և հեռահարությամբ օժտված 300 մմ-ոց մարտավարական «EXTRA» հրթիռները, ավելի մեծ թնավոր հրթիռները և ԱԹՍ-եր հանդիսացող «DELILAH»-ները: Սակայն ինչպես պարզվում է, այս ՀԿՌՀ-ի հետ կապված լուրջ խնդիրներ կան:

Այսպես, 2008 թ. Ադրբեջանը, իբր, Իսրայելից գնել էր «Lynx» տեսակի ՀԿՌՀ 3 արձակման կայանքներ, որոնք հապճեպ ցուցադրվեցին զորահանդեսին, մինչդեռ դրանք արտադրվել են Ղազախստանում: Հետո դրանց քանակն ավելացվել է. տարբեր տվյալներով գնվել է 300 մմ «Extra» տեսակի 50 հրթիռ: Հատկանշական է, որ Ղազախստանում

(«Նայզա» անվանումով) համանման ՀԿՌՀ-ի հետ կապված մեքենայությունների արդյունքում ձերբակալվել են այդ երկրի պաշտպանության նախարարության բարձրաստիճան մի շարք աշխատակիցներ: Պարզվել է, որ իսրայելական «Israel Military industries – Soltam Systems LTD» ընկերությունների արտադրած հիշյալ ՀԿՌՀ-ն և հրետանային համակարգերը փորձարկման ժամանակ դրսևորել են կառուցվածքային և տեխնոլոգիական էական թերություններ: Ինչպես հայտնի է, Ադրբեջանում նման խնդիրները չեն կարևորվում, քանի որ առաջին տեղում ձևական կողմն է: Նույնպիսի կիսատ-պռատություն էր 2011թ. սեպտեմբերի 12-ին Արցախում խոցված ադրբեջանական ԱԹՍ-ի հետ կապված, որն իսրայելական տարբեր մոդելների զուգորդում էր կամ այսպես ասած՝ սուրոգատ: Ադրբեջանը մեկ անգամ ցուցադրել է այս զենքի մարտական հրթիռների արձակումը, սակայն դա դեռևս քիչ բան է նշանակում:

Ադրբեջանը մեծ հետաքրքրություն ունի նաև ռուսական համապատասխան հրթիռների նկատմամբ, ինչը չափազանց նուրբ, քաղաքական ու ռազմատեխնիկական հարց է դառնում: Նման հրթիռները, բացի ռազմական նշանակությունից, ունեն նաև քաղաքական մեծ նշանակություն:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանը մեծ համակրանք ունի ՀԿՌՀ-ի նկատմամբ՝ որակով թե անորակ, մեծ, թե փոքր, հեռահար, թե մոտիկ գործողության: Ասվածի վկայություններից է նաև Բոսնիա-Հերցեգովինայից ձեռք բերված 10 միավոր «RAK-12» (M63 Plamen) 128 մմ-ոց ՀԿՌՀ-ն՝ դրանց համար նախատեսված 20 հազար հրթիռներով: Հատուկ նշենք, որ վերջինիս հեռահարությունը կազմում է ընդամենը

8.6-12 կմ, ինչը մեր վերը ասած բոլոր տեսակետների հավաստումն է: Եթե ադրբեջանական բանակում արդեն կար խորհրդային «Смерч» (9K58) ՀԿՌՀ-ն՝ այն էլ մեծ քանակությամբ, որն այս կամ այն կերպ համարվում է իր տեսակի մեջ լավագույններից մեկը, ապա ի՞նչ իմաստ ուներ գնել դրա նման իսրայելական համակարգ, առավել ևս թուրքական «T-300», որը անգամ մոդուլային չէ, ինչպես իսրայելականը: Ընդ որում, թուրքական այս ՀԿՌՀ-ն 4-6 միավորի համար (որոնք իրենցից ներկայացնում են չինական «WS-1B» ոչ այնքան լավ ՀԿՌՀ-ի թուրքական կրկնօրինակը) Ադրբեջանը վճարել է մոտ 250 մլն դոլար: Մինչդեռ աշխարհում իրականում իրենց տեսակի մեջ լավագույն ամերիկյան «MLRS» ՀԿՌՀ-ն արժեն 4-7 մլն դոլար:

Մինչև հրադադարի կնքումը Ադրբեջանը հայ խաղաղ բնակչության նկատմամբ կիրառում էր «Գրад» ՀԿՌՀ, 500 կգանոց և ավելի ծանր ռումբեր: Միտումները նույնն են. այսօր գնվում են հզոր ՕՀՄ-ներ, որոնց դերակատարությունը տեղային վերջին պատերազմներում զգալիորեն աճել է: Եթե ուշադրություն դարձնենք, ապա կտեսնենք, որ ակտիվորեն գնվող սպառազինությունը իր ավերող հատկանիշներով, հեռահարությամբ, դիպուկությամբ և հատկապես քանակով զգալիորեն տարբերվում է նախկինում կիրառվածից: Նախկինում հիմնական ՕՀՄ-ները խորհրդային սովորական սպառազինություն կիրառող ինքնաթիռներն ու ուղղաթիռներն էին, որոնց հետ պայքարում հայկական կողմը ցուցաբերեց հիանալի արդյունքներ, իսկ «Գրад»-ի հրթիռների դիպուկությունը շատ ցածր է, մարտական մասն էլ մոտ է 20 կգ-ին: Ադրբեջանը այդ գործը նորից շարունակում է թուրքական

հրթիռներով և բոսնիական համակարգերով: Սակայն ասպարեզ են մտնում հեռահար ու ճշգրիտ նոր հրթիռներ, մեծ ՀԿՌՀ-ն՝ մի քանի հարյուր կիլոգրամանոց հրթիռներով, որոնց մարտական մասերն անցնում են 100-150 կգ-ից և որոնք ունեն նաև կասետային մարտական մասեր: Ի հայտ են գալիս մարտավարական հրթիռներ ևս, որոնց դիպուկությունը շատ բարձր է, իսկ նրանց հետ պայքարը շատ դժվար է[6]: Ապրիլյան պատերազմը, սակայն, ապացուցեց, որ այդ հեռահար հրթիռային համալիրները այնքան էլ արդյունավետ չեն, իսկ հայկական հրետանին շնորհիվ իր գրագետ գործողությունների կարող է դրանք չեզոքացնել: Վերջերս Ադրբեջանի գնած հրետանային համալիրները և հրանոթները ևս աչքի են ընկնում իրենց հեռահարությամբ և հզորությամբ (203,2 մմ տրամաչափի «2C7 Пион», 152 մմ տրամաչափի «2A36 Гиацинт-Б», 152 մմ «Мста-С» և 130 մմ տրամաչափի «M-46» հրետանային համալիրներ): Նման միջոցներով անակնկալ հարվածի դեպքում թշնամին կարող է զգալի վնասներ պատճառել մեր կարևորագույն նշանակետերին: Հարձակողական այս միջոցները, կարող են ոմբակոծել հայկական քաղաքներն ու հաղորդակցության կարևորագույն ուղիները: Համակարգային կիրառությունից բացի, համազորային մարտի ժամանակ դրանք կարող են կիրառվել նաև այլ ձևով: Խոսքը, իհարկե, մեր բնակավայրերի և տնտեսական ենթակառույցների մասին է, որոնք կարող են տոտալ ոմբակոծության ենթարկվել՝ անգամ ադրբեջանական ԶՈՒ-ի անհաջողության դեպքում: Այս պարագայում երևան է գալիս

[6] Կա ընդամենը մի քանի դեպք, երբ ամերիկյան կամ ռուսական ամենաարդիական համալիրները խոցել են նման հրթիռները:

մի նոր իրողություն, այն է՝ ապագա ռազմական գործողությունների ժամանակ ճակատ և թիկունք չի լինի: Պատերազմի բնագիծը կարող է անցնել անգամ Երևանով. ասել է, թե՝ դրա առաջն առնելու համար հարկավոր է պատրաստվել՝ ռազմականապես, տնտեսապես, քաղաքականապես և այլն:

Վերը շարադրվածի առնչությամբ նկատենք, որ իրանահայերբյան պատերազմի ժամանակ (1980-1988 թթ.) տեղի ունեցավ, այսպես կոչված, «քաղաքների պատերազմ», որն ինչ-որ կերպ դարձել է պատերազմի նոր տեսակ:

Ներկայում ադրբեջանական բանակի սպառազինության մեջ գտնվող 203,2 մմ-ոց «2C7 Пион» հրետանային համալիրը հարձակման բավական հզոր միջոց է: Դրա «2A44» հրանոթը սովորական արկերով կարող է թիրախներ խոցել 37,5 կմ հեռավորության վրա, ակտիվ ռեակտիվ արկերով՝ մինչև 55 կմ հեռավորության վրա, իսկ արկերը մոտ երկու անգամ ծանր են 152 մմ-ոց արկերից: Նման համալիրները պատերազմի ժամանակ կիրառվում են սահմանափակ դեպքերում և հատուկ թիրախների նկատմամբ: Դրանք, իրենց հեռահարության հաշվին, հակամարտկոցային մենամարտերից դուրս են:

Նշված առավելություններով հանդերձ՝ նման մեծ հզորության հրանոթահրետանային համալիրներն ունեն լուրջ թերություններ: Դրանք ծանր են, կրակի արագաձգությունը մեծ չէ, իսկ տվյալ համալիրի հրանոթի բարձրացման անկյունը չի անցնում 60°-ից: Փաստորեն, համալիրի ծանրությունը և հրանոթի բարձրացման փոքր անկյունը մեր տարածաշրջանի համար այն դարձնում են անարդյունավետ:

Հետաքրքիր իրադրություն է կապված նաև թուրքական հրթիռների հետ: Թուրքական «Roketsan» ընկերությունն Ադրբեջանին առաջարկում է հրթիռներ, որոնք արդեն շատ հին են: 1970-1980թթ. Արևմուտքում 122 և անգամ մինչև 150-200 մմ-ոց մնացյալ տրամաչափերը համարվեցին փոքր ու հնացած: Այժմ եվրոպական բանակներից շատերում 107 և 122 մմ-ոց տրամաչափի հրթիռներ չեն կիրառվում: Նման հրթիռներ կիրառող համալիրներ կան չինական բանակում: Լայն տարածում են գտել "63" և "81" համարները կրող համալիրները: Նման տրամաչափերի հրթիռները հատկապես շատ են կիրառվում արևելյան հետամնաց բանակներում ու նաև ահաբեկչական կազմակերպությունների կողմից:

Դեռևս 1980-ականներին ամբողջ աշխարհում մեծ սրությամբ դրվեց մինչև 150-200 մմ-ոց չղեկավարվող հրթիռների կիրառության արդյունավետության հարցը: Փոքր տրամաչափի հրթիռների ցրումը չափազանց մեծ է: Դրանց հեռահարության ավելացումը ոչ այնքան դրական, որքան բացասական արդյունք է տալիս, քանի որ հեռահարության ավելացման հետ ավելանում է նաև նշանակետից դրանց շեղման աստիճանը: Եթե փորձ արվի էլեկտրոնային սարքերով այդ հրթիռները դարձնել ճշգրիտ, ապա դրանք շատ թանկարժեք կդառնան, իսկ հեռահարությունը և մարտական մասը, միևնույն է, բավարար չեն լինի: Ըստ այդմ շատ երկրներ հրաժարվեցին մինչև 150-200 մմ-ոց հրթիռներից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին հանրապետությունների և հատկապես ՌԴ-ի սպառազինության մեջ մնացել էին մեծ քանակությամբ 122 մմ-ոց «БМ-21» կայաններ ու դրանց համար նախատեսված հրթիռներ: Դրանք մեծ քանակով կիրառվեցին

1990-ականների տեղային պատերազմներում: Սակայն ներկայում հստակորեն նկատվում է դրանցից հրաժարվելու միտում: ՌԴ-ում ևս մեծ քանակությամբ նման համալիրներ հանվում են սպառազինությունից, իսկ դրանց փոխարինելու են գալիս նոր բազմանպատակ համալիրները, որոնք կարող են կիրառել այլ՝ հատկապես ավելի մեծ տրամաչափի հրթիռներ: Կա նաև ռազմական տեսանկյունից նման հրթիռների կիրառության համար ոչ արդյունավետ, սակայն ոմանց համար շատ կարևոր ոլորտ: Այդպիսի հրթիռներով զանգվածային կրակ է բացվում մեծ բնակավայրերի վրա, քանի որ շեղումներն այստեղ արդեն էական չեն: Իհարկե, Ադրբեջանը արցախյան պատերազմում նման կերպ էր գործում՝ նման հրթիռներով էին Շուշիից հրետակոծվում Ստեփանակերտը և հայկական այլ բնակավայրերը: Սա է պատճառը, որ նրանք շտապում են արտադրել նման հրթիռների մեծ քանակ: Նման հանգամանքներում թուրքական և ադրբեջանական ընկերությունների կողմից արդեն հնացած կամ, լավագույն դեպքում, հնացող, սակայն իրենց գործելաոճին շատ հարազատ զինատեսակների արտադրության հիմնումը ներկայացվում է որպես նոր ու ցնցող ձեռքբերում, սպառազինության կարևոր համալրում:

Թուրքական ընկերություններն ադրբեջանական ռազմաարդյունաբերական համալիրը հիմնականում ներքաշում են ավելի ու ավելի մեծ նախագծերի մեջ: Դա բնական է. մեծ եղբայրը պետք է փոքր եղբորն օգնի: Թուրքական կողմն Ադրբեջանին առաջարկել է միանալ այնպիսի նախագծերի, ինչպիսիք են «Altay» հրասայլի, ուղղաթիռների և այլ սարքավորումների արտադրությունը: Ճիշտ է, դրանք ևս համաշ-

խարհային վերջին ձեռքբերումները չեն, սակայն արդեն բավական մեծ ու հեռանկարային նախագծեր են:

Աշխարհում օրեցօր ավելանում են այն երկրները, որոնք զարգացնում են իրենց ռազմաարդյունաբերական համալիրը, արտադրում են որոշակի զինատեսակներ և դրանք հաջողությամբ վաճառում տարբեր երկրների: Առայժմ համաշխարհային շուկայում իր դիրքերը որոշակիորեն ամրապնդած թուրքական ռազմաարդյունաբերական համալիրն իր հետևից տանում է ադրբեջանական նորաստեղծ գերատեսչությունը: Թուրքական ռազմաարդյունաբերական համալիրը նախանձելի արդյունքներ է գրանցում՝ արտադրության տարեկան աճի ծավալներով: Բավական հետաքրքիր է թուրքական այդ ընկերությունների, ինչպես նաև դրանց ադրբեջանական «դուստր ձեռնարկության ռազմաարդյունաբերական համալիրի առաքումների աշխարհագրությունը: Այսպես՝ Պարսից ծոցի երկրներ, աֆրիկյան որոշ երկրներ, Թուրքմենստան, Ուզբեկստան, Պակիստան, Ադրբեջան, Վրաստան և այլն: Սրանք, բացի Վրաստանից, հիմնականում մուսուլմանական այն երկրներն են, որոնցում մեծ ազդեցություն ու կապեր ունեն ահաբեկչական կազմակերպությունները: Այս երկրներում են ստեղծվում ահաբեկչական բջիջները, դրամական հոսքերը, այստեղ են նրանք ձեռք բերում նորանոր սպառազինություններ և նոր տեխնոլոգիաներ:

Իհարկե, ներկայում թուրքական և հատկապես ադրբեջանական ընկերությունները հիմնականում զբաղված են մեծ մասամբ հնացած զինատեսակների կլոնավորմամբ, սակայն այս ոլորտում տնական և հետևողական աշխատանքը կարող է որոշակի հաջողություններ ապահովել: Այդպիսիք

կարող են համարվել հրաձգային զենքերի որոշ տեսակներ, որոշ սարքավորումներ և հանդերձանքի պարագաներ: Այս ամենը որոշակի հետևության տեղիք է տալիս և չի կարող որոշակի մտահոգություն չառաջացնել, ուստի հարկավոր է կանխարգելիչ համապատասխան հակաքայլեր ձեռնարկել:

Այս ամենից զատ Ադրբեջանը լայնորեն ձեռք է բերում նաև փողային սովորական հրետանի, որի քանակը արդեն բավական մեծ է: Այս հարցում հատկապես վտանգավոր են ինքնագնաց հրետանային կայանները, որոնք մանևրելու և արագ գործելու մեծ ունակություն ունեն:

Զրահատեխնիկական պոտենցիալը

Ադրբեջանական բանակի սպառազինության մեջ կան մեծ քանակությամբ խորհրդային հին «Т-72», կատարելագործված «Т-72» և ռուսական նորագույն «Т-90» տեսակի հրասայլեր ու տարբեր զրահամեքենաներ:

Առաջինների ընդհանուր թվաքանակը կարող է կազմել մինչև 800-1000 միավոր, իսկ երկրորդներինը՝ ավելի քան 1000, այդ թվում՝ մոտ 100 միավոր նոր հրասայլ[7]: Պլանավորվում է նաև վերջինիս քանակը հասցնել շուրջ 500-ի: Ըստ հայտնի տվյալները վերջին տարիներին Ադրբեջանը ձեռք է բերել մոտ 330 միավոր թեթև զրահատեխնիկա և մոտ նույնքան էլ տանկեր:

[7] Կան նաև այլ չհաստատված գնահատականներ, որ իրականում հրասայլերի քանակը մոտ կրկնակի ավելին է, սակայն դրանք հաստատված չեն:

Ներկայումս ադրբեջանական բանակում կա մոտ 700 «Т-72», ավելի քիչ «Т-84», «Т-90» հրասայլ և շուրջ 200 տարատեսակ ինքնագնաց հրետանային միավոր միջոց: Վերջիններս հատկապես կարևոր են հարձակման ժամանակ զրահատեխնիկային աջակցելու համար: Բաքվի զորահանդեսներում ցուցադրված ծանր հրանետները, որոնք ներկայացվում են որպես ճեղքման միջոցներ, որպես այդպիսին, կիրառվելու սահմանափակ հնարավորություններ ունեն:

Տեղեկանք. «ТОС-1А Солнцепёк» կոչվող հրանետները հիմնականում նախատեսված են առանձին նշանակետերի ոչնչացման համար, մեծ մարտակարգերում կիրառվել չեն կարող, քանի որ աշխատում են միայն կանգնած դիրքից. բավականին ծանր են, կիրառումից առաջ նախապատրաստություն են պահանջում, իսկ հեռահարությունը մեծ չէ՝ առավելագույնը՝ 5-6 կմ: Այսինքն՝ դրանք չեն կարող ճեղքում իրականացնող հիմնական միջոցների՝ հրասայլերի հետ կազմել մեկ մարտակարգ, իսկ այլ դեպքերում դրանք կընկնեն հրետանու հարվածի տակ:

Ադրբեջանը կրկին առաջնորդվում է զրահատեխնիկայի մեծ բազմազանությամբ և քանակի ապահովմամբ, մեղմ ասած, առանց որևկին ուշադրություն դարձնելու:

Զրահատեխնիկայի քանակին զուգահեռ՝ երկար ժամանակ չէր մեծացվում ինքնագնաց հրետանային միջոցների քանակը: Ակնհայտորեն, նման միջոցներն առաջնային չէին համարվում, ինչը մասնագետներին եզրակացնելու տեղիք էր տալիս, որ Ադրբեջանը պատրաստվում է ոչ թե ճեղքման, այլ՝ հեռահար ավերման: Ադրբեջանը, հիմնական շեշտը դրել է հայկական պետությունների ենթակառուցվածքները հեռահար կրակով ոչնչացնելու վրա, ինչը անում էին արցախյան պատերազմում: Սա արդեն պետք է բավարար համարել պնդելու, որ նրանք «հակառակորդի» հետ անմիջական շփումից, մարտական լայնածավալ գործողություններից զերադասում են խուսափել, չնայած ամեն կերպ պատրաստվում են նաև դրան:

Ընդհանուր դիտարկումներ

1994թ. ի վեր Ադրբեջանը մեծ տեմպերով սպառազինվում է: Տարբեր հաշվարկներով մինչև 2004-2005թթ. այդ երկիրը սպառազինությունների ձեռքբերման համար տարեկան օգտագործում էր կամ ուղղակի ներկայացնում էր մինչև 300 մլն դոլար գումար: Հաշվարկը կատարվել է այդ տարիների ռազմական տարեկան բյուջեի և զենքերի ձեռքբերման ծավալների զուգորդմամբ: Այսինքն՝ հրադադարի հաստատումից մինչև նշված ժամանակ ծախսվել էր մոտ 3 մլրդ դոլար: 2005-2006թթ. այս ոլորտում սկսվեցին կտրուկ ավելացումները: Ամեն տարի դրա համար ծախսվում կամ հատկացվում է մոտ 1 մլրդ դոլար. թվերը, ի դեպ, գնալով ավելանում են: Այսինքն՝ նախորդ 3-ին հարկավոր է ավելացնել մոտավորապես 5-7 մլրդ դոլար: Իսկ եթե գումարենք բոլորովին վերջերս նշված 3-5 մլրդ դոլարը, ապա ստացվում է շուրջ 12-15 մլրդ դոլար: Իհարկե, որոշ սպառազիններ, հիմնականում նախկին ԽՍՀՄ-ի երկրներից, բոլորովին այլ արժեքով են ներկայացվում, բայց իրականում ձեռք են բերվում մեկ այլ գնով: Այստեղ շատ դժվար է գտնել իրական ծախսերի չափը,

սակայն մենք նկատի ենք առնում միջազգային գները: Մինչև օրս Ադրբեջանը ՌԴ-ից, Ուկրաինայից և Բելառուսից ձեռք է բերել մոտ 220 «Տ-72» հրասայլ, որոնց գինը միջազգային շուկայում կազմում է 1-2 մլն դոլար[8]: Փաստորեն, նշված քանակի ձեռքբերման համար ծախսվել է 220-400 մլն դոլար:

Եթե վերը նշված ընդհանուր գումարն իրական թվերից շեղված է, ապա միայն դեպի նվազում, այսինքն՝ ադրբեջանական ծախսերը փաստացի ավելի մեծ կարող են լինել, քան 12-15 մլրդ դոլարը[9]:

Այս գումարի մեջ են մտնում շուրջ 4 մլրդ դոլար ռուսական սպառազինությունը, այնպես էլ՝ մոտ 2 մլրդ դոլարի հասնող իսրայելական սպառազինությունը: Իսրայելական արտադրողներից մասնավորապես ձեռք են բերվել տարատեսակ, այդ թվում, հավանական է նաև մարտական ԱԹՍ-ներ, հրետանային միջոցներ, այդ թվում նաև մեծ տրամաչափի համազարկային կրակի մոդուլյար կայաններ, հականավային հրթիռային համալիրներ, ՋՀՀ-ներ և հատուկ նշանակության բազում այլ զենք, զինամթերք ու սարքավորումներ:

Ամեն դեպքում ներկայումս ի՞նչ սպառազինություն ունի Ադրբեջանը՝ ծախսելով 15 կամ ավելի մլրդ դոլար գումար: Ստորև հիմնականում կներկայացնենք հարձակողական մեծ սպառազինությունները՝ հրետանի, զրահամեքենաներ: Ըստ հայտնի տվյալների՝ ներկայում ադրբեջանա-

[8] Եթե անգամ հնարավոր է լինում գնել ավելի էժան, միևնույն է, նորմալ վիճակի բերելուն կամ կատարելագործմանն ուղղված ծախսերով, որոնք այսօր գրեթե անխուսափելի են, մոտավորապես կազմում է նշված արժեքը:

[9] Սրա մեջ չեն մտնում ռազմաարդյունաբերական համալիրի համար ծախսված գումարները:

կան բանակում կա 1200-1500 հրասայլ, մոտ 2000 մարտական մեքենա, սակայն հատկապես հետաքրքիր է դրանց բազմազանությունը: Ադրբեջանական բանակը ռեկորդակիր է տարատեսակ ՀԿՌՀ-ների քանակով և ոչ միայն. Սպառազինության մեջ կա արդեն 6-8 տեսակի ՀԿՌՀ: Նույն բազմազանությունն է նաև հրանոթային հրետանու հետ կապված, հատկապես ինքնագնաց, որը բավական կարևոր դերակատարություն ունի շեշտակի հարձակումների ժամանակ: Ներկայում ադրբեջանական բանակում կա խորհրդային 5 տեսակի ինքնագնաց հրետանային կայան և փորձ է կատարվում ձեռք բերել ևս երկու-երեքը՝ Իսրայելից, Թուրքիայից, ՀԱՀ-ից ու Հարավային Կորեայից:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանի ներկայիս սպառազինության գերակշիռ մասը հնացած է կամ տեխնիկապես, կամ բարոյապես: Ավելի քան 12 մլրդ դոլար գումար ծախսելուց հետո նրանք ձեռք են բերել մեծաքանակ սպառազինություն, որի կյանքի տևողությունն առավելագույնը 20 տարի է, երբեմն՝ ավելի քիչ:

Ձեռք բերված նորագույն զինատեսակների մասնաբաժինը չի գերազանցում ընդհանուր քանակի 10%-ը: Ավելին՝ այս բոլոր զենքերով հանդերձ՝ նրանք առարկայական ոչ մի առավելություն չունեն հայկական ուժերի նկատմամբ: 2011 թ. սեպտեմբերի 21-ին Երևանում կայացած զորահանդեսից հետո հենց այս մասին են խոսում արտասահմանյան փորձագետները, որոնք զարմանք են հայտնել, որ այդքան նավթադոլարները, փաստորեն, առնվազն 15 տարում ոչինչ չեն տվել:

Ադրբեջանը տեղեկատվական դաշտում շրջանառության մեջ է դնում այն, որ այսուհետև ձեռք են բերվելու թանկարժեք, նորագույն և հիմնականում գերճշգրիտ սպառազինություն: Ավելին՝ զուգահեռաբար տեղում արտադրվելու են այդպիսիները: Որպես օրինակ բերվում են հենց վերջին մի քանի ձեռքբերումներն Իսրայելից, ՌԴ-ից, պայմանագրեր են կնքվում ուկրաինական հրթիռների արտադրության ոլորտում և այլն: Տեղեկատվություն է հայտնվել այն մասին, որ իբր գերճշգրիտ հրթիռներ են արտադրվելու: Փորձենք հասկանալ նաև այս իրադրությունը:

Նախ, ի՞նչ է գերճշգրիտ զենքը, և ո՞վ է դրա օգտագործողը: Ո՞րն է կոչվում գերճշգրիտ սպառազինություն և հիմնականում ինչի՞ համար է այն նախատեսված: Պարզ ասած՝ գերճշգրիտ զենքերը հիմնականում ավիառումբերը, տարատեսակ հրթիռները և հրետանային այն միջոցներն են, որոնք ունեն ներքին կամ արտաքին ուղղորդման հնարավորություն և սխալվելու շատ փոքր հավանականություն: Նշանակետից կարող են շեղվել մի քանի սանտիմետրից մինչև 1-2 մետր: Սակայն, բնականաբար, գերճշգրիտ զենքը պետք է ունենա նաև իր կրողը և կիրառողը, այսինքն՝ բարձրակարգ տեխնիկական միջոցը և հմուտ մարտիկը: Օրինակ՝ ավիառումբերը պետք է արձակվեն համապատասխան ԹՍ-ներից փորձառու օդաչուների կողմից, հնարավոր է նաև երկրորդ ԹՍ-ի կամ այլ սարքի ուղղորդմամբ: Ադրբեջանական ՌՕՈ-ում չկա նման գոնե մեկ սարք, որը կարող է կիրառել բարձրակարգ գերճշգրիտ հարվածային միջոց, ավելին՝ տեխնիկական և այլ պատճառներով դրանցից ոչ մեկը գրեթե հնարավոր չէ կատարելագործել: Նման ԹՍ ղեկավարող և նման միջոց կիրառող օդաչուների պատրաստումն էլ բավական երկարատև և բարդ գործընթաց է: Պետությունները դրա համար ծախսում են տասնյակ տարիներ և հսկայական միջոցներ: Գլխավոր կործանիչի մասին ամեն ինչ ասվեց, իսկ մնացածն էլ այնքան հին է, որ նման ծախսերն արդարացված չեն: Ադրբեջանական ՌՕՈ-ի ԹՍ-ներից գերճշգրիտ հարձակողական միջոցներ կիրառելու ընդունակ են միայն հարավաֆրիկյան մոդիֆիկացիայի «Ми-24G» և ռուսական նոր «Ми-35М» ուղղաթիռները: Դրանց քանակը մեծ չէ, կիրառած գերճշգրիտ զենքերը հիմնականում հակատանկային հրթիռներն են, որոնք մարտավարական օդակի ամենացածր ներկայացուցիչներն են: Այսինքն՝ ադրբեջանական ՌՕՈ-ը ներկայումս չունեն գերճշգրիտ հարձակողական զենքեր այն քանակով ու որակով, որը որոշիչ կլինի: Անգամ այդ փոքր քանակի մարտական ԱԹՍ-ները, որոնք ևս գերճշգրիտ հարվածային միջոցներ են, մեծ քանակով չեն կարող կիրառվել: Ռուսական օդուժը կամ ԹՍ-ներն անցած 30 տարիների ընթացքում նման միջոցներ կիրառել են մի քանի անգամ, խորհրդանշական դեպքերով:

Հրետանին հիմնականում ներկայացված է խորհրդային հին նմուշներով, որոնք ոչ միայն նման արկեր կիրառել չեն կարող, այլ նաև դրա համար կատարելագործելն է դժվար: Այն ձեռքբերումները, որոնց մասին հատկապես շատ խոսվեց 2013թ. Բաքվի զորահանդեսից հետո, չեն համարվում գերճշգրիտ: Նույն ժամանակ, սակայն, հայկական կողմը ձեռք է բերել գերճշգրիտ և հեռահար այնպիսի միջոցներ, որոնցով կարող է անդառնալի կորուստներ պատճառել ադրբեջանական պետությանը:

Եթե ադրբեջանական բանակն իրականում ունենա գերճշգրիտ հարձակողական միջոցների համապատասխան տեսակների և քանակ, ապա դրանց կիրառման համար պետք է ձեռք բերի բոլորովին նոր տեսակների ԹՍ-ների և հրետանային միջոցների մեծ քանակություն՝ մոտավորապես 100 միավոր ԹՍ և մի 1000 միավոր հրետանային միջոց, իսկ այն 12-15 մլրդ դոլարով ձեռք բերածները և մոտ կրկնակի եղածներն էլ որպես խոտան հանի սպառազինությունից: Օրինակ, 50 միավոր հրետանային նման միջոցի ձեռքբերման համար նվազագույնը հարկավոր է 100-150 մլն դոլար, այն էլ՝ առանց համապատասխան արկերի: Մեկ գերճշգրիտ արկն արժի 50 000-100 000 դոլար: Ինչքան էլ ադրբեջանական հանքերը նավթադոլարներ են բերում, չենք կարծում, որ նրանք պատրաստ են նոր 600-1000 հրանոթներ գնել՝ վճարելով 2-4 մլրդ դոլար, դրանց համար գոնե 1 միլիարդ էլ արկեր գնել՝ չհաշված լրացուցիչ՝ սպասարկման և այլ ծախսերը, որոնք սովորաբար կազմում են ընդհանուր ծախսերի մոտ 30 տոկոսը: Չհաշված այդ ամենը՝ կիրառողների բանակի պատրաստումը, որը գրեթե անհնար է և ոչ միայն ֆինանսական պատճառներով: Մեկ միավոր ժամանակակից հրասայլերը արժեն 2-5 մլն դոլար: 50 միավոր նման հրասայլերը ոչինչ չեն տա իրավիճակին, իսկ 200-300 միավոր հրասայլերն արդեն կարժենան ավելի քան կես միլիարդ դոլար՝ առանց լրացուցիչ ծախսերի: Բնական է, որ այդ ամենը մեկ-երկու տարում հնարավոր չէ իրագործել, իսկ օրեցօր դատարկվող նավթի տակառներն այլևս ամեն ինչ չեն կարող լուծել: Այսինքն՝ հարձակման պատրաստվող բանակը, որն, ըստ Ադրբեջանի բարձրագույն ղեկավարության, ամեն վայրկյան պատրաստ է

լայնածավալ հարձակման՝ կամ ստեղծվել է որպես մեծ ու անպիտան մարմին, որն իրականում չի կարող իր խնդիրը լուծել, կամ պատրաստ կլինի միայն մի 5-10 տարի անց միայն՝ ծախսելով նաև մոտ 50 մլրդ դոլար: Իհարկե, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը ձեռնատու չէ այս խոստովանությունը: Նրանք կարող են հայտարարել, որ կամաց-կամաց գնում են դեպի դրան և կհասնեն այդ արդյունքին արդեն 5 կամ 7 տարի անց, սակայն այդ դեպքում մրցավազքում հայկական կողմին ճնշելու գաղափարը հօդս կցնդի:

Ադրբեջանի նորագույն զենքերի ձեռքբերման մտադրություն չունենալու լավագույն ապացույցը թուրքական 107 և 122 մմ-ոց հրթիռների արտադրության հիմնումն է, խոտանված իսրայելական հրետանային համակարգերի գնումը Ղազախստանից, սեփական դիպուկահարների արտադրությունը և այլն: Իսկ օդուժն այդ մակարդակի բերելու համար չի բավարարի արդեն 30-40 մլրդ դոլարը, ժամանակի մասին խոսելն անգամ ավելորդ է:

Ամեն դեպքում Ադրբեջանը տենդագին զինվում է, չի խոստովանում որ նախկին ձեռքբերումները խոտան են, դրանց մասին մոռանալով նորանոր պայմանագրեր է փորձում կնքել և դա վտանգավոր է: Հայկական բանակի նոր սպառազինությունների ձեռքբերումները և մասնավորապես 200 մլն դոլար վարկով նոր ու հարձակողական միջոցների ձեռքբերման մասին լուրերից հետո Ադրբեջանում կրկին ակտիվացան խոսակցությունները նոր խմբաքանակի զենքերի ձեռքբերման մասին: Սա տարածաշրջանում լուրջ մրցավազք է, որին հայկական կողմը պարտադրված է մաս-

նակցել: Ադրբեջանը սանձազերծած կարճատև պատերազմներով ցույց տվեց, որ պատրաստ չէ և չի ցանկանում գնալ լայնածավալ պատերազմի, դրա փոխարեն որդեգրել է հյուծիչ պատերազմի ռազմավարությունը, որի ժամանակ պարբերաբար, մշտապես պահելով լարվածության բարձր աստիճանը, հասցնելու է անակնկալ փոքր ու միջին հարվածներ:

Այսպիսով, ընդհանրացնելով ադրբեջանական ԶՈՒ-ի որակական ցուցանիշների վերաբերյալ դիտարկումները, կարող ենք նշել դրա ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմերը՝

- ✓ ադրբեջանական բանակը քանակապես բավական մեծ է
- ✓ տեխնիկապես հագեցած է և տարեցտարի ավելի է սպառազինվում
- ✓ սահմանային լարվածության, ռազմագործողությունների պայմաններում զորքերը մասամբ ձեռք են բերում որոշակի հմտություններ:

Թույլ կողմերը՝

- ✓ ադրբեջանական բանակի կարգապահությունը և կառավարումը լրջորեն կաղում է, մասնավորապես բարձր հրամկազմը փորձառու չէ, ցածր է ղեկավարման մարմինների պատրաստության մակարդակը

- ✓ ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործումը և կոռուպցիայի մակարդակը չափազանց բարձր է[10]
- ✓ զորամասերի ու միավորումների փոխգործակցության ոլորտում անպատրաստություն, զորատեսակների միջև գործողությունների ընդհանուր համակարգման-ներդաշնակեցման թերություններ
- ✓ բանակի ստորաբաժանումների հաստիքային կազմը և զինտեխնիկան չափազանց խայտաբղետ է և բազմատեսակ
- ✓ զորքի բարոյահոգեբանական, մարտական ոգին բարձր չէ՝ հատկապես շարքային կազմինը:

[10] Մասնավորապես այս կապակցության ուշագրավ էր միջազգային «Transparency International» կազմակերպության հաշվետու զեկույցը 2015թ. դեկտեմբերին՝ ադրբեջանական բանակում տիրող բարձր կոռուպցիոն ռիսկերի մասին:

ՎՐԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ. ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պաշտպանական համակարգը և զինված ուժերը

Զինված ուժերի զարգացումը և պաշտպանական-անվտանգային քաղաքականությունը Վրաստանի պետականաշինության կարևոր բաղադրիչներից է: 1990-ական թթ. Աբխազիայում և Հարավային Օսեթիայում էթնոքաղաքական ռազմական հակամարտությունները, ինչպես նաև 2008թ. «Հնգօրյա պատերազմը» առանձնահատուկ կարևորեցին Վրաստանի քաղաքական էլիտայի և հասարակության մոտ ռազմական անվտանգության, պաշտպանունակության հիմնախնդիրներն ու այդ ոլորտում նոր մոտեցումները: Սրա հետ մեկտեղ, Վրաստանի համար երկար ժամանակ արտաքին ու պաշտպանական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է ՆԱՏՕ-ին անդամակցումը, որն այդ երկրի քաղաքական էլիտայի կողմից դիտարկվում է որպես Վրաստանի անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները չեզոքացնելու կարևորագույն երաշխիքներից:

Ստորև ներկայացվում են Վրաստանի բանակաշինության ու պաշտպանության համակարգի սահմանադրահիրավական հիմքերը, ԶՈՒ-ի և անվտանգության մարմինների կառուցվածքը, ինչպես նաև բանակաշինության հիմնական միտումները 2008թ. «Հնգօրյա պատերազմից», ինչպես նաև ԶՈՒ-ի զարգացման առանձնահատկությունները 2012թ. իշխանափոխությունից հետո:

Երկրի սահմանադրության 69-րդ հոդվածի համաձայն՝ ԶՈՒ-ի գերագույն գլխավոր հրամանատարը հանդիսանում է

երկրի նախագահը: 73-րդ հոդվածով՝ նախագահն է հայտարարում արտակարգ դրություն, կնքում խաղաղություն և 48 ժամվա ընթացքում ներկայացնում խորհրդարանի հաստատմանը, շնորհում բարձրագույն զինվորական ու հատուկ կոչումներ: Ըստ 98-րդ հոդվածի՝ նախագահը հաստատում է ԶՈՒ-ի կառուցվածքը, իսկ խորհրդարանը՝ Ազգային անվտանգության խորհրդի ներկայացման հիման վրա՝ թվաքանակը:

Սահմանադրության 99-րդ և 100-րդ հոդվածների համաձայն՝ երկրի անվտանգության և պաշտպանության ոլորտում համակարգող մարմինը Ազգային անվտանգության խորհուրդն է: Նախագահն է ընդունում ԶՈՒ-ի կիրառման վերաբերյալ, այդ թվում նաև՝ երկրի սահմաններից դուրս, որոշում, իսկ խորհրդարանը հաստատում է այդ որոշումը:

Պաշտպանության նախարարությունը երկրի պաշտպանության և ռազմական անվտանգության ոլորտում պատասխանատու հիմնական հանրապետական գործադիր մարմինն է: Նախկին տարիներին իրականացված մասշտաբային բարեփոխումների արդյունքում էականորեն առանձնացվեցին ՊՆ-ի և ԳՇ-ի իրավասություններն ու գործառույթները:

2015թ. հուլիսին Վրաստանի խորհրդարանը որոշում ընդունեց «Պետական անվտանգության ծառայության» ստեղծման մասին, որի կազմի մեջ մտան Ներքին գործերի նախարարության ազգային անվտանգության ու հակահետախուզության համար պատասխանատու բոլոր կառույցները ու ստորաբաժանումները: Արտաքին հետախուզության

ոլորտում գործում է 2005թ. ստեղծված Վրաստանի հետախուզության ծառայությունը:

ՆԳՆ-ի կազմի մեջ է մտնում Վրաստանի սահմանապահ ծառայությունը, որի անձնակազմի ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 5400 մարդ: Այն իրականացնում է ցամաքային ու ծովային սահմանների պահպանությունը: 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո, երբ ռուսական բանակի կողմից ոչնչացվեց վրացական ՌԾՈՒ-ի ռազմական նավերի ու մոտորանավակների մեծ մասը, մնացած միջոցները ներառվեցին ՆԳՆ Առափնյա պահպանության ծառայության մեջ, իսկ ՌԾՈՒ-ը որպես առանձին զորատեսակ, լուծարվեց: ՆԳՆ Առափնյա պահպանության ծառայության կազմում կա մոտ 2 տասնյակ պարեկային նավ ու մոտորանավակ, ինչպես նաև թեթև դեսանտային և вспомогательные նավեր: ՆԳՆ-ի կազմի մեջ կան նաև այլ ռազմականացված ստորաբաժանումներ (նախկին ներքին զորքերի և ժանդարմերիայի բազայի հիման վրա), որոնց մեծ մասը 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո դրվեցին ԶՈՒ-ի ենթակայության տակ, մասնավորապես՝ ՑՈՒ-ի 4-րդ մեխանիզացված բրիգադի կազմում: ՆԳՆ-ի անձնակազմի, այդ թվում նաև՝ ոստիկանության, ընդհանուր թվաքանակը կազմում է մոտ 26 հզ.:

ԶՈՒ-ի թվաքանակը 2016թ. սկզբի դրությամբ կազմել է մոտ 20 650 մարդ, որից 17750-ը ՑՈՒ-ում և կենտրոնական ենթակայության զորամասերում, 1300-ը՝ ռազմական ավիացիայի և ՀՕՊ զորքերում, 1600-ը՝ Ազգային գվարդիայում: Պահեստազորի մոբիլիզացիոն հնարավորությունը գնահատվում է մոտ 300 հզ.:

2015թ. ռազմական բյուջեն կազմել է մոտ 300 մլն դոլար, ինչը մոտ 30 %-ով պակաս էր 2014թ. ցուցանիշից (394 մլն դոլար-685 մլն լարի): 2013թ. այն կազմել է մոտ 409 մլն դոլար (679 մլն լարի), ինչն էականորեն պակաս էր նախորդ տարիների ցուցանիշներից[11]:

ՑՈՒ-ը կազմված են երկու տարածաշրջանային հրամանատարություններից, որոնք ներառում են 4 հետևակային և 1 մեխանիզացված բրիգադ, 2 դաշտային հրետանային բրիգադ, թեթև հետևակային գումարտակ, ինժեներական բրիգադ, ինչպես նաև կենտրոնական ենթակայության մի շարք առանձին ստորաբաժանումներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ԳՀ ԵՎ ԶՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



[11] (http://www.sipri.org/research/armaments/milex/milex_database).

ՀՕՊ բրիգադն ու ավիացիոն բրիգադը մտնում են Ավիացիայի և ՀՕՊ հրամանատարության մեջ: Ազգային գվարդիայի հրամանատարությունը փաստացի ԶՈւ-ի հիմնական պահեստազորն է: Բացի այս կան նաև առանձին հրամանատարություններ, ինչպես օրինակ՝ հատուկ գործողությունների (հատուկ նշանակության բրիգադ), ռազմական կրթության և վարժանքների, ռազմական մատակարարման և լոգիստիկայի:

Օպերատիվ առումով ԶՈւ-ը բաժանվում են 2 հրամանատարությունների՝ Արևելյան և Արևմտյան: Արևելյան օպերատիվ հրամանատարությունն իր մեջ ներառում է 4-րդ մեխանիզացված, 1-ին և 5-րդ հետևակային բրիգադները, ինչպես նաև 1-ին դաշտային հրետանային բրիգադը: Արևմտյան օպերատիվ հրամանատարությունը ներառում է 2-րդ և 3-րդ հետևակային, 2-րդ դաշտային հրետանային բրիգադները և Բաթումիի թեթև հետևակային գումարտակը:

Ավիացիոն գործողությունների և ՀՕՊ հրամանատարությունը ներառում է ՀՕՊ բրիգադը (6 «Бук-1М», 8 «Оса-АК», 10 «Оса-АКМ» ԶՀՀ-ները), ավիացիոն խառը բրիգադն ու ավիացիոն խառը բազան (7 Су-25К «Мимино» արդիականացված գրոհիչ և 3 Су-25, 6 Ми-24 հարվածային ուղղաթիռ, 17 Ми-8Т, 12 UH-1H բազմաֆունկցիոնալ ուղղաթիռներ): Բացի այդ, հետախուզական և ռազմաբժշկական բրիգադները, ինչպես նաև ռազմական ոստիկանության գումարտակը որպես կենտրոնական ենթակայության ստորաբաժանումներ գտնվում են ՅՈւ-ի հրամանատարության ներքո: Հատուկ գործողությունների բրիգադը առանձնացված է և գտնվում է ուղիղ ԳՇ ենթակայության ներքո:

ԶՈւ-ի համալրումն իրականացվում է խառը սկզբունքով. ընդհանուր անձնակազմի մոտ 75 %-ը կազմում են պրոֆեսիոնալ հիմունքներով պայմանագրային ծառայողները, 25 %-ը՝ ժամկետային ծառայողները: Պարտադիր ժամկետային ծառայության ժամկետը 18 ամիս է:

ԶՈւ-ի հիմնական պահեստազորը հանդիսանում է Ազգային գվարդիան, որի հրամանատարությունն իրականացնում է ԳՇ-ի համանուն դեպարտամենտի հրամանատարի կողմից: Ազգային գվարդիայի կազմում գտնվում է 2 պահեստային բրիգադ (Մենակիում տեղակայված 10-րդ և Թելավիում տեղակայված 20-րդ պահեստազորային բրիգադները), պահեստազորի տարածքային ստորաբաժանումներն, մատակարարման ու կառավարման ստորաբաժանումները: ԶՈւ-ի մշտական պահեստազորը նախատեսված է պատերազմական իրավիճակում հետևակային բրիգադների և այլ ստորաբաժանումների համալրման համար, իսկ կամավորական պահեստազորը՝ տարածքային և տեղային պաշտպանությունը կազմակերպելու, պարտիզանական գործողություններ իրականացնելու համար:

Վրաստանի իշխանությունները նախատեսել էին 2013թ. կամավորական պահեստազորի շրջանակում պատրաստություն անցածների թիվը հասցնել մոտ 150 հզ-ի, սակայն, որոշ տեղեկություններով այդ թիվը մի քանի անգամ պակաս է եղել նախատեսվածից:

Խաղաղ ժամանակ Ազգային գվարդիայի թվաքանակը կազմում է մոտ 1600, իսկ պատերազմական իրավիճակում այն էականորեն մեծանում է, և հիմք է հանդիսանում ինչպես կորուստների փոխարեն նոր ուժերի ումարտական ստորա-

բաժանումների հավելյալ համալրման, այնպես էլ՝ տարածքային պաշտպանության կազմակերպման համար: Պահեստազորում ծառայությունը պարտադիր է արական սեռի բոլոր քաղաքացիների համար, ովքեր իրենց առողջական վիճակով համապատասխանում են ծառայությանը: Պահեստազորը համալրվում է 27-40 տարեկան քաղաքացիներից:

Ռազմաուսումնական համակարգը

Նախնական զինվորական կրթությունն իրականացվում է գեներալ Գեորգի Կվինիտաձեի անվան Ռազմական կադետային վարժարանում: Ուսման տևողությունը երեք տարի է (համապատասխանում է միջնակարգ դպրոցի 10-12-րդ դասարանների ուսումնառությանը): Տարեկան ուսումնառուների թիվը կազմում է 100-120 ուսանող:

Հիմնական ռազմական կրթությունն ու սպայական կադրերի պատրաստումն իրականացվում է Դավիթ Ազմաշենեբելիի անվան պաշտպանության ազգային ակադեմիայում: Համարվում է, որ այդ ակադեմիայի արմատները ձգվում են մինչև 20-րդ դարի սկզբներ, սակայն այն հիմնականում վերակազմակերպվել է Թբիլիսիի բարձրագույն հրետանային հրամանատարական ուսումնարանի հիմքիվրա: 2009թ. Ակադեմիան տեղափոխվել է Գորիս քաղաք: Այն իրականացնում է պաշտպանության և անվտանգության ոլորտում ռազմական և քաղաքացիական բազմաստիճան կրթություն: Ակադեմիան իր մեջ ներառում է բակալավրիատի դպրոցը, կրտսեր սպայական կազմի դպրոցը (համազորային մասնագիտացումների, այդ թվում նաև՝ ավիացիայի և ՀՕՊ ոլորտում), հրամանատարական կարիերայի դպրոցը (Captain Career School), ԳՇ-ի սպաների և հրամկազմի դպրոցը, ռազմական ոլորտի ուսումնասիրությունների և լեզուների ուսուցման դպրոցները:

Սպայական կադրերի ուսուցումն ու վերապատրաստումն իրականացվում է ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Թուրքիայի և ՆԱՏՕ-ի մի շարք անդամ երկրների ռազմաուսումնական հաստատություններում, որոնք անցկացնում են նաև անվտանգության մարմինների ծառայողների և աշխատակիցների որակավորման ու վերապատրաստման դասընթացներ:

Վրաստանի տարածքում գործում են մի շարք ուսումնավարժական կենտրոններ, որոնցում վրացական բանակի զինծառայողները և գործընկեր երկրների (հիմնականում ՆԱՏՕ-ի անդամ) հրահանգիչները ուսումնավարժական պարապմունքներ են անցկացնում, դաշտային վարժանքներ իրականացնում: Դրանցից են Վազիանիի ռազմական զորավարժարանն ու ուսումնական կենտրոնը (Թբիլիսիից հարավ-արևելք), Օրպոլոյի տանկային ուսումնական կենտրոնը (Ախալցխայի շրջան), Կոջորիի, Սիմոնետիի, Գոնիոյի և Սախերիի ուսումնավարժական կենտրոնները: 2015թ. օգոստոսին Կրցանիսի ռազմաբազայում հիմնվեց ՆԱՏՕ-ի լոգիստիկ կենտրոն, որը փաստացիորեն հանդիսանում է համատեղ ուսումնավարժական կայան: Այն իր մեջ ներառում է 4-րդ մեխանիզացված բրիգադի հիմնական տեղակայման կայանները (Վազիանի), Վազիանիի համաբանակային զորավարժարանը և Կրցանիսի ազգային ուսումնական կենտրոնը: Այդ կենտրոնում նախատեսված է ՆԱՏՕ-ի չափորոշիչներին

համապատասխան վրացական ԶՈՒ-ի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ և գործընկեր երկրների ստորաբաժանումների պատրաստումն ու ուսուցումը:

Հետպատերազմական վերականգնում (2009-2012թթ.)

2008թ. «Հնգօրյա պատերազմի» արդյունքներն աղետալի էին վրացական ԶՈՒ-ի համար: Ինչպես Վրաստանի հասարակության, այնպես էլ կառավարող էլիտայի մոտ բավական ակնհայտ կերպով ի հայտ եկավ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հակամարտությունները ռազմական ճանապարհով լուծելու հնարավորությունների հարցում հիասթափություն: Բանակի հեղինակությունն ընկավ հասարակության շրջանում: 2009թ. սկսած էականորեն նվազեց ռազմական բյուջեն: Եթե 2008թ. (հաշվի առնելով պատերազմի ընթացքում ռազմական անուղղակի ծախսերը) ռազմական բյուջեն կազմում էր մոտ 1.625 մլրդ լարի (ավելի քան 1 մլրդ դոլար.), ապա 2009թ. Այն նվազեց մինչև 1.090 մլրդ լարի (մոտ 665 մլնդոլար): ԶՈՒ-ի կազմակերպչա-կառուցվածքային օպտիմալիզացման ծրագրի շրջանակում 2009-2010թթ. ընթացքում կազմավորվեցին մի շարք նոր (2-րդ հրետանային բրիգադը, հակատանկային գումարտակը) և կազմցրվեցին հին զորամասերն ու ստորաբաժանումները (ինչպես օրինակ՝ Գորիի տանկային գումարտակը): ՌՕՈՒ-ը պատերազմի ժամանակ կրած զգալի կորուստների պատճառով լուծարվեցին և 2009թ. միացվեցին Սահմանապահ ոստիկանության առափնյա պաշտպանության ծառայությանը: ՌՕՈՒ-ը ևս անցան ՑՈՒ-ին՝որպես բանակային ավիացիա:

Հաշվի առնելով «Հնգօրյա պատերազմի» փորձն ու արդյունքները՝ վրացական ԶՈՒ-ի կառուցվածքային վերակազմավորումների հարցում մեծ ուշադրություն սկսեց հատկացվել հակաօդային և հակատանկային պաշտպանության ուժերի ու միավորումների ստեղծմանն ու համալրմանը, ինչպես նաև պահեստազորայինների պատրաստության մեխանիզմների ու համակարգի վերակազմավորմանը, քանի որ պատերազմի ընթացքում այդ ոլորտում լուրջ թերություններ էին ի հայտ եկել: Թեև ոչ նախկին ծավալներով, այդ ու հանդերձ, պատերազմից հետո շարունակվեցին հրետանային ու զրահատանկային ստորաբաժանումների ներուժի վերականգնման համար անհրաժեշտ սպառազինության ու տեխնիկայի ձեռքբերումները, ինչպես նաև ՑՈՒ-ի համալրումը ժամանակակից հակատանկային ու հակաօդային համալիրներով:

Փոփոխություններ տեղի ունեցան նաև բանակի օպերատիվ-ռազմավարական պլանավորման ու մարտական պատրաստության համակարգում: Մինչև 2008թ. օգոստոսյան պատերազմը բանակի մարտական գործողությունների պլանավորումն իրականացվում էր գլխավոր առաջադրանքի հիման վրա՝ ռազմական ճանապարհով Վրաստանի կազմի մեջ դե-ֆակտո անկախ համարվող Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ներառումը: Ենթադրվում էր, որ վրացական բանակը կարճ ժամանակահատվածում ջախջախելու է հակառակորդին, քանի որ Ռուսաստանի հետ ուղղակի ռազմական բախումը քիչ հավանական էր համարվում: Այս մոտեցումն ամրագրված էր երկրի հիմնական պաշտոնական փաստաթղթերում (Ազգային անվտանգության ռազմավարու-

թյուն, Պաշտպանական ռազմավարություն, Ազգային սպառնալիքների գնահատում (National Threat Assessment)), որով առաջնորդվում էր երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը: Արդյունքում վրացական բանակը պարտություն կրեց այնպիսի պատերազմում, որին ընդհանրապես պատրաստ չէր:

Արդեն 2009թ. սկզբներից վրացական բանակի բարեփոխումների շրջանակում սկսեցին յուրացնել լոկալ ռազմագործողություններում նոր պայմաններն ու ժամանակակից միջոցների կիրառման փորձը, ինչպես օրինակ՝ ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներն ու ԱԹՍ-ները: Գլխավոր հակառակորդն արդեն դիտարկվում էր ոչ այնքան Աբխազիայի և Հվ. Օսեթիայի ռազմական ուժերը, որքան այդ երկրներում ռուսական ռազմաբազաներն ու ՌԴ Հյուսիս-Կովկասյան ռազմական շրջանը: 2011թ. Վրաստանի խորհրդարանը հաստատեց երկրի Ազգային անվտանգության նոր հայեցակարգը, որում ազգային անվտանգության հիմնական մարտահրավերն ու սպառնալիքը դիտարկվում էր Ռուսաստանը:

Հետպատերազմական շրջանում վրացական ԶՈՒ-ում կար մոտ 170 միավոր տանկ (հիմնականում ռուսական T-72 տանկեր, որոնց մեծ մասն արդիականացվել էր իսրայելական կողմի աջակցությամբ-T-72SIM1): Տանկային համակազմում կան նաև արդեն հնացածT-55 հրասայլեր: Բանակում առկա են մոտ 210 միավոր դաշտային հրետանային միջոցներ, ականանետերն 100 մմ տրամաչափից ավել ՀԿՌՀ-ներ, 310 զրահամեքենաներ (БМП-1/2, БТР-70/80, թուրքական Ejder և Cobra ԶՄ-ներ): ՑՈՒ-ի ավիացիոն ուժերի կազմում գտնվումէին 14 Cy-25 զրոհային ինքնաթիռներ (այդ թվում՝

իսրայելական մասնագետների կողմից արդիականացված 5 միավոր Cy-25K «Мимино»), 8 ռազմա-ուսումնական L-39 «Альбатрос» և մոտ 40 ուղղաթիռ (Ми-24, Ми-8, Ми-14, UH-1H). Ընդհանուր ԶՈՒ-ը այդ պահին կազմում էին մոտ 37 հզ., որից 23,5 հզ-ը կազմում էին ՑՈՒ-ը:

2010թ. վերջերից քայլեր էին ձեռնարկվում մարտունակ պահեստազորային համակարգի ձևավորման ուղղությամբ: Նախատեսվում էր, որ նոր ձևավորվող համակարգը բաղկացած էր լինելու երկու բաղադրիչներից. ՑՈՒ-ի պահեստազոր, որը համալրվելու էր նախկին զինծառայողներից և որոնք պահեստազորում անցնելու էին պարտադիր զինծառայության և մյուսը՝ տարածքային պաշտպանության պահեստազոր, որը համալրվելու էր տարածքային սկզբունքով, առավելապես կամավորականների կողմից:

Վերոնշյալ ժամանակահատվածում վրացական իշխանությունները փորձում էին ի ցույց դնել նաև տեղական ռազմաարդյունաբերական համալիրի ձեռքբերումները: Սեփական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման վրա փաստացի արգելանք կիրառեցին ԵՄ-ը, Իսրայելը, ԱՄՆ-ը և նույնիսկ Թուրքիան, որի նպատակը Ռուսաստանի հետ հարաբերությունները լրջորեն չվնասելն էր:

Ուկրաինայում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո էականորեն նվազեց նաև այդ երկրի կողմից Վրաստանին սպառազինության մատակարարումը, ինչը բավական մեծ ծավալների էր հասել մինչև 2008թ. պատերազմը: Մինչև պատերազմը կնքված ռազմատեխնիկական պայմանագրերով նախատեսված մատակարարումների ավարտից հետո

Ուկրաինայից, Չեխիայից և Թուրքիայից լուրջ սպառազինության մատակարարումներ չեն իրականացվել[12]:

Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանից ժառանգել էր բավական զարգացած ռազմաարդյունաբերական ձեռնարկություններ, սակայն անկախության շրջանում շատ ձեռնարկություններ կորցրեցին արտադրական ու գիտական ներուժը: Այս ոլորտում որոշակի ակտիվություն նկատվեց հատկապես Մ. Սահակաշվիլիի նախագահության երկրորդ շրջանում և 2008թ. պատերազմից հետո: 2010թ. ՊՆ-ի հովանու ներքո ձևավորվեց «Դելտա» անունը կրող գիտաարտադրական միավորումը, որի կազմի մեջ մտան «Թբիլավիաշենի» (TAM) գործարանը (խորհրդային ժամանակաշրջանում Cy-25 ինքնաթիռների արտադրամն կարևորագույն կենտրոն), 142-րդ տանկաշինական, Քութայիսիի մեքենաշինական գործարանները, ինչպես նաև ռազմական ոլորտի մի քանի գիտահետազոտական ինստիտուտներ: Արդեն 2011թ. երևան հանվեցին վրացական ռազմաարդյունաբերության առաջին արտադրատեսակները: Մասնավորապես՝ նույն թվականի մայիսի 26-ին Թբիլիսիում անցկացված զորահանդեսի ժամանակ ցուցադրվեցին սեփական արտադրության «Դիդգորի» անունն ստացած 30 միավոր անիվավոր մարտական զրահապատ մեքենաները, որոնց կաղապարը, փորձագետների համաստմամբ, շատ նման է թուրքական «Cobra» դասի ԶՄ-ներին: 2016թ. տեղեկատվություն հայտնվեց, որ առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում 80 միավոր վրացական

[12] Մասնավորապես՝ 2009-2012թթ. մատակարարվել է 12 միավոր 122-մմ Դ-30 հաուբից, 12 միավոր 152-մմ Դ-20 հաուբից Բուլղարիայից, 12122-մմ RM-70 ՀԿՌՀ Չեխիայից և 70 միավոր Ejder ԶՓ Թուրքիայից: Տես *SIPRI Arms Transfers Database*, http://armstrade.sipri.org/armstrade/page/trade_register.php:

«Դիդգորի» ԶՄ-ների բժշկական տարբերակ ներեն մատակարարվելու Սաուդյան Արաբիայի ԶՈւ-ին: 2012թ. Ներկայացվեց վրաց մասնագետների կողմից նախագծված և ռուսական БМП-1/-2 մեքենայի հիմքի վրաարտադրված «Լազիկա» անունը կրող հետևակի մարտական մեքենան:

Վրացական արտադրության 122 մմ տրամաչափով նոր ՀԿՌՀ-ն, որն ստացել է GG-122 կոդային անվանումը, պարզվեց, որ խորհրդային БМ-21 «Град» համալիրի տարատեսակներից է, որն ուղղակի կիրառում է թուրքական Roketsan ընկերության արդիականացված հրթիռներ: Նմանապես վրացական արտադրության մարտավարական ԱԹՍ-ները հանդիսանում են էստոնական EliMilitary Simulations ընկերության նախագծած միջոցներից, որոնք իրականացված փորձարկումներից հետո այդպես էլ չհամալրեցին էստոնական ԶՈւ-ի սպառազինության շարքերը:

Այդուհանդերձ, Վրաստանի ռազմաարդյունաբերական համալիրը հետագա զարգացման բավական հաջող նախադրյալներ ունի և հետագա տարիներին կիրականացվեն տարբեր տեսակի սպառազինության ու տեխնիկայի ինչպես սեփական և համատեղ նախագծման, այնպես էլ բանակում արդեն առկա սպառազինության արդիականացման աշխատանքներ:

Բանակաշինությունը իշխանափոխությունից հետո (2012-2014թթ.)

Վրաստանում 2012թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո նոր իշխանությունները քայլեր սկսեցին ձեռնարկել պաշտպանական և անվտանգային համակարգում հետագա բարեփոխումների ուղղությամբ: Պաշտպանության նորանշանակ նախարար Իրակլի Ալասանիան վերանայեց ԶՈւ-ի զարգացման ու բարեփոխումների առկա հայեցակարգային մոտեցումները և նորերն առաջադրեց: Մասնավորապես՝ հաստատվեց 2013-2016թթ. Պաշտպանության ռազմավարական վերանայման փաստաթուղթը (Strategic Defence Review, 2013-2016): Այն ՊՆ-ի կարևորագույն փաստաթուղթն է, որը նախանշում է ՊՆ-ի և ԶՈւ-ի զարգացման ու բարեփոխումների հիմնական ուղղությունները՝ նպատակ ունենալով մեծացնել բանակի ներուժը և ՆԱՏՕ-ի կառույցների ու ուժերի հետ օպերատիվ համատեղելիության ամրապնդումը: Պաշտպանության ռազմավարական վերանայման փաստաթուղթը պատրաստվել էր պետության կարևոր ռազմավարական փաստաթղթերին՝ Ազգային անվտանգության հայեցակարգի և Պաշտպանական ռազմավարության դրույթներին և ոգուն համապատասխան՝ հիմնվելով 2010-2013թթ. Ազգային սպառնալիքների գնահատման փաստաթղթի վրա:

Փաստաթուղթը նախատեսում էր ԳՇ-ի կառուցվածքի և դրա ստորաբաժանումների պարտականությունների վերանայում (2012թ. վերջին ԶՈւ միացյալ գլխավոր շտաբը վերանվանվեց ԶՈւ ԳՇ-ի), ինչպես նաև դրա կազմում Ծովային պաշտպանության նոր դեպարտամենտի ստեղծում:

Բացի այդ, նաև կարևոր կառուցվածքային ու կազմակերպչական փոփոխություններ էին նախատեսվում հենց ԶՈւ-ում: Մասնավորապես՝ նախանշվում էր ԶՈւ-ի ցամաքային զորքերի հրամանատարության լուծարումը և դրա փոխարեն ԳՇ-ի ենթակայության տակ տարածքային սկզբունքով 2 հրամանատարությունների (Արևելյան և Արևմտյան) ստեղծումը, որոնք իրենց պաշտպանական իրավասության ներքո գտնվող տարածքներում իրականացնելու էին ուժերի օպերատիվ պլանավորումն ու կառավարումը, մոբիլիզացիոն ռեսուրսների և մատակարարման ապահովումը: Նոր մոտեցումներ էին առաջադրվում նաև պահեստազորի համակարգի ստեղծման հարցում: Այնուամենայնիվ, Ի. Ալասանիայի մոտեցումները փաստացիորեն չէին տարբերվում պաշտպանության նախկին նախարարների առաջադրած ուղեգծից: ԶՈւ-ի հետագա բարեփոխումների փաստացի նպատակը ոչ այնքան լայնամասշտաբ արտաքին ագրեսիայի դիմագրավման համար պաշտպանության ապահովումը կամ Աբխազիայում և Հվ. Օսեթիայում ռազմական ճանապարհով վերահսկողության հաստատումն էր, այլ որպես առաջնահերթություն ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելություններին ռազմական մասնակցությունն ու օժանդակության մեծացումն էր, ինչը հնարավորություն կտար ՆԱՏՕ-ի ռազմական ուժերի հետ համատեղելիությունն ավելի մեծացնել և նպաստել դաշինքին անդամագրվելու ուղղությամբ կարևորագույն որոշումների ընդունմանը: Այս համատեքստում էր Աֆղանստանում ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերի կազմում վրացական ստորաբաժանման մասնակցությունը, որն իր թվաքանակով հետխորհրդային և դաշինքի ոչ անդամ

երկրներից ամենամեծն էր: Աֆղանստանում վրացի խաղաղապահների թիվը հասել է նույնիսկ 1600-ի՝ 2 ամրացված հետևակային գումարտակ և առանձին հրետանային, ինժեներական, հետախուզական ու կապի ստորաբաժանումներ և այլն: Եթե Սակաշվիլիի նախագահության շրջանում խաղաղապահ առաքելությունները համարվում էին վրացական բանակաշինության կարևոր ուղղություններից (այդ թվում նաև ՋՈՒ-ի այնպիսի հնարավորությունների ստեղծումը, ինչը հնարավորություն կտա վերականգնել Թբիլիսիի իրավասությունը Աբխազիայի և Հվ. Օսեթիայի վրա և նույնիսկ դիմակայել Ռուսաստանի ներգրավմանը), ապա իշխանափոխությունից հետո այն գրեթե հիմնական առաջնահերթություն դարձավ:

Այս տրամաբանության շրջանակում Վրաստանն իրականացնում է բանակում խորհրդային-ռուսական սպառազինությունից աստիճանաբար ՆԱՏՕ-ական ստանդարտների անցնելու քաղաքականություն՝ շեշտը դնելով ավելի շատ ժամանակակից մոբիլ միջոցների վրա: 2013թ. վերջին Վրաստանի ՊՆ-ն հայտարարեց ՋՈՒ-ից խորհրդային-ռուսական արտադրության բոլոր ուղղաթիռներից (հարվածային Ми-24, Ми-25 և բազմանպատակ Ми-8 ուղղաթիռներ) հրաժարվելու և դրանք արևմտյան մոդելների ավիացիոն տեխնիկայով փոխարինելու մասին: Նախանշվել էր նաև բանակում առկա խորհրդային T-55 և T-72 տանկերից աստիճանաբար հրաժարվելու և դրանք արևմտյան ժամանակակից հակատանկային համակարգերով համալրելու մասին: Բացի այդ, 2013թ. ռազմաքաղաքական ղեկավարությունը հրաժարվեց նաև ՋՈՒ-ի տոտալ պահեստազորի ստեղծման և ներդրման

պլանից, որն առաջադրվել էր նախկին նախագահ Մ. Սակաշվիլիի կողմից: Բանակաշինության հեռանկարի և խաղաղարար ու խաղաղապահ առաքելություններին մասնակցության նպատակով թեթև, մոբիլ ուժերի ստեղծման առումով լրացուցիչ կարևորություն էր ներկայացնում ԵՄ Արագ արձագանքման ուժերի կազմում վրացական ստորաբաժանումների մասնակցության վերաբերյալ ԵՄ-ի կողմից 2013թ. արված առաջարկը: Արդեն 2014թ. կեսերին ՋՈՒ ստորաբաժանումներից մեկը՝ Բաթումիի առանձին հետևակային գումարտակի մեկ վաշտ ԵՄ ուժերի կազմում սկսեց խաղաղապահ առաքելությունը Կենտրոնաֆրիկյան հանրապետությունում:

2014թ. նոյեմբերին ներքաղաքական գործընթացների պատճառով Վրաստանի պաշտպանության նախարար Ի. Ալասանիան հրաժարական տվեց և այդ պաշտոնում նրան փոխարինեց Անվտանգության խորհրդի քարտուղար Մ. Ջանելիձեն:

Բանակաշինության նոր միտումները (2014-2016թթ.)

Մ. Ջանելիձեն երկար չմնաց պաշտպանության նախարարի պաշտոնում և նոր կառավարության ձևավորման պատճառով 2015թ. Մայիսին նոր նախարար նշանակվեց խիստ արևմտամետ հայացքներով հայտնի քաղաքական գործիչ և Վրաստանի Հանրապետական կուսակցության անդամ Թինաթին Խիդաշելին:

Նախարարի փոփոխությունը որևէ էական ազդեցություն չունեցավ բանակաշինության առաջնահերթություններ-

րի ու միտումների վրա, չնայած ՆԱՏՕ-ի և արևմտյան երկրների հետ կապերի ակտիվացման հարցում նա փորձում էր ունենալ իր դերակատարությունը: Դրան նպաստում էր նաև ուկրաինական ճգնաժամը, ինչն ստիպում էր վրացական ռազմական գերատեսչությանն էլ ավելի սերտացնել պաշտպանական ոլորտի կապերը ՆԱՏՕ-ի և արևմտյան կարևոր պետությունների հետ:

Այդ ժամանակահատվածում երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը, հաշվի առնելով 2008թ. «Հնգօրյա» պատերազմի և ուկրաինական ճգնաժամի փորձն ու դասերը, հանգեց ԶՈՒ-ում ծանր զրահատանկային և մոտոհետևակային ստորաբաժանումների, ինչպես մարտական ավիացիայի միավորումների մասնաբաժնի կրճատման հրաժեշտությանը: Դրա փոխարեն մեծացվեց թեթև հետևակի, հատուկ նշանակության ուժերի, ինչպես նաև ուղղաթիռային ստորաբաժանումների (դեսանտա-գրոհային գործողությունների համար) թվաքանակը: ԶՈՒ-ի հիբրիդային և անկանոն ռազմական գործողություններին իրականացման կարողությունների մեծացման շրջանակում լրջագույն բարեփոխումներ են նախատեսված նաև երկրի տարածքային պաշտպանության համակարգում: Այն ենթադրում է Վրաստանի ամբողջ տարածքի բաժանումը առանձին Պաշտպանական գոտիների, որոնցից յուրաքանչյուրում մարտական գործողությունների դեպքում պլանավորվում է կանոնավոր բանակի մեկական Հետևակային մարտական խմբի (*Infantry Battle Groups – IBG*) և պահեստազորի համակարգից Տարածքային բանակի 3-4 գնդերի տեղակայում: Չնայած պարզ չէ, թե ներկայում մոդայիկ դարձած հիբրիդային պատերազմների հայեցակարգը

կբարձրացնի վրացական բանակի պաշտպանունակությունը, եթե հանկարծ Ռուսաստանի հետ հակամարտությունը կրկին ընթանա սովորական ռազմական գործողությունների տրամաբանությամբ:

Ուկրաինական ճգնաժամի ռազմաքաղաքական առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ Ուկրաինան դուրս մնաց հետխորհրդային տարածքում սպառազինության շուկայից: Ողջ հետխորհրդային ժամանակաշրջանում Ուկրաինան հանդիսանում էր Հարավային Կովկասի երկրներին (հատկապես Ադրբեջանին և Վրաստանին) սպառազինության կարևոր մատակարարներից: Կիևը Թբիլիսիին մատակարարել է 10-յակ տանկեր, զրահամեքենաներ ու փոխադրիչներ, հրետանային համակարգեր, ՀՕՊ միջոցներ (այդ թվում՝ «Հնգօրյա» պատերազմում ակտիվ կիրառում ստացած «Бук» ԶՀՀ-ներ), ուսումնամարտական L-39 ինքնաթիռներ, մեծ քանակության հրաձգային զենք ու զինամթերք: Փաստացիորեն, Ուկրաինան ողջ հետխորհրդային ժամանակահատվածում ուղղակի վատնել է սպառազինության մի հսկայական պաշար, որի կարիքը հիմա բավական շատ է զգում սեփական ԶՈՒ-ը:

Ինչևէ, ուկրաինական ճգնաժամի համատեքստում Ռուսաստանի և Արևմուտքի միջև դիմակայության խորացումը չի բացառում կրկին վրացական ԶՈՒ-ի ռազմավարական պլանավորման անհրաժեշտաբար վերանայումն ու վերադարձը երկրի պաշտպանության «դասական» պայմաններին: Հետխորհրդային տարածաշրջանում Ռուսաստանի և Արևմուտքի միջև լարվածության խորացումը և նոր սառը պատերազմը խիստ հավանական են դարձնում վրացական

ԶՈՒ-ի առջև դրված խնդիրների և նպատակների վերափոխումները: Ակնհայտ է, որ Վրաստանի քաղաքական էլիտայի շրջանում գնալով խորանում է երկրի անվտանգությանն անմիջական ռազմական սպառնալիքի մտավախությունը: Եվ դա վաղ թե ուշ անդրադառնալու է ԶՈՒ-ի կառուցվածքի, խնդիրների ու դրված նպատակների վրա: Այս առումով հատկանշական է ժամանակակից ՀՕՊ համալիրների, ինչպես նաև մեծ հեռահարության ռադիոտեղորոշիչ կայանի գնման վերաբերյալ 2015թ. Ամռանը Ֆրանսիայի հետ կնքված պայմանագիրը:

Ընդհանուր առմամբ, վրացական ԶՈՒ-ը իրենց կազմի համար ունեն լավ հանդերձավորում, զարգացած ենթակառուցվածքներ, համալրման, վարժանքների և նախապատրաստության համակարգ: ԶՈՒ-ի մարտունակությունը բավական բարձր է, հատկապես ոչ ինտենսիվ մարտական գործողությունների առումով այն մոտենում է ՆԱՏՕ-ի չափանիշներին, որի ուղղությամբ հետևողական քայլեր են իրականացվում վերջին մի քանի տարիներին: Վրացական ԶՈՒ-ի բարեփոխումներն այս ուղղությամբ համառորեն առաջ են մղվում: Միևնույն ժամանակ, սակայն, վրացական բանակը լայնածավալ պատերազմի ժամանակ չի կարող դիմակայել իր հարևան ոչ մի պետության բանակի:

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

Համակարգչային շարվածքը և կազմի ձևավորումը՝
Մանյա Լալայանի

Հրատ. պատվեր N 708
Հանձնված է արտադրություն 18.07.2016 թ:
Չափսը՝ 60x84¹/₁₆: 12.75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան 24: